# ՑԱՒԵԼՈՒԱԾ

# ՋՈՒԱՐՃԱԼԻ ՋԲՕՍԱՐԱՆԻ

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԷՓԻՄԵՐՏԷՆԵՐԻՑ

ԳԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԵՒ ՅՈՎԱՍԱՓԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*Կազմեց եւ հրատարակեց*

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԵԱՆ

Ալէքսանդրապօլ.
Տպարան Յ. Ղասապեանցի
1910

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՅԱՒԵԼՈՒԱԾԱՄԱՍԻ


1. Յաղագս արեգական և լուսնոյ խաւարմանն։
2. Դոյզն ինչ գնկուցմունք սակս տասուր աստեղաց։
3. Զմշտնջենաւոր գուշակումն տարեկան փոփոխմանց ի թուին քրիստոսի 1909—2057
4. Մշտնջենաւոր գուշակումն սակս հողմոց և եղանակաց տարւոյ յամսէ յամիս։
5. Ցուցմունք 'ի վերայ երկոտասան կենդանակերպից, որոց և ասի Տանուտէր։
6. Ի վերայ եօթն մոլորակաց, հանդերձ կազանդացուցիւն և ծնեցեալ աւուրք մանկան։
7. Բնական գուշակմունք առ ի գիտել բնականաբար զնշանըս անձրևաց, հողմոց, ջերմութեան և ալեկոծութեան, նշան պարզ և լաւ եղանակի։
8. Նշանք լուսնի, որովք կարէ ճանաչել պարզ և խառնակ եղանակն։
9. Չորս ժամանակս և զչորս մասունս լուսնոյ։
10. Նշանք արեգական, ոլով կարելի լինի ճանաչել զեղանակն։
11. Նշանք ծիածանի, որովք գուշակի եղանակն։
12. Համառօտ բնազննութիւն մարդկային մասանց։
13. Մարմնախաղաց փորձիւ արարեալ Ինգնատիոսի։
14. Վիճակախաղ բաղդացոյց 'ի վերայ այբուբէնի։
15. Վիճակախաղ 'ի վերայ աստեղաց։
16. Տաղ 'ի վերայ Ցովասափու թագաւորի որդւոյ թագաւորին հնդկաց Աբեններայ։



ԱԶԳԱՅԻՆ
Հայաստանի գրադարանի
ՀԱՄԱՐ
11-205229ւ

## ՅԱՒԵԼՈՒԱԾԻ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկար տարիներ զբաղուել եմ հայերէն գրքերի հրատարակչութեամբ և հրատարակած ունիմ զանազան վիպական մանկավարժական և այլ գրքեր Կ. Պօլսում. նոյնպէս Կովկասում, մի և նոյն միջոցում հայ գրագիտութեան տարածման համար զբաղուել եմ նաև շարժական գրավաճառութեամբ, որպէս մի չնչին ծառայութիւն հայ ժողովրդեան յառաջադիմութեան գործում։ Այցելելով Կովկասի զանազան հայաբնակ քաղաքները, մօտիկ կերպով ծանօթացել եմ հայ ռամիկ դասակարգի հետ։ Բազում անգամ այդ դասակարգը դիմել է ինձ, խնդրելով զուարճալի գրուածքներ պարապ ժամանակներն ուրախ անցկացնելու համար. իսկ որպէս զգալի պահանջ մատնանշել է Էֆեմերտի և Յովասափի գրքերը։ Շատ անգամ աշխատել եմ համոզել, որ այդ գրքերը չունեն առանձին նշանակութիւն և փոխանակ դրանց նպատակաւոր է ունենալ Հայոց ազգի և այլ ընտիր պատմական գրքեր. բայց այնուամենայնիւ նրանց պահանջը միշտ եղել է և կայ. ուստի և ստիպուեցայ կատարել նրանց ցանկութիւնը, հրատարակելով պ. Աղէքսանդր Մխիթարեանցի հաւաքածուն, որ գրքիս զուարճալի մասն է կազմում, կցելով նրանց որպէս յաւելուած նաև Էֆեմերտէից և Յովասափից հարկաւոր կտորներ. ձեռքիս տակ ունենալով միքանի այդպիսի գրքեր տպագրուած, Վենետիկ, Կ. Պօլիս և այլ տեղեր առանց մի որ և է փոփոխութեան, քաղեցի նրանցից։ Յուսով եմ հայ հասարակ դասի այդ կարիքն իմ այս հրատարակութեամբ մասամբ իւիք լրացրած կը լինեմ։

Հրատարակիչ

## ՑԱՂԱԳՍ ԱՐԵԳԱԿԱՆ, ԵՒ ԼՈՒՍՆՈՑ ԽԱՒԱՐՄԱՆՆ։

Ով որ ցանկայ կերպիւ իւիք վերահասու լինել Արեգական, և Լուսնոյ խաւարմանն. թէ զինչ իցէ։ Գիտասցէ նախ՝ զի արեգակն է մեծագոյն քան զերկիրն՝ 166. անգամ, փոքր ինչ աւելի։ Լուսինն է փոքրագոյն քան զերկիր՝ 39. անգամ. դոգն ինչ աւելի։
Երկրորդ՝ Արեգակն լուսաւոր, և լուսատու մարմին 'ի մէջ վեց մոլորակացն՝ բաշխէ զլոյս Աստեղաց, մանաւանդ Լուսնոյն. որ է լուսադօտ, լուսագուրկ, և լուսառու յարեգակնէն։
Երրորդ գիտասցէք՝ զի ամենայն լուսատու մարմին՝ երբ լուսաւորէ զայլ քան զինքն փոքրագոյն մարմին, որ իցէ անլուսանցոյց և խաւարամած. որքան մերձ գոյ խաւարհոծ մարմնոյն, այնքան մեծ բաժինն խաւարչուտ մարմնոյն լուսաւորի. բայց յետկոյս անլուսանցոյց մարմնոյն նուրբ պիրամիդեայ ստուեր պատճառի։
Իսկ որքան 'ի միմեանց հեռանան մարմինքն երկոքեան՝ լուսատուն, և լուսառուն. այնքան փոքր մասն խաւարչուտ մարմնոյն լուսաւորի. այլ թանձր ստուերածութիւն պատճառի։
Իսկ երբ լուսատու մարմին ինչ լուսաւորէ զայլ քան զինքըն մեծագոյն մարմին, որ իցէ լուսառու և անլուսանցոյց. որքան միմեանց մերձ կան մարմինք երկոքեան, այնքան, փոքր մասն անլուսանցոյց մարմնոյն լուսաւորի. և յետ-

ուստ լուսաւոր մարմնոյն պատարուն, և թանձր ծայրա-
սուր ստուեր պատճառի։ Այլ՝ որքան իրերաց հեռակայք
են լուսատու. և լուսաւոր մարմինքն, այնքան մեծ քաժին
խաւարչուտ մարմնոյն լուսաւորի. իսկ յետկոյս անլուսան-
ցոյց մարմնոյն՝ սուղ, նուրբ, և պիրամիդեայ ստուեր. այս-
ինքն, հրաձև՝ բոցաձև, և ծայրասուր շուք պատճառի։
Արդ՝ Արեգակն ուրեք ուրեք ի ժամու ծննդեան լուսնոյն՝
ստուերածին խաւարաւ, երբեմն ըմբռնի մասամբ իւիք.
բայց՝ ոչ ուրեք, և ոչ երբէք բոլորովիմբ։
Ձի Լուսինն փոքրագոյն գոլով քան զերկիր. ոչ կարէ բո-
լորովիմբ բառնալ յերկրէ զարեգական շառաւիղս. Արե-
գակն ուրեմն (որ է ինքնին լուսնոյ, և արեւու ակն) իւրովի,
ինքեամբ՝ ոչ երբէք խաւարի. այլ յորժամ լուսինն՝ ի ժա-
մու ծննդեան ընդ արեգական, հուպ Գլխոյ, կամ Տտոյ Վի-
շապին, տրամագըծօրէն, և ուղղակի ի ներքոյ արեգական
գտանի. զիւր թանձրամած, և զանլուսանց մարմինն մի-
ջարկէ ընդդէմ արեգական, և երկրաբնակաց. որով նոյն
ինքն խաւարչուտ լուսինն՝ ինքնաբուն խաւարաւն խափա-
նէ զանց արեգակնային շառաւիղացն 'ի վերայ երկ
րաբնակաց ոմանց, բայց ոչ երբէք 'ի վերայ ամենեցուն։
Եւ այսպէս՝ Արեգակն մթանայ, նսեմանայ, ստուերանայ. և
խաւարի,ոչ ինքն ինքեան, այլ միայն երկրաբնակաց ոմանց։
Խաւարումն ուրեմն Արեգական է, ուղղագիծ միջարկութիւն
Լուսնոյն 'ի մէջ մեր, և արեգական.
Խաւարումն Լուսնոյն է՝ ուղղագիծ միջարկութիւն երկրի
'ի մէջ Արեգական, և Լուսնոյն։
'ի ժամանակի իւրոյ լրման՝ երբ տրամա-
Քանզի լուսինն 'ի ժամանակի իւրոյ լրման՝ երբ տրամա-
գըծօրէն, և ուղղակի 'ի ներքոյ արեգական, և երկրի գտա-
նի. երբեմն բոլորովիմբ, և երբեմն մասամբ իւիք խաւարի։
Ձի արեգակն, որ միշտ անշեղօրէն թաւալի ընԿենդանա-
կերպեայ գօտւոջ, և լուսաւորէ զկիսագունդն Երկրի. եր-
բեմն յաւէտ, և երբեմն նուազ։ իսկ՝ այլ մնացեալ կիսա-



գունդն երկրի, որ է հակակայ, և դէմ յանդիման շառաւի-
ղացն Արեգական արձակէ զպիրամիտեայ, բոցաձև, և
գծայրասուր ստուերն իւր մինչև 'ի Լուսաբերի կամարն։
Արդ Լուսինն հեռացեալ յարեգակնէն վեց կենդանակեր-
պիւք. այսինքն 180. աստիճանօք, եթէ իցէ ուղղակի հան-
դէպ Արեգական. բայց չիցէ մերձ գլխոյ, կամ տտոյ վի-
շապին, ոչ խաւարի կերպիւ իւիք։ Եթէ իցէ լուսինն մերձ
գլխոյ, կամ տտոյ վիշապին, խաւարի. Որքան մերձ գլխոյ,
կամ տտոյ վիշապին իցէ, այնքան մեծ երևի խաւարումն
Լուսնոյ. 'ի ձմեռան յեղանակին՝ սուղ, և յամառան ժամա-
նակին՝ երկար լինի խաւարումն. Եւ յորժամ Արեգակն իցէ
ընդ գլխոջ, և Լուսինն ընդ տտոջ Վիշապին. և հակադարձօրէն՝
արեգակն ընդ տտոջ, և Լուսինն ընդ գլխոջ վիշապին, յայնժամ
լուսինն բոլորովիմբ խաւարի։ Ձի լուսինն բոլորովիմբ
մտանէ, ընկղմի, և սուզանի 'ի թանձրամած կիսագնտի
ստուերն, զոր կողմն այն կիսագնտին, որ է դէմ ընդդէմ
շառաւիղացն արեգական, ձգէ, արձակէ, և հասուցանէ
մինչև ցԼուսաբերի կամարն։
Երկաքանչիւր ստուերաց խաւարումն, եթէ Արեգական. և
թէ Լուսնոյն, ո՛չ հանդիպի, եթէ ոչ՝ ըն, կամ մերձ գլխոյ,
կամ տտոյ վիշապին, այսինքն՝ յերկուս կէտս. կիրճս, և 'ի
կապս Արեգակնաշաւղին, զորս միջակտրէ հաւասարընթաց
բոլորակն Լուսնոյ։ Կէտն այն, զոր Լուսնոյ անուաձև բո-
լորակն միջակտոր առնէ, և բարձրանայ 'ի հիւսիս կոյս՝ առի,
կիրճ, կապ, և հանգոյց բարձրութեան, կամ Գլուխ վիշա-
պին։ Իսկ այն կէտն, զոր Լուսնոյ անուաձև շրջանակն մի-
ջակտոր առնէ, և 'ի հարաւ խոնարհի. կիրճ, կապ, և հան-
գոյց ցածութեան յորջորջի, կամ Տուտ վիշապին։
Խաւարումն Լուսնոյ երբեմն է ընդհանուր. և հանդիպի մի-
այն 'ի ժամանակի լրմանն։
Ընդունումն Արեգական՝ է միշտ միայն ըստ մասին, և հան-
դիպի միայն 'ի ժամանակի ծննդեան լուսնոյն։ Ուստի խա-

ւարումն Արեգական, որ եղև 'ի ժամանակի Խաչելութեանն
Քրիստոսի, որովհետև էր 'ի լրման Լուսնոյն, ոչ էր բնա-
կան, այլ մանաւանդ հրաշական. ըստ որում զարմացեալ
ընդ այս Դիոնէսիոսի Արիսպագացւոյն՝ ասաց. –
Կամ Հեղինակ բնութեանն չարչարի, կամ շինուած աշխար-
հիս եղծանի։

Բաւեսցի այժմոյս այսքան առ այս։



## ԴՈՅՋՆ ԻՆՉ ԶԵԿՈՒՅՄՈՒՆՔ՝ ՍԱԿՍ ՏՏԱՒՈՐ ԱՍՏԵՂԱՑ։

Տտաւորն գոյանայ և բորբոքի 'ի կուտակել գոլոր-
շեաց 'ի բարձրագոյն գաւառն օդոյ. որպէս ասացին Արիս-
տոտէլ. և այլք։ Եւ ոչինչ է կարծիքն ոմանց, թէ Տտա-
ւորն ծնանի 'ի վեր քան զլուսնական երկինքն։ Քանզի
երկինքն հաստատ և անապական մարմինք են, վասն որոյ
ոչ կարէ հաւաքել և բորբոքիլ 'ի նոսա գոլորշիք՝ առ 'ի
լինել նիւթ տտաւորին։ Ուստի մինչ ասեն ոմանք զլուսինն,
այսու՝ կամ տեսօղքն են պատրեալք, և կամ անսացեալքն
ոչ էին ճշմարիտ տտաւորք, այլ թերևս էին նորապէս երև-
եալ աստեղք ոմանք։
Արդ՝ չորս իրք նկատին 'ի տտաւորն. այսինքն Զև. Շար-
ժումն. Գոյն. և Նշանակութիւն։ Չեն այլայլք ըստ տրա-
մադրութեան նիւթոյ, որք յատկապէս համահաշուին երեք։
Քանզի նրբագոյն նիւթըն, որ կացուցանէ զհերս տտաւո-
րին 'ի յերկար, մինչ միակերպապէս կարկառի, յայնժամ
ասի տտաւոր։ Եւ մինչ երբեմն այսպէս տարածի գոլոր-
շիքն 'ի մի կողմն. մինչ զի՝ կազմի հանգոյն մորուաց՝ յայն-
ժամ ասի մորուաւոր. (թէպէտ ոմանք զայսոսիկ զերկոսս
ոչ զանազանեն 'ի միմեանց։) Նաև երբեմն շուրջ զմարմնով
տտաւորին սփռին յամենայն ուստեքէ նրբագոյն գոլոր-
շիք ըստ կերպի հերաց. և յայնժամ ասի վարսաւորեալ,
կամ գիսաւորեալ։ Գոն նաև այլ բազում ձևք տտաւորաց.
որպէս ասեն աստղագէտք բազումք։
Շարժումն տտաւորաց մանաւանդ է յարևելից յարևմուտս։
Քանզի [որովհետև են 'ի վերնագոյն մասին օդոյ, յափըշ-
տակին միշտակայ շարժմամբն հաստատութեան, որոյ ուժ-
գնութիւն հասանի մինչև առ այն գաւառն օդոյ։ Բայց եր-
բեմն վերանան, և կորանան, նաև հակին առ բևեռսն. ըստ
որում պահանջէ յօժարութիւն նոցին՝ առ 'ի խնդրել զնիւթ։
Եւ գոյնն տտաւորաց՝ է զանազան ըստ յատկութեան նիւ-

Թոյ նոցին. որպէս և 'ի մեզ զանազանէ գոյնն բոցոյ, այսինքն որում այրի 'ի զանազան նիւթս։ Ուստի որպէս բոցըն երևի 'ի ծծմբում կապոյտ. 'ի ռետնում՝ սեաւ. և 'ի մաքուր խուղոջ, սպիտակ։ Այսպէս ևս՝ այնք տտաւորք, որք ունին զհաստ և զմառախլապատ նիւթս, երևին տղեղք։ Որք ունին ըզնիւթ անօսր՝ երևին արծաթագոյնք։

Եւ այնք՝ որք թէպէտ ունին զնուրբ նիւթս, բայց խառնեալք զօլով այսինքն միգական գոլորշեաց, տեսանին արփինայինք։ Բայց որքան առ նշանակութիւն. Փլինոս կոչէ զամենայն զարհուրելի աստեղք, որք նշանակեն զալէկոծութիւնս, զհողմունս, զփոփոխմունս կացութեանց, և զայլ ձախողակի պատահմունս։ Եւ այսոքիկ գուշակիլ կարեն 'ի յերևիլն տտաւորին. մասն ինչ բնականաբար և մասն ինչ 'ի բարեհաճութիւն այսինքն։ Բնականաբար։

Քանզի տտաւոր աստղն սնուցանի 'ի մեծ յոլովութենէ պարարտ տամկացութեանց և գոլորշեաց։ Ուստի այնու ծծէ զպարարտութիւն երկրի. նաև ծախէ և վատնէ զայնս տամկացութիւնս,որք ընդ ամպոց, և ընդ անձրևային ջուրց խառնեալք՝ պարտ էին պտղաբեր առնել զերկիր, յաղագս որոյ պատճառէ զամլութիւն։ Եւ չորագոյն մասունքն այսպիսեաց տամկացութեացն և գոլորշեաց դառնան 'ի հողմունս և 'ի մըրրիկս, յորոց ծնանին ալէկոծութիւնք։ Իսկ այնք գոլորշիք. որք են հաստագոյնք՝ ապականեն զօդն. յորմէ հիւանդութիւնք, և մահացմունք հետևեն։ Նաև յորժամ յառաջ ածի տտաւորն, նշան է՝ թէ իշխէ ջերմ և չոր աստղ, յորմէ գրգռին մաղձոտ մարդիկ. վասն որոյ ծնանին կռիւք, և պատերազմունք։ Եւ զի այնքան այլայլումն բնութեան, ներածէ ևս 'ի մարդիկ զայլայլմունս և զփոփոխմունս խոնաւութեանց, յօժարութեանց. և ջանից, աստուստ հետևի ցանկութիւն փոխելոյ զկացութիւն,նաև ծնանի փոփոխմունք թագաւորութեանց և բարուց Այլ նաև մասն ինչ է 'ի բարեհաճութիւն եայլն, որք զայս-



պիսի զիպուածս նախագուշակեն տտաւորքն, և մանաւանդ մահ մեծամեծաց, որք հաւատացեալք լինին գուշակի Թարց ուրուք ճշմարտանման հիման բնականի։ Վասնզի այս ներհակի օրինաց բնութեան, թէ վասն էր արդեօք մահաբեր գոլորշիքն այն մանաւանդ զթագաւորս և զիշխանս առնէ մեռանիլ, քան զայլ մարդիկս։ Ուստի զոր օրինակ ընտրեաց Աստուած զերկնային աղեղն 'ի նշան հաշտութեան և ուխտի՝ 'ի մէջ երկնի և երկրի։ Այսպէս պատշաճ զոլ տեսանի, զի զայնս նշանս զարհուրելիս, որպիսիք են տտաւոր աստեղքն, առնուցու 'ի նշան բարկութեան իւրոյ նաև մերձեցեալ պատժոցն։ Զորև ցուցանէ արքունի մարգարէն 'ի յասելն. (սաղմ. 59. 6։) Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան։ Նաև յայտնապէս ուսուցանէ Յօհան Դամասկ. թէ յառաջ քան զաւերումն Երուսաղէմի երևեցաւ տտաւոր աստղ ինչ, որ և տևեաց երկրապէս, նախագուշակ ապառնւոյ սրածութեան։

Այսքան եւ առ այս։

*Արդ՝ կարգեսցուք աստ զմշտնջենաւոր տարեկան փոփոխմանց գուշակումն 'ի Թուին Քրիստոսի։*

1909, 1937, 1965, 1993,

'Ի մտանել արեգական յառաջին աստիճան խոյին 21. մարտի ամսոյն։ Իշխօղ տարւոյն լինի Լուսնթագն։ Քանզի սա գտանի ի միջի երկնից՝ 'ի տան Հրատին, որ է խոյն, ուր գոյ եւր բարձրութիւն յիւրում առաջնում հայեցողութեան։ Վասնորոյ կարելի է ասել. թէ յառաջակայ տարիս լինի պտղաբեր, և առատ ցորենով, գինւով, մեղրով, ձիթով, վշով, ապրեշմաւ. ձկամբ, և ամենայն բարեհամ պտղովք։ Ժամն բոլոր լինի բարի, և խաղաղ՝ բացի բոթից պատերազմի։ Սկիզբն ձմռան ցուրտ հանդերձ կարկտօք. մէջն տաք. վերջն հանդարտ։ Գարունն ցուրտ՝ մինչև յունիսի 22 նշան է անձրևաց՝ և որոտմանց. պակասին ջուրք յաղբերաց. մեռցին եզինք ոչ սակաւք։ Զկնի աշնան՝ աճի գետորայք. հիւանդութիւնք։ Աղաչեսցուք զԱստուած, զի չիցէ մահ տարաժամ։ Պարտիմք լինել սակաւակերք, և զգուշանալ 'ի ջրոց։
Արդ՝ զի յայսմ ամի Արեգակն գտանի յերկոտասանորդում տան երկնից՝ ընդ Հրատին, ցուցանէ թէ Թագաւորն այլազգեաց յոյժ նեղիցի յիւրոց թշնամեաց, գուցէ ևս 'ի նոցանէ սպանցի ընդ սատակմամբ բազում զինուորաց։ Եւս՝ զի երևակն է յելն, և 'ի քառակուսի հայեցողութեան ընդ Լուսնթագին, ցուցանի արիւնահեղ պատերազմունք. վասնորոյ՝ 'ի կողմանէ Թագաւորին հասանիցին մարդոյ սաստիկ նեղութիւնք, և տրտմութիւնք։ Եւս նշանակին վտանգ Թագաւորաց, վիճմունք, տարաձայնութիւնք և վնասք վաճառականութեան։



1910, 1938, 1966, 1994,

Յայսմ ամի՝ երբ արեգակն յառաջին աստիճան խոյին մարտի 21, մտանէ. իշխօղ տարւոյն լինի Փայլածուն, որ գտանի 'ի մէջ երկնից, այսինքն 'ի մէջ խոյին, որ է տուն Հրատին, ևս յառաջնում հայեցողութեան։ Ուստի յառաջակայ ամն է լիութիւն ամենայն իրաց, ցորենոյ, խաղողոյ, ձիթապտղոյ, կտաւահատի, ապրեշմի, մսոյ, և ձկան։ Սկիզբն ձմեռան լինի ցուրտ, և կարկուտ. մէջն տաք. վերջն բաղցր։ Գարունն ցուրտ մինչև ցսկիզբն ամառան։ Ամառն յոյժ ջերմ։ Աշունն սառնոտ, անձրևոտ, և հիւանդոտ. հանդիպին մանաւանդ մանկամարդոց ցաւք աչաց։ Դաշտային լինին առաւելապտուղք, քան թէ տեղիք լեռնայինք։ Գինիք վնասին և նուազին, պարտ է յամեցուցանել զխաղողաքաղութիւնն։ Պտուղք ծառոց առատասցին. բարւոք է նաւարկութեամբ ուղևորել։
Ասէ Դեմոկրիտոս. թէ յաճախին կարկուտք, և հողմունք ուժգնակի հնչեսցեն։ Պարտ է աղաչել զԱստուած, զի մի՛ եղիցին երկրաշարժք։
Ցուցանի սաստիկ պատերազմունք և մարդասպանութիւնք։ Թագաւորք, և իշխանք դիցեն հարկս ծանունս 'ի վերայ ժողովրդեանն, զի կատարեսցեն զարարս անիրաւս։ Յարիցեն մարդիկ վատթարք, և փծունք, որում ցուցանէ արեգական ներհակ հայեցողութեամբ ընդ հրատին և երևակին՝ յանկեան տասնորդ տան երկնից։
'Ի վախճանի՝ հրատն ևս ներհակ հայեցողութեամբ հայի զարեգական յերրորդ տան երկնից, և թաւալումն է ցերեկեայ, վասնորոյ ցուցանի մեծ, և արիւնահեղ պատերազմ, անհնազանդութիւն ռամկաց առ Թագաւորն և կորուստ Թագաւորութեան իմիք։ Երևեսցին ևս վիճմունք, խռովութիւնք, և խնդիրք 'ի մէջ եղբարց, և սիրելեաց, ընկերաց և ընտանեաց։

1911, 1939, 1967, 1995,

Ի մտանել արեգական յառաջին աստիճանս խոյի 21-ն մարտի. իշխօղ տարւոյ լինի Երեւակն։ Արդ՝ զի երեւակն գտանի 'ի մէջ երկնից 'ի մէջ խոյին, որ է տուն հրատին, ուր է բարձրութիւն իւր. եւ գտանի յառաջնում հայեցողութեանն, վասնայսորիկ ասելի է, թէ յառաջիկայ ամն լինի միջակ առատութիւն ցորենոյ և ռոճկի. 'ի բարութեննէ խոյին առատանան ոչխարք, բայց պակասին ձկունք. միջակ իւղ ձիթապտղոյ, և մեղր, երեքօրեայ և քառօրեայ տենդք տիրեսցեն. զամն ողջ հնչեն հարաւային հողմունք։ Սկիզբն ձմեռան հողմառատ, մէջն բարեխառն. վերջն ջրառատ, և սառնամանեայ։ Գարունն թեթև անձրեւաւ լինի բարեխառն. Նոյնպէս և Ամառն, բայց թուի թէ հողմն անոյշ վնասիցէ մրրգաց. Աշունն գուշակէ զտրկարութիւնս, մանաւանդ վաւաշոտ կանանց, որոց ոչ սակաւ լիցի մահ։ Գոյ կասկած կարկտահարութեան, և տարաժամ մահու։

Ցայսմ ամի բազում աւազակք երեւեսցին։ ով որ է ընդ Երեւակիւն ծնեալ լինի սակաւահաւատ, և փոքրագութ. ըստ որում երեւակն յիններորդում տան երկնից ցուցանէ։ Եւս՝ հրատն կցորդ ընդ լուսնթագին (եւ հակադարձօրէն) յեօթներորդում տան երկնից, է նշան արիւնահեղեղ պատերազմաց, և մեռելութեանց, մահ փարթամ արանց, և համբաւոմնակաց։ Լուսաբերն եօթներորդի տան երկնից յանկեանն, զեկուցանէ գաջողութիւնս կանանց, և կնատ արանց։

1912, 1940, 1968, 1996,

Երբ մարտի ամսոյն 22 արեգակն յառաջին աստիճան խոյին մտանէ, իշխօղ տարւոյն լինի Լուսինն. Արդ՝ զի լուսինն գտանի 'ի մէջ երկնից, ըն ցուլ կենդանակերպում, որ է տուն լուսաբերին, ուր գոյ իւր բարձրութիւնն,



առաջին սահմանն, և առաջին հայեցողութիւնն։ Վասնորոյ՝ ասել է. թէ տարիս այս լինի առատ ցորենով, գինով, պտղով, ձիթով, ապրեշմաւ, բթանիւ, և ձկամբ. եղանակն յոյժ մեղմ, և անուշ. առատութիւն ջրոյ, այլ աղազաւ ոչխարք և մեղուք ոչ ապականին։

Ամառն եղիցի բազմանձրև, և խօթարեր։ Ձմեռն հասարակ։ Գարունն բարեխառն։ Աշունն ջրառատ։ Ցարեւեան կողմանէ առաւել քան թէ յարեւմտեան կողմանէ ապականին որայք 'ի կալի։

Առողջութիւն մարմնոց է, զի լուսնթագն գտանի յառաջնում տան երկնից։ Եւս՝ երեւակն 'ի տասներորդում տանն. տուտ վիշապին կցորդ ընդ հրատին 'ի շարժել նշանում, ցուցանի արիւնազանց պատերազմ, և կոտորածբ-Թագաւորք, և իշխանք դիցեն հնազանդելոյն, և պաշտոնէիցն զհարկս ծանունս, և զայլ ինչ հրաման, և կարգ անհաճոյ ռամկաց։ Երեւին աւազակք հզօրք՝ և գողք, մինչ զի ճանապարհորդք կասկածանօք ուղևորեսցին, ըստ որու նայտնէ հրատն յիններորդում տան երկնից հանդերձ տուտ վիշապին։ Եւ զի ասացեալ հրատն գտանի յերեւակի տանն, և լուսնթագն ոչ հայի նմա, աստի նշմարի՝ թէ բանտք բռնութեամբ բանայցին, և բազումք 'ի բանտարգելոցն ելցեն։ Եւս՝ զի փայլածուն յերկոտասաներորդ տան գտանի, գուշակի՝ թէ վաճառականք, և իմաստասէրք անկանիցին յաստիճանացն իւրեանց։

1913, 1941, 1969, 1997,

Երբ արեգակն մարտի 21. յառաջին աստիճան խոյին մտանէ. իշխօղ տարւոյն լինի Հրատն։ Արդ զի սա գտանի 'ի մէջ երկնից ընդ ցլոյն, և առաջին հայեցողութեամբն

ցուցանէ մեզ՝ պառաջակայ ամն լինի ցամաք, յոյժ ցուրտ, և ձիւն. միջակ պտուղ, ապրեշում, ձէթ, գինի, և ձուկն։ Գարունն, և Ամառն գէջ։ Աշունն չոր, և ցամաք։ Ձմեռն առատ, և արգաւանդ, իսկ և՝ բազմահող. ցորեանն մեծագին. ոչխարք սակաւաբերք, եւ՝ մեղուքն, բթանն, միսն թանկագինք. ունաք միջակք։ Հրատն զկոխւ շնորհէ։ Աստուած ազատեսցէ զմեզ յերկրաշարժէ։

Երեւակն է եօթներորդ տան յանկեանն. վասնորոյ լինին պատերազմունք, և կոտորուածք։ Երեւակն է կցորդ ընդ լուսաբերին. ոյր ազդաւ՝ է նշան մահուան տիկնոջ ուրուք՝ հարստի և մեծահամբաւի։ Լուսինն լծորդ ընդ գլուխ վիշապին, ցուցանէ զմահ զովելի արանց. զխռամատութիւն, և զմեծ վնաս պտղոյ։ Արեգակն յիններորդում տան երկնից՝ նշանակէ զճանապարհս Թագաւորի միոյ։ Հրատն ընդ լուսնին պատճառեսցեն զերկրաշարժս մեծամեծս։

1914, 1942, 1970, 1998,

Երբ արեգակն մարտի 21 ։մտանէ յառաջին աստիճան խոյին, Փայլածուն լինի իշխող տարւոյն հանդերձ երկաւորաւն. որ է տուն և օթեւան առանձին Փայլածու մոլորակին։ Վասնորոյ՝ պտղաքաղութիւն տարւոյս լինի տկր նուազն. նշանակի եւս կռիւս պատերազմականս, կոտորածս, եւ հարուածս չորքոտանեաց՝ պիծակաց, մեղուաց, եւ զզաւ ժանտամահ. Սկիզբն ձմեռան լինի ցրտային. մէջն բարեխառն. վերջն բազմասառն, անձրեւային, յորդութիւն գետորէից։ Գարունն՝ անձրեւաշատ, որք ծառոց վնասեն. վերջն՝ 'ի տեղիս տեղիս անկանին կարկուտք։ Ամառն անձրեւոտ եւ մառախլապատ. պարտ է՝ շուտով քաղել զցորեանս, զի մի ապականիցին։ Աշունն՝ եղիցի քամոտ, եւ առողջարար. որթք՝ բազում խաղողս բերիցեն։ Տարիս այս է բարի տնկելոյ, տեղափոխելոյ, և պատ-



ուաստելոյ. ցորեանն զիւրաւ ապականի։ Աղաչեսցուք զԱստուած վասն պտղոյ։

Յայսմ ամի ցուցանի աւերումն, և խանգարումն գաւառի, կամ քաղաքի միոյ. և վատաբախտութիւն ցեղի մարդկայնոյ։ Եւ զի հրատն յեօթներորդում տան երկնից, և քառակուսի հայեցուածով փայլածուին, և զօհալն յութերորդում տան երկնից, եւս քառանկիւնի հայեցողութեամբ ընդ արեգակն գտանի. նշանակէ զանթիւ մարդոց մահն։ Առաւել եւս՝ բազմանան նենգագործք, որք այլոց զխորխորատ փորեն, բայց ինքեանք անկցին 'ի նոյն զուբըն, զոր այլոց փորեցին. տեսանի անտես զերութիւն մարդոյ։ Խռովութիւնք, և կռիւք 'ի մէջ Պարոնաց, և զանազան գաւառաց, այնպէս՝ զի 'ի մէջ սիրեկանաց, և բարեկամաց՝ հաւատարմագոյնն ոչ ճանաչեսցի։

1915, 1943, 1971, 1999.

Երբ արեգակըն Մարտի 21. յառաջին կէտն Խոյին մտանէ. իշխող տարոյն լինի Մուշթարին ընդ երկաւոր նշանաւն, որ է տուն փայլածուին։ Եւ զի գտանի սա 'ի մէջ երկնից, ուր զոյ իւր բարձրութեամբ. եւս՝ յիւր յառաջնում հայեցողութեամբ վասն որոյ ամս այս լինի առատ՝ 'ի մեղմութէնն Մուշթարւոյն։ Սկիզբն ձմերան ջրաւէտ. մէջն բարեխառն, և քամոտ. վերջն գէջ, և եղեմնոտ։ Գարունն լինի խառն ընդ հիւանդութեան։ Ամառն նմանի զարնան։ Աշունն գէջ, և սկիզբն սակաւ ինչ հիւանդութեւն։ Տարիս այս լինի կասկածոտ վասն յեղի կանանց։ Ձիթոնն լինի բաւականապէս։ Միսն, եւ բթանն քիչ մի թանկագին երեւի։

Յայսմ ամի՝ զի արեգակն յերկոտասաներորդում տան գտանի ըստ հրատին, է նշան՝ որ այլազգեաց Թագաւորն սաստկապէս նեղիցի յիւր թշնամեացն, և զուցէ 'ի նոցա-

անէ առցէ զմահն՝ հանդերձ արիւնահեղ կոտորուածովք զինուորացն։ Եւ զօհալն 'ի բարձրանալն, և քառանկիւնի հայեցողութեամբ ընդ լուսնաթագին՝ ցուցանէ սաստիկ պատերազմ, որով տէր նեղանան, և տրտմին մարդիք յիւրեանց թագաւորէն։ Ցուցանէ ևս՝ զվտանգ ինչ թագաւորաց. վէճս, խռովութիւնս, և զանկումն վաճառականութեանց։ Եւ զի գտանի 'ի սևռեցեալ նշանում, տարին լինի միջակ. տիրեսցեն կռիւք. ցաւք ոմանք, և ծաղիկք։

1916, 1944, 1972, 2000.

Արեգակն երբ մարտի 21. մտանէ յառաջին աստիճան Խոյին. իշխող տարւոյն լինի Զօհալն. որ գտանի 'ի մէջ երկնից ընկշռում, որ է տուն Լուսաբերին, ուր ունի զիւր բարձրութիւն, և յիւր յառաջնում հայեցուածում. Վասնորոյ՝ յառաջակայ տարիս լինի միջակ, և ուրախութիւն 'ի մէջ մարդոց. և զտարին բոլոր հարաւային հողմն փչէ։ Սկիզբն ձմեռան լինի քամոտ. մէջն բարեխառն. սառնաշատ, և բամոտ։ Գարունն լինի միջակ ընդ թեթև անձրևաւ։ Ամառն միջակ, և բարեխառն, բայց զի հողմունք անուշակի հնչեսցեն. վասն որոյ պտուղք ապականին։ Աշունն գուշակէ զհիւանդութիւն 'ի մէջ վավաշոտ կանանց, յորոց բազումք ամուսնասցին։

Ասէ Դեմոկրիտոս. թէ լինի վնասակար կարկուտ. և աղաչեսցուք զԱստուած, զի մի երևեսցի մահտարաժամ։

Ցայսմ ամի բազմանան աւազակք. և որք ծնան 'ի ներքոյ զօհալին՝ ունիցին փոքր հաւատ, և բարեպաշտութիւն, որպէս զօհալն յիններորդում տան երկնից ցուցանէ։ Եւս՝ Հրատն կցեալ ընդ մուսթարւոյն, և եօթներորդում տան երկնից՝ ցուցանի լինի սաստիկ կռիւս, և կոտորուածս. մեռանիլ մեծահամբաւ, և հարուստ արանց, բայց տարին լինի քաղցր։ Դարձեալ Լուսաբերն յեօթներորդում



անկեան երկնից՝ ցուցանէ զաջողութիւն կանանց, և իգաբարոյ արանց։

1917, 1945, 1973, 2001.

Երբ մարտի 21 արեգակն յառաջին աստիճան խոյն մտանէ. իշխան տարւոյն լինի Արեգակն ընդ Խեցգետին կենդանակերպին, որ է տուն Լուսնին։ Արեգակն գտանի 'ի մէջ երկնից. ուր ունի զիւր բարձրութիւնս, և զիւր առաջին հայեցուածն, Վասնորոյ ցուցանի՝ թէ այս տարիս լինի յոյժ առատ, բերրի, և պարարտ ամենայն ընչից. լաւ ճռաքաղութիւն. շատ պտուղ, գինի, ապրշում, ձէթ, միս, և ձուկն։ Զամն բոլոր լինի առողջ՝ և խաղաղ։

Ձմեռն տաք։ Գարունն զէջ։ Ամառն, և Աշունն քամոտ։ Առատութիւն ոչխարաց, մեղր, և ընտրոց։ Ապականին պտուղք պարտիզաց. մահ, և հարուած երեխայից։

Ցայսմ ամի գտանին գողք բազումք, և 'ի մարդս ոչ տեսանէ բարեպաշտութիւն. ըստ որում ցուցանէ զօհալն յիններորդում տան երկնից։ Եւ զի զօհալն ունի քառանկունի հայեցուած ընդ Հրատին, զինուորք ընդ իրեարս ունիցին խռովութիւնս, և փոխիցեն զառաջին տեղիս։ Եւ զի ասացեալ Հրատն գտանի յերկոտասաներորդում տան երկնից, է նշան՝ որ բազումք դանակաւ, և թրով անկցին։ Եւս արեգակն յիններորդում տան երկնից, և կցեալ ընդ գլուխ վիշապին, ցուցանէ՝ թէ Թագաւորն արասցէ զճանապարհս. ևս զմահ մեծամեծաց, և այլ արանց. ևս՝ երևին նոր Թագաւորք, որք բռնութեամբ կամիցեն իշխել, և տիրել այլոց իշխանութեան։ Տակաւին՝ Լուսաբերն, և փայլածուն վատաբախտք, և կիզեցեալք, նշանակէ զվնաս ինչ գալ ժողովրդեանն 'ի թագաւորէն, նմանապէս վնասիլ Թագաւորն 'ի ժողովրդենէ։ 'Ի վախճանի՝ տասներորդ. Տան տէրն վատաբախտ, և յանկեալ տան գոլով, կիզե-

ցեալ ես՝ ցուցանէ ցաւս, ներդութիւնս, վիշտս, և վնասս հանդիպիլ արքունի պաշտօնէից։

1918, 1946, 1974, 2002

Յորժամ Արեգակն մարտի 21. յառաջին կէտ Խոյին մտանէ իշխող տարւոյն լինի լուսինն, որ գտանի 'ի մէջ երկնից ընդառիւծոյ, որ է տուն արեգական. վասն որոյ Տարին լինի պարարտ։ Յամառան ժամանակին շատ ջուր, և հիւանդութիւն։ Ձմեռն շատ ցուրտ, և մառայլ։ Գետք թանձրանան զկնի գարնանամտին։ Յապառաժ, և 'ի լեռնային տեղիս յոլով կարկուտ, բայց տայցեն բազում պըտուղս ծառք լեռնայինք։ Զամն բոլոր լինի առողջ բացի յաշնան։ Ասէ Դէմոկրատոս փիլիսոփայն՝ թէ շուրջ զբերանովն ծնանին փըշրակք։ և թէ մանաւանդ երիտասարդք պարտին խմել զգարնան գինի. Եւ զէյթունն յայսմ ամի լինի բաւական։

Եւ զի մուշթարին յառաջնում տան երկնից գտանի, նշանակէ զառողջութիւն մարդկային մարմնոյ։ Երևակն 'ի տասներորդում տան երկնից, և տուտ վիշապին կցեալ ընդ հրատին, և հրատն 'ի շարժուն կենդանակերպում. ցուցանի մեծ պատերազմ և կոտորած։ Եւս՝ թագաւորն, և իշխանքն դիցեն ծանր հարկս հնազանդելոցն, և ռամկաց, և արասցեն զայլ անիրաւութիւնս։ Տեսանին շատ աւազակք, և գողք, այնպէս՝ որ ճանապարհք իցեն ահոտք, և կասկածոտ, ըստ որում ցուցանէ Հրատն ընդ տան իններորդում երկնից ընդ տուտ վիշապին։ Եւ զի ասացեալ հրատն գտանի 'ի տան Զոհալին. և Մուշթարին ոչ հայի առ նա. վերայական կարծիք է, թէ բանտք բռնութեամբ բացեալ լինին, և բազումք 'ի բանդարգելոցն ելանիցեն։ Փայլածուն գտանի յերկոտասաներորդում տան երկնից՝ ցուցանի թէ վաճառականք անկցին աստիճանանաց և ի պատուացն զորս ունէին։



1919, 1947, 1975, 2003,

Իշխան տարւոյն լինի Հրատն, երբ Մարտի 21. յառաջին աստիճան Խոյին մտանէ Արեգակն. և հրատն ունիցի ընդ ինքեան զառիւծն, որ է տուն արեգական։ Ամուլ՝ և ցամաք երևի տարիս այս։ Սկիզբն ձմեռան ցուրտ, ջրային, և քամոտ. այնպէս՝ որ ծառք արմատաքի խլեսցին. մէջն բարեխառն. վերջն ցրտիկ։ Գարունն անձրևոտ. նման սմին լիցի Ամառն։

Աշունն թուի զոլ ջերմ, ցաւագար՝ իջուածոց, հազից, և անձկութեան կրծոց. վասնորոյ հարկ է ուտելն զսակաւ հաց, և ըմպելն շատ գինի։ Ասէ Դեմոկրիտոս՝ թէ զէյթունն լինի առատ. տալին աջողակ որթոց. բայց ոչ է պարտ ջըրելն. մեռանին բազում մեծամեծ կենդանիք տանց. դաղանք առատանան. հիւանդութիւն կանանց. ձայն բօթալի զօրաց։ Պարտ է աղաչել զԱստուած, զի մի երևեսցեն երկրաշարժք։

Զօհալն յանկեան եօթներորդ տան երկնից. վասնորոյ լինին արիւնահեղ պատերազմունք. և կոտորածք։ Նա՝ նոյն է կցեալ ընդ լուսաբերին. վասնորոյ տիկին մի մեծ՝ անուանի և հարուստ մեռանի։ Լուսինն կցեալ է ընդ գըլուխ վիշապին. վասնորոյ մարդիք զօրութեան արժանիք մեռանին. պտուղք վնասուին յոյժ, և ապականին։ Թագաւորն ուղևորեսցի՝ զի Հրատն է ընդ Լուսնոյն, ուստի սաստիկ երկրաշարժք գուշակին։

1920, 1948, 1976, 2004.

Երբ Մարտի 21 արեգակն յառաջին կէտն Խոյին մտանէ. Տարւոյ իշխան լինի մուշթարին ընդ նշանաւ առիւծոյ որ է տուն արեգական։ Յառաջիկայ տարին լինի յոյժ պարարտ, և առատ ցորենով, ձիթով, գինով, ապրշմաւ, և

ձկամբ, և այլ ամենայն մրգօք։ Սկիզբն ձմեռան ցուրտ ընդ կարկտօք. մէջն տաք. վերջն խարբհաճոյ։ Գարունն ցուրտ, և անձրևոտ մինչև ցյունիսի ամիսն։ Ամառն սպառնայ մեզ անձրևս. և զորոտս. պակասին ջուրք յաղբերաց վասն այսորիկ մեռանին բազում եզինք։ Աշունն առատացուցանէ զգետս։ Ասէ Դեմոկրիտոս՝ թէ եսեսին հիւանդութիւնք։ զԱստուած աղաչեսցուք՝ զի չիցէ մահ տարաժամ։ Լեր սակաւակեր, և ըմպեա առատօրէն զգինի։ Ասէ ևս նոյն իմաստասէրն՝ լինի կռիւ։ Յայսմ ամի ցուցանի ևս թէ Թագաւորն այլազգեաց նեղիցի, և վշտանիցի յոյժ յիւր թշնամեաց, զուցէ 'ի նոցանէ մեռանիցի հանդերձ մեծաւ հարուածով, և կոտորուածով զինուորացն։ Երևակն 'ի յելանելն իւր, և քառանկիւնի հայեցողութեամբն ընդ Մուշթարւոյն, ցուցանէ զարիւնահեղ պատերազմունս, և 'ի պատճառէ կռուից մարդիք անձկանան, և սրտնեղին յիւրեանց Թագաւորէն։ Ցուցանէ ևս վտանգն Թագաւորաց. վէճս, խռովութիւնս, և տարաձայնութիւնս. նաև վնաս 'ի վաճառականութեան։

1921, 1949, 1977, 2005.

Ի մտանել արեգական 'ի Խոյի յառաջին կէտն՝ մարտի 21. Իշխան տարւոյն լինի Լուսաբերն ընդ Կոյսն նշանաւ, որ է տուն Փայլածուին։ Տարիս այս լիցի ամենառատ, և յոյժ պարարտ. առաւել 'ի դաշտաւէտ տեղին՝ քան թէ 'ի լեռնայինս. զի մայրեաց սպառնայ Կոյսն զժանգ, և զթըրթուր։ Գինին սակաւի, և պակասի. զի անապական մնայցէ գինին, բարւոք է յետ քաղել զխաղողն։ Միրգք ծառոց առատանան, թռչունք պակասին։ Սկիզբն ձմրան լինի միջակ, և անձրևաշատ. մէջն մռայլ, վերջն ցրտի։ Գարունն է բարեխառն, և գէջ։

Ամառն յոյժ տաք։ Աշունն ցրտապատ, և ցաւահար,



մանաւանդ տղայոց աչքացաւութիւն հանդիպի։ Վասն որոյ նաւարկութեան տիր աջողակ՝ և լաւ է. լինին պատերազմունք և հարուածք ծերոց, և չորքոտանի անասնոց։ Ասէ Դեմոկրիտոս՝ թէ եղիցին վնասակար կարկտահարութիւնք։ Աղաչիլի է զԱստուած, զի չիցէ երկրաշարժ։

Յայսմ ամի երևին դառնաշունչ կռիւք, և կոտորուածք մարդոց։ Թագաւորն, և իշխանքն անիրաւութեամբ դիցեն առամկաց զծանրակիր հարկս, յարիցեն բազում արք վատթարք, և փծունք, ըստ որում Արեգակն հակադիր հայեցուածով ընդ Հրատին, և Զօհալն յանկեան տասներորդի տան երկնից նշանակեն։ 'Ի վաղճանի՝ զի Հրատն գտանի տան երկնից նշանակեն, և յերրորդումն տան հակադիր հայցուածով ընդ արեգական, և թաւալումն է ցերեկեայ, ցուցանի այսր աղագաւ երկնից, և թաւալումն է ցերեկեայ. ցուցանի այսր աղագաւ լինիլ զարիւն ահեղ պատերազմունս, և զանհնազանդութիւն առ Թագաւորս, կորստեամբ հանդերձ միոյ ուրուք Թագաւորութեան։ Տեսանին ևս վէճք, խռովութիւնք, և բարեկամ վիճաբանութիւնք, որ լինին 'ի մէջ եղբարց, և բարեկամաց, և 'ի մէջ այնոցիկ, որք զընկերութիւն ինչ ունին, և 'ի մէջ նոցա տանն։

1922, 1950, 1978, 2006.

Իշխանն տարւոյն լինի Երևակն ընդ Կոյս նշանաւն, որ է տուն Փայլածուին. երբ մարտի 21. Արեգակն մտանէ յառաջին կէտ Խոյին։ Միջակ լինի այս տարի ամենայն ինչ. բայց վասն զօրութեան կուսին՝ անկանի ժանկ, և թրթուր 'ի սերմանիս. է վտանգ, և կասկած ընդ ծով ճանապարհ առնել։ Սկիզբն ձմրան լինի ցուրտ կարկտով հանդերձ. մէջն տաք, վերջն քաղցր։ Գարունն լինի ցուրտ մինչև ցՅունիս ամիսն։ Դեմոկրիտոս ասէ՝ թէ յաշնան լինին հիւանդութիւնք, այսինքն թանձրանան գետք, և լինին հիւանդութիւնք, այսինքն երեքօրեայ տենդ։

Յայսմ ամի բազմանան աւազակք. և որք ծնան ՚ի ներքոյ զօհալին, ունիցին փոքր հաւատ և բարեպաշտութիւն, որպէս զօհալն, յիններորդում տան երկնից ցուցանէ։ Նաև հրատն կցեալ ընդ մուշթարւոյն, և յեօթներորդում տան երկնից՝ ցուցանի լինել սաստիկ կռիւ, և կոտորած. մեռանիլ մեծահամբաւ, և հարուստ արանց. բայց տարին լինի քաղցր։ Դարձեալ՝ Լուսաբերն յեօթներորդում անկեան երկնից՝ ցուցանէ զաջողութիւն կանանց և իգաբարոյ արանց։

1923, 1951, 1979, 2007.

Յայսմ ամի երբ Մարտի 22. Արեգակն մտանէ յառաջին աստիճան խոյին, իշխէ Արեգակն ընդ Կշիռ նշանաւն, որ է տուն Լուսաբերին։ Յառաջակայ ամն լինի ամենառատ. բայց վասն զօրութեան կշռին՝ գուշակի ապականութիւն պտղոց. հարուած մարդկային մարմնոյ, և պատերազմ։ Իսկ առատութիւն մեծ՝ ցորենոյ, ձիթոյ, գինւոյ. ապրշմի, և այլ ամենայն մրգոց։ Սկիզբն ձմեռան լինի ցուրտ հանդերձ կարկտով, և վերջն բարեհաճոյ։ Գարունն ցուրտ մինչև ցՅունիս ամիսն. սպառնայ զանձրևս, կարկուտս, և գչորութիւնս, մեռանին բազումք եզինք։ Ասէ Դէմոկրիտոս՝ թէ գինին լաւ և մնացական լինի։ Տարին աջողակ ջրելոյ զորթս, և պճնելոյ զպարտեզս։ Ձատանայ մարախն. գուշակի պատերազմ։ Յայսմ ամի՝ տեսանին պատերազմունք. ամբոխք. հրկիզութիւնք. տարաձայնութիւնք, և չարութիւնք. թշնամութիւնք. և պղտորութիւն կրօնից, և կարգաց, ՚ի մարդիկս այլ և այլ տրտմութիւնք. ըստ որում ցուցանէ մեծ կցորդութիւն զօհալին, և մուշթարւոյն, որ եղև 24 Դեկտեմբեր ամսոյն, ՚ի հրային կենդանակերպում։ Այսորիկ կցորդութիւնք, կամ ծնունդք՝ զմեծ վնաս նշանակեն, և զկռիւս հաստատս. ընծայի մարդոց մահս



վատթարս։ Նշանի ևս այսու ծննդեամբ այլ և այլ ատելութիւն, և դաւ ՚ի մէջ իշխանաց, որով փոփոխին իշխանութիւնք իշխանաց։ Եւ այս լինի, զի փոփոխին վերոգրեալ ծնունդքն ՚ի ջրային եռապատկութենէ առ հրային. որ է յոյժ չարավնաս, զի մարդոց տրի բազում, և զանազան վնաս։ Եւ զի ֆրանցիա է ընդ իշխանութեամբ մուշթարւոյն, այր ազգաւ՝ ենթարկի նա յոլով վնասուց։

Նաև Հրատն գտանի յառաջնում տան երկնից, է նշան՝ զի յայսմ ամի լինի արենահեղութիւն։ Լուսինն մերձենայ Զօհալի մարմնոյն՝ ցուցանի մահ մեծ Տիկնոջ. հիւանդութիւն ռամկաց՝ պատճառեցեալ ՚ի ջերմութենէ, և ՚ի խոնաւութենէ. գլխացաւութիւն. կնկացաւութիւն, և այլ ամին նման ցաւ։ Թագաւորք և Իշխանք յարիցեն ընդդէմ միմեանց, և ռամիկ ժողովուրդն ամբոխիցի։

1924, 1952, 1980, 2008.

Երբ Արեգակն 21 Մարտի՝ մտանէ առաջին կէտն Խոյին, իշխան տարւոյն լինի Հրատն ընդ կշիռ նշանաւ, որ է տուն լուսաբերին։ Վասն որոյ տարին երևի ցամաք. և ստերջ։ Սկիզբն ձմեռան լինի ցուրտ, ջրային՝ ընդ սաստիկ հողմով, որ արմատաքի խլին ծառք. մէջն բարեխառն. վերջն ցրտիկ։

Գարունն անձրևոտ։ յԱմառն չորանան գետք, և պակասին խոնաւութիւնք։ Աշունն եղեմնոտ։

Պարտ է սակաւ հաց ուտել՝ և շատ գինի ըմպել. զի ասէ Դեմոկրատէս՝ առատանան գինիք, և ձիթունք։ Տարին է աջողակ կորեթ տնկելոյ, և զայգիս, բայց ոչ ծառս։ Մեռանին մեծամեծ անասունք, և ընտանի կենդանիք։ Ձատանայ տենտն։ Աղաչեսցուք զԱստուած, զի չիցեն երկրաշարժք։ Յայսմ թաւալութեան աշխարհի տեսանի զօհալն երկոտասաներորդում տան երկնից քառանկինի հայեցուա-

ծով ընդ արեգական, եւ Լուսինն կցեալ ընդ Հրատին յերրորդում տան երկնից, աւ են վատաբախտք։ Եւս ցուցանի ազգի մարդոյ վնաս. Նեղութիւն, և ձախորդութեան հանդիպիլ՝ մինչ զի ոչ ես տեսանի սէր, ոչ բարեկամութիւն, և ոչ ճշմարտութիւն, այլ հասարակ աւերումն։ Յայսմ ամի Հոկտեմբերի 12. 'ի 21. ժամու ընդ կիսոյ՝ խաւարի արեգակն, երբ ընդ լուսնոյն շրջի յութերորդում տան երկնից, 'ի Նեբբոյ կշիռ կենդանակերպին, վասնորոյ պուշակի մեռանելն մեծ և հզօր Թագաւորի ուրուք, կամ Իշխանի. լինի սով, և հասարակ մահտարաժամ, Վասնայսորիկ ասի՝ Թագաւորաց, և Իշխանաց, որք ընդ իշխանութեամբ Կշռին, կամ Խոյին ծնան, զի կրիցեն զանձկութիւնս, և առաւել նեղիցին քան զայլս։

1925, 1953, 1981, 2009.

Մարտի 21. մտանելով Արեգակն յառաջին աստիճան Խոյին, իշխան տարւոյն լինի Փայլածուն ընդ կշիռ նշանաւն։ Առաջիկայ տարին լինի ամուլ, և սակրջ աւերումն պտղոց, հարուածք մարդոց. մահ պիծակաց, և մեղուաց. ժանտաբեր ես ցաւ։

Սկիզբն ձմեռան ցրտիկ. մէջն բարեխառն վերջն գարնանային, յոլովապատ, սառնամանիք. անձրեւայորդ, և Թանձրրութիւն գետօրէից։ Գարունն անձրևոտ. ծառք վնասին յանձրեաց. վերջն 'ի տեղիս կարկտահարի։ Ամառն անձրեային, և մռայլապատ. պարտ է փութով վճարել զհունձ, զի մի աւերիցի։ Աշունն քամահար, և առողջարար, որթք զյոլով խաղողս առնեն, բարւոք և աջողակ է տնկելն ըղբոյսս և տեղափոխել զորթս. ցորեանն գիւրաւ ապականի, տարին անցանի առանց հիւանդութեան։ Ազաչեսցուք վասն պտղոց։ Տարիս է առատ անձրև. և լինի տարաձայնութիւն 'ի մէջ Իշխանաց։



Յայսմ ամի տեսանի աւերումն զաւառի, կամ քաղաքի միոյ. այլև անաջողութիւն, Նեղութիւն, և այլ բազում վնաս հանդիպիլ մարդոց։ Եւ զի Մառեխն գտանի յեօթներորդում տան երկնից, քառանկիւնի հայեցուածով ընդ փայլածուն. և Զօհալն յութերորդում տան երկնից, եւս քառանկիւնի հայեցուածով ընդ արեգական, վասնորոյ զուշակի մահ բիւր մարդոց. առաւել ես՝ տեսանի Նրբութիւն և խորամանկութիւն ոմանց, որք այլոց զխորխորատ փորելով, ինքեանք անկցին 'ի նոյն։ Հանդիպի զերութիւն. և Պրանտարկութիւն մարդոց՝ առաւել քան զչափն. 'ի մէջ Պարոնաց, և 'ի մէջ այլ եւ այլ նահանգաց երեւին տարաձայնութիւնք, կռիւք, եւ խռովութիւնք, մինչ զի ոչ եւս ճանաչի հաւատարիմն, բարեկամն։ Զօհալն ձախակի հայեցեալ 'ի Հրատէն, ցուցանէ զնենգութիւնս, մատնութիւնս, և սուտ խորհուրդս լինել, յորմէ պատճառէ 'ի բազում տեղիս հանդիպել աւերումն, եւ խանգարումն։

1926, 1954, 1982, 2010.

Յայսմ ամի՝ երբ Արեգակն 21 մարտի մտանէ յառաջին կէտն Խոյին, իշխէ Մուշթարին՝ ընդ կարիճ նշանաւն, որ է տուն Հրատին։ Յառաջիկայ տարիս է առատութիւն ցորենոյ, գինւոյ, ձիթոյ, ապրշմի, եւ ձկան: Իսկ վասն զօրութեան կարիճին, ձմեռն լինի բազմաձիւն, կոտորուած անասնոց, որք յանդեայս արածին, ձմեռան մէջն բարեխառն, և քամոտ. վերջն զէջ, եղեմոտ, խաւարչուտ, և ցաւագարութեամբ խառն։ Ամառն լինի նման գարնան։ Տարիս է կասկածոտ վասն յղութեան կանանց։ առատութիւն մրգաց։ Ասէ Դէմոկրիտոս՝ թէ յայսմ ամի շատանան գետք, և կարկուտք նօսրանան։ Աշունն ջրային, ձիթունն լինի ըստ բաւականութեան, սոպէս միսն, և բթանն. գուշակի պատերազմ, որոտմունք եւ յամառան եղանակին։

Հրատն գտանի 'ի տասներորդում տան երկնից. ուստի բազում կոտորուածք, սաստիկ պատերազմ, և հիւանդութիւն, իսկ և սակաւ հաւատարմութիւն 'ի մէջ մարդոց։ Լուսաբերն 'ի մէջ երկնից, և շառաւղաբորբոք յարեգակէն, ցուցանէ զմահ Թագաւորի. զնոյն ցուցանէ Հրատն ընդ Նշանին 'ի մէջ երկնից։ Մուշթարին յութերորդում տան երկնից՝ թուի թէ պատճառէ զյանկարծական մահ. զի է նոյն մուշթարին կցեալ ընդ փայլածուին՝ ցուցանէ զփոփոխական բարս վաճառականաց։ Մահուամբ հարին երեխայք, ըստ որում նշանակէ Փայլածուն յութերորդում տան երկնից, լինին զանազան հիւանդութիւնք. հարուածք անասնոց, և վնաս ծառոց, և պտղոց։

Ժողովուրդք տուժանս կրեսցեն 'ի տերանց. հողն ոչ բարւոք պտղաբերէ, և ամենայն խոպանութիւն երևի միջակօրէն. ըստ որում ցուցանէ լուսինն կցեալ ընդ երևակին, և երևակս այս 'ի վեցերորդում տան երկնից, ևս լուսաբերն տան երկնից, և առիւծ կենդանակերպն 'ի ժամագէտ տեղւոջ։

1927, 1955, 1983, 2011.

Երբ արեգակն 'ի Մարտի 21. մտանէ 'ի յառաջին աստիճան Խոյին, Լուսաբերն լինի իշխան տարւոյն ընդ կարիճին, որ է հրատի տունն։ Յառաջակայ տարիս լինի յոյժ պարարտ, և առատ՝ ցորենով, և այլ պտղովք։ Սկիզբն ձմեռան լինի ցուրտ, ընդ կարկտաւ. մէջն տաք. և վերջն բարեհաճոյ։ Գարունն լինի Յունիսի ամիսն ցուրտ. սաստէ ևս անձրևս, և որոտմունս. բայց յետոյ պակասին ջուրք յաղբերաց, վասնորոյ մեռանին շատ եզինք։ Ասէ Դեմոկրիտոս՝ թէ յաշնան աճին գետք, և լիցին հիւանդութիւնք։ Աղաչեա զԱստուած, զի չիցէ մահտարաժամ։ Պարտ է լինիլ սակաւակեր, և շատախուսում գինւոյ. 'ի սկսանիլ ձմեռան



անձրևէ, ձիւնէ աւելի քան զչափն։

Յայսմ ամի շատանայ տենդն, և այլ հիւանդութիւն 'ի ջերմութենէ պատճառեցեալ, ըստ որում լուսնթագն վեցերորդում տան երկնից նշանակէ։ Դարձեալ, տեսանի մեծ հարուած՝ մանաւանդ ծերոց, և երեխայից. կանանց աւերումն, որպէս հրատն կցեալ ընդ երևակին, և քառանկիւնի հայեցուածով ընդ շեմսին. փայլածուն շառաւղաբորբոք յարեգակնէն, և քառակուսի հայեցուածով ընդ մառեխին, այլ և վեցերորդում տան երկնից. լուսաբերն կցեալ ընդ տուտ վիշապին, և լուսինն եդեալ յութերորդում տան երկնից, իբրաւապէս զուշակեն. Յարիցեն վիճմունք, և կռիւք այլ և այլ արանց ընդդէմ իւրեանց Թագաւորին։ Եւս անկցի տարաձայնութիւն 'ի մէջ եղբարց, և սիրելեաց, որպէս ցուցանէ հրատն կցեալ ընդ երևակին, և քառակուսի հայեցուածով ընդ արեգական՝ յերրորդում տան երկնից։ Տիրեն նենգութիւն, և խռովութիւնք 'ի մէջ Գրագրաց և Վաճառականաց, ոյր պատճառի հանդիպի նոցա մեծ դժուարութիւն, և նեղութիւն, ըստ որում ցուցանէ Փայլածուն շառաւղաբորբոք յարեգակնէն, և քառանկիւնի հայեցուածով ընդ հրատին։ Արքունի սպասաւորաց լինի մեծ վնաս, և նեղութիւն, զի տէրն տասներորդ տան է փայլածուն, որ քառանկիւնի հայեցուածով, և մասնակի հայի զհրատն։

1928, 1956, 1984, 2012,

Յորժամ մարտի 21. արեգակն յառաջին կէտն Խոյին մտանէ, Իշխան տարւոյն լինի նոյն Արեգակն ընդ Աղեղնաւորին, որ է տուն Լուսնթագին։ Յառաջիկայ տարին լինի պարարտութիւն ցորենոյ. և այլ թեթևագին իրաց։ Սկիզբն ձմեռան բարեխառն լինի, և Չրային, մէջն յորդութիւն գետօրէից. վերջն ցուրտ, և քամի։

Գարունն հարաւային, և անձրևային։ Ամառն բարեխառն՝ հով՝ և զով, կանուխ հաւաքել պարտիս զպտուղս, զի մի աւերիցին անձրևաւ։ Աշունն հաւասար հնչելոյ զտաբեկան հողմս. պտուղք լինին բարեհամք, և դիւրահասք. ճռաքաղութիւնն է միայական. և այլ ծառք պարարտաբերք լինին։ Տնկելոյ զտունկս լաւ է։ Մեռանին մեծամեծք անասունք, և շատ շունք։ Ծովն ալեծփի, տկարութիւն երեխայից. յետ քայլէ շրջան տարւոյս։

Յայսմ ամի տեսանի բազում արեան հեղութիւն, և զանազան վնասահարութիւն, զի Զոհալն գտանի ընդ տուտ վիշապին, և նոյն Երևակն երևի յառաջնում տան երկնից, վասնորոյ լինին պատերազմունք, սպանութիւնք, և վտանգ Թագաւորաց. վրճմունք նս, խռովութիւնք, տարաձայնութիւնք, և վնասք 'ի վաճառականութեան։ Զնոյն գուշակէ Հրատն ընդ Լուսնթագին կցեալ՝ և քառանկիւնի հայեցուածով ընդ Երևակին, եղեալ և՛ յանկեան երկրի։ Մարդիկք կազմիցին ճանապարհս առնելոյ 'ի հեռի աշխարհ. և չուեսցեն 'ի հայրենեացն վաճառականութեան աղագաւ, ըստ որում Փայլածուն յերրորդում տան, Լուսինն յիններորդում տան երկնից նշանեն. զի փայլածուն, և լուսինն իշխեն 'ի վերայ ճանապարհորդաց, Նաւորդաց, և վաճառականաց։

1929, 1957, 1985, 2013.

՚Ի մտանել արեգական յառաջին աստիճան խոյին լուսինն ընդ աղեղնաւորին, որ է տուն լուսնթագին. Յառաջիկայ ՚ամն է պարարտ միջակօրէն. զի ոչ անձրևէ քան զչափն աւելի։ Ձմեռն լինի բարեխառն մէջն պէջ, տղմոտ, և քամոտ. վերջն յորդութիւն ջրոց. կարկտաք, և ձիւնք, զկնի ելանելոյն շնիկ աստեղն, երևի ջերմութիւն, և ցաւահարութիւն։ Տարեկան քամիք հնչեսցեն։ Գուշակի երկրա-



շարժութիւն, դաշտայինք առաւել պարարտաբերք իցեն՝ քան զմայրիս, ցորենով, ձիթով, գինով, և այլ պտղովք։ Տարիս է աջողակ վասն փոքր անասնոց, բայց ձախորդ վասն մեծամեծ անասնոց։ Յաշնան ժամանակին երևին գլխացաւութիւնք, և աչացաւութիւնք։ Աղաչեմ զԱստուած, զի սառն պաղ ոչ վնասիցէ պտղոց. ևս՝ զի յամառն եղանակին ոչ իցէ մեծ հիւանդութիւն։

Լուսնթագն յառաջնում տան երկնից՝ նշանակէ զառողջութիւն մարդկային անդամոց։ Երևակն 'ի տասներորդում տան, և տուտ վիշապին կցեալ ընդ հրատին, և ասացեալ հրատս 'ի շարժումն կենդանակերպում, է նշան արիւնահեղ պատերազմաց, և կոտորուածոց։ Թագաւորք՝ և Իշխանք զանտանելի հարկս դիցեն 'ի ժողովրդեան, և այլ անհաճոյ և զանիրաւ արարս ցուցցեն։ Երևին աւազակք, և գողք այնքան, մինչ զի ճանապարհորդք ոչ իցեն անահք, և անկասկածք. որպէս հրատն յիններորդում տան երկնից ընդ տուտ վիշապին ցուցանէ։ Եւ զի ասացեալ հրատն գտանի յԵրևակի տանն, և Երևակն ոչ Հրատին, ուստի կարծի թէ՝ բանտք բռնութեամբ բանայցին, և բազումք ելցեն 'ի բանտից։ Փայլածուն յերկոտասաներորդում տան երկնից՝ նշանակէ զանկումն Վաճառականաց, և Իմաստնոց յառաջին փառացն, և յառաջին պատուոյն։

1930‘ 1958, 1986, 2014.

Յորժամ արեգակն .ի մարտի 21. մտանէ յառաջին կէտն Խոյին. իշխան տարւոյն է Մառեխն ընդ այծեղջերն, որ է տուն Երևակին։ Տարիս յառաջիկայ լինի ցամաք. անհուն պատերազմունք։ Ձմեռն անձրևային, և առատութիւն մարախի. զամ բոլոր հիւսիսային, և քամոտ՝ 'ի տեղիս տեղիս։ Զկնի զարնանամտին երևի մահ տարաժամ. մշտակայ անձրևք. յորդութիւն, և թանձրութիւն գետոց։ Ամառն բա

ընխառն. և առողջարար։ Աշունն քամոտ, և ջերմ. ցաւա-
հարութիւնք, գլխացաւութիւնք, և իջուածք. հազք մանա-
ւանդ ՚ի լեռնային տեղիս։

Հայցեսցուք յԱստուծոյ զի չիցէ պատերազմ։ Իմաստա-
սէրն Դեմոկրիտոս ասէ, թէ գինիքն լինին բարեհամք, և բո-
լոր տաքին աջողակ. կանխեմ զհաւաքումն պտղոց սակս
անձրևաց։ Երևակն է յանկեան եօթներորդին տան երկնից.
ուստի թուի՝ թէ լինին կռիւք, կոտորուածք. նոյն երևակն
կցեալ ընդ լուսաբերին՝ ցուցանէ զմահ անուանի, և հա-
րուստ տիկնոջ։ Լուսինն կցեալ ընդ գլուխ վիշապին՝ զու-
շակի մահ արանց զօրութեան արժանեաց. աւերումն, և
վնաս պտղոց։ Ձէմսն է յիններորդում տան երկնից, ուստի
Թագաւոր մի արասցէ զճանապարհ. լինին որպէս կարծի,
ահագին երկրաշարժք, զի հրատն է ընդ լուսնոյն։

1931, 1959, 1987, 2015.

Յորժամ 21. մարտի ամսոյն՝ արեգակն յառաջին կէտն
Խոյին մտանէ. իշխան տարւոյն լինի Փայլածուն ընդ այծ-
եղջեր, որ է տուն զօհալին։ Յառաջիկայ ամն է երաշտ,
և ցամաք. խռովութիւն մարդոց. կոտորուածք մեծամեծ
անասնոց. աջողակ մանր չորքոտանի կենդանեաց. սակաւ
ձէթ. շատ գինի, և միրգ. Սկիզբն ձմեռան ցուրտ. մէջն
անոյշ, վերջն հողմակոծ։ Գարունն ջրառատ, ցուրտ, և ե-
ղեմնահար։ Ամառն շատ անձրև վասն սաստիկ հողմահո-
սութեան. բաժին ինչ ցորենոյն, և արտորէից վնասի.
ուգէք, և հեղեղք ջրոց։ Յաշնան հնչեն ջրածին քամիք։
Հայցեսցուք յԱստուծոյ, որ չիցէ սաստիկ տենդ տղայոց, և
տղամարդոց։ Եղեամն, որ է սառուցեալ ցօղ՝ ՚ի բազում տե-
ղիս վնասէ խաղողոյ. յարտորայս գայցեն գազանք անտառի,
և թռչունք։ Աղօթեսցուք առ Աստուած, մի զուցէ երևի-



ցի մահտարաժամ, երկրաշարժութիւն, և կայծակնահա-
րութիւն։

Յայսմ ամի արեգակն է ՚ի վեցերորդում տան երկնից.
ուստի սաստիկ հիւանդութիւն, ցաւագարութիւն, մանա-
ւանդ ՚ի յաչս. հարուածք, և կոտորուածք անասնոց. պա-
կասութիւն ձիթոյ. զի կշիռն է ժամագէտ։ Փայլածուն ա-
ընեղական, և կցեալ ընդ երևակին՝ ցուցանէ զվնաս մեծ,
և պտուժանս հանդիպիլ Թագաւորին, և արքունի Գրագրաց,
ատատանեան, և ցնծան Երաժիշտք ընդ Գուսանաց. Լուսա-
բերն յեօթներորդ տան երկնից է, նշանակէ զաջողութիւն
մեծ վասն կանանց, և իգաբարոյ արանց. բայց լրակի ցու-
ցանէ զհարուածս ռամկաց, ըստ որում զօհալն հինգերորդում
տան երկնից նշանակէ։ ՚Ի վախճանի՝ լինելոց է մեծ կռիւ,
սպանութիւն, և հեղումն արեան. մեծ բաժին բանտարգե-
լոցն փախիցէ, ըստ որում հրատն յանկեան երկրի, ՚ի տան
զօհալին, առանց սորա հայեցուածոյն առ հրատն՝ զուշա-
կութեամբ ցուցանէ։

1932, 1960, 1988, 2016,

Երբ որ արեգակն մարտի ամսոյն 22. մտանէ յառա-
ջին աստիճան Խոյին. իշխօղ տարւոյն լինի Լուսաբեր մո-
լորակն ընդ այծեղջեր կենդանակերպին, որ է օթևան Ե-
րևակին։ Այս առաջակայ տարիս լինի շատ առատութիւն
ցորենոյ, գինւոյ ապրշմի, և այլ մրգաց։ Սկիզբն ձմեռան
լինի ցուրտ ընդ կարկտով. մէջն տաք. և վերջն բարեխառն։
Գարունն յուրտ մինչև ցՅունիսի 21։ Ամառն երբեմն ան-
ձրևէ, և որոտայ։ Ասէ Դեմոկրիտոս իմաստասէրն. թէ յԱշ-
նան ժամանակին լինի առատութիւն աղբերաց, և երևին
հիւանդութիւնք։ Պարտիմք զգուշանալ ՚ի շատակերութենէ,
և գինարբութեամբ առաւել։

Յայսմ տարւոջ՝ զի Լուսնթագն յետաքայլ, և ողջու

գտանի, և վատաբախտ յԵրևակէն. է նշան՝ թէ Թագաւորն պատժիցէ զիւր սպասաւորսն. ևս՝ է նշան թէ լինելոց են մեծամեծ պատերազմունք. զի լուսնթագն գտանի յութերորդում տան երկնից։ Դարձեալ՝ հրատն քառանկիւնի հայեցողութեամբն ընդ Երևակին, և Լուսնթագին, նշանակէ յոլով պատերազմունս, և զինուորական կործանմունս։ Եւ՝ քանզի ասացեալ հրատն ընդ լուսնթագին տիրեն տասներորդ տան երկնից, է նշան՝ թէ Թագաւորն վասն պատերազմի՝ ելցէ յիւր երկրէն, և արասցէ ճանապարհս։ Դարձեալ՝ զի հրատն է հայեցեալ 'ի լուսնոյն քառանկիւնի հայեցողութեամբ ցուցանէ զանազան հիւանդութիւնս մարդոց. հանդիպիլ տաքութեան, և չորութեան։ ևս՝ սով, և մահտարաժամ, սատակումն կենդանեաց։

Ռամկական ժողովուրդք վնասին 'ի տերանց, ըստ որում ցուցանէ լուսինն կըցեալ ընդ Երևակին։

Եւ՝ զի Արեգակն գտանի յերրորդում տան երկնից, նշանակէ՝ թէ Թագաւորն տռաւել ընդ ինքեան զարս կրօնաւորս, առնելոց է ճանապարհս։

1933. 1961, 1989, 2017,

Երբ արեգակն մարտի 21. մտանէ յառաջին աստիճան Խոյին, տանուտէր տարւոյն լինի Երևակն ընդ ջրհոսին։ Առաջիկայ ամն լինի միջակ, առատ ընչիւք. ուրախութիւն 'ի մէջ մարդկան, մահ անասնոց, և թռչնոց։ Բոլոր տարին հընչեն հարաւային հողմունք։ Սկիզբն ձմեռան լինի քամոտ. մէջն բարեխառն. վերջն սառնամանիք, և հողմունք։ Գարունըն լինի բարեխառն, և թեթև անձրև։ Ամառն ևս բարեխառն, զի անոյշ հողմունք հնչեն, լինի առատութիւն պըտղոց, բայց միրգքն ապականի։

Յաշնան երևին տկարութիւնք, մանաւանդ երիտասարդաց. և 'ի մէջ կանանց ջրհոսութիւնք աչաց, որով մե-



ռանին ոչ սակաւք։ Լինին ևս՝ ըստ կարծեացն Դիմոկրիտոսի, վնասաբեր կարկուտք։ Տէր Աստուած փրկեսցէ զմեզ 'ի տարաժամ մահուանէ. Ամէն։

Յայսմ ամի թուի թէ՝ ռամիկք կրեսցեն 'ի տերանց իւրեանց բազում ծանրութիւնս, և բռնութիւնս։ Եւ՝ ծանըր տկարութիւնս սակս արեան ապականութեան։ Մահ արանց այնոցիկ, որք ընդ երևակաւն ծնեան, և որք անցեալ են ամօք. ըստ որում ցուցանէ երևակն կցեալ ընդ արեգական։ Եւ՝ գտանի ընդ գլխոյ վիշապին, ոյր աղագաւ նշանակէ զոչխարաց, և զայլ անասնոց մահս։ Դարձեալ՝ լուսնթագն գտանի ընդ տուտ վիշապին; և ընդ վընասակար գիրս գետեղեալ՝ ցուցանէ զմահ մարդոց. տկարութիւն, անհաւատարմութիւն, աղքատութիւն, տենդ, և ջերմեռանդ ախտ։ Եւ՝ զի արեգակն գտանի յերկոտասանորդում տան երկնից, նշանակէ թէ Թագաւորք ունիցին՝ զնեղութիւնս, և ընտանիքն զանազան խորհուրդս դիմակացութեամբ ընդ Թագաւորաց։ 'Ի վաղճանի՝ զի փայլածուն գտանի 'ի մետասանորդում տան երկնից, նշանակէ՝ թէ Թագաւորն հրաւիրէ, և պատուէ զարս իմաստունս։

1934, 1962, 1990, 2018.

Յորժամ արեգակն Մարտի 22. մտանէ յառաջին աստիճան խոյին. իշխան տարւոյն լինի Արեգակն ընդ Ջրհոս կենդանակերպին։ Տարին լինի առատ ցորենով, գինով և այլ թեթևագին ընչիւք, յորդ անձրև, մահ թռչնոց՝ յարևելեան ձմեռնային կողմունս. զի լինին յայնկոյս կողմունս ցուրտ մառախլապատ, և հեղեղք ջուրց։ Զկնի գարնանամտին 'ի խիստ, և 'ի լեռնային տեղիս անկանի կարկուտք. բայց պտղաբերութիւն առատ։ Բոլոր տարին լինի առողջարար՝ բաց 'ի յաշնանային եղանակէն։ Պարտ է կանուխ քաղել զպտուղս, զի մի վնասիցին յանձրևաց։ Յայսմ ամի՝ պտուղք

և միրգք լինին բարեհամք, յոլովածուծք. փութահասք, և մնացականք՝ զկնի պտղաքաղութեան. ծառք պարարտք, և պտղալից. բարւոք է տնկելն, մահ մեծամեծ կենդանեաց աչ սակաւ ակնկծութիւն ծովու. ուժգին, և սաստիկ հողմունք։ Ծանրագնաց թուի յառաջիկայ տարիս՝ քան զհասարակն, և զսովորականն։

Յայսմ ամի բազում աւազակք եղեն. և 'ի մարդս ոչինչ բարեպաշտութիւն գտանի, ըստ որում երեւակն ցուցանէ յիններորդում տան երկնից։ Եւ զի է հայեցեալ քառանկիւնի հայեցողութեամբ 'ի հրատէն՝ զինուորք վիճեսցեն ընդ միմեանս, և փոփոխին 'ի տեղւոջէ միոյ յայլ տեղիս։ Եւ 'ի պատճառէ՝ զի սասցեալ հրատն գտանի յերկոտասաներորդում տան երկնից, նշանակէ զբազմաց դանակաւ, և սրով սպանումն։ Եւս զի արեգակն գտանի յիններորդում տան երկնից, և կցեալ ընդ գլուխ վիշապին, ցուցանէ՝ թէ թագաւոր մի առնէ զճանապարհ. ցուցանէ եւ՝ զմահ հզօր արանց, և այլ մարդոց. Զքասյին Թագաւորքն, որք բռնութեամբ կամիցին թագաւորել, և զայլ իշխանութիւն ընդ տերութեամբ ածել։ Դարձեալ՝ լուսաբերն և փայլածուն բախտագուրկք, և այրեցեալք, նշան է՝ որ վնաս ինչ հանդիպի ռամկաց 'ի թագաւորէն, և Թագաւորն վնասի 'ի ռամկաց։

'Ի վախճանի՝ տասներորդ տան իշխօղն է անբախտ, և մինչ այրեցեալ եւ գտանի յանկեալ տան. ցուցանէ զանձկութիւնս վշտակրութիւնս, և զվնաս արքունական պաշտօնէից։

1935. 1963, 1991, 2019,

Երբ արեգակն մարտի 21, մտանէ յառաջին աստիճան խոյին. իշխօղ տարւոյն լինի Լուսինն։ Եւ 'ի պատճառէ՝ զի լուսինն գտանի 'ի մէջ երկնից, 'ի տան լուսնթագին, որ է ձուկն. Յառաջիկայ ամն լինի առատութիւն ցորենոյ, և գինւոյ յաճախ կարկուտ յապառաժ և 'ի լեռնային կողմունս.



պտուղք առատանան. գետք յորդանան, տարին բոլոր է առողջաբար՝ բաց յաշնան եղանակէն, յորում գուշակի մահ կանանց։

Ասէ Դիմսկրիտէս՝ ծնանին շուրջ զբերանովն ծորակք. ուստի պարտին՝ մանաւանդ երիտասարդք ըմպել զգինի, և ոչ զջուրն միայն՝ 'ի գարնան եղանակին. ձիթենիք ոչ առատ երեւին։

Յայսմ ամի 'ի պատճառէ՝ զի լուսնթագն գտանի յերրորդում տան երկնից՝ նշանակէ զբարեբախտութիւն, և զաջողութիւն մարդկան։ Եւ զի կշիռն գտանի ըն բախտի կիտումն, նշանէ ձիթոյ նուազութիւն։ Եւս՝ զի հրատն կցեալ երեւի ընդ գլուխ վիշապին, ցուցանի թէ մարդիկ առցեն զզէնս, և ընդ միմեանս վիճեսցեն։ 'Ի վախճանի՝ զի երեւակն գտանի յանկիւնոջն, ցուցանէ զսաստիկ պատերազմ, և զուժգին կոտորուած։

1936, 1964, 1992, 2020.

Յորժամ 21. մարտի ամսոյն։ արեգակն յառաջին աստիճան խոյին մտանէ. իշխօղ տարւոյն լինի Փայլածուն. վասն զի գտանի 'ի միջի երկնից 'ի տան լուսնթագին, որ է ձուկն, յիւրում բարձրութեան, և յիւրում յառաջնում հայեցողութեան։ Վասնորոյ ասելի է. յայսմ ամի գուշակի կատարեալ հաւաքումն ցորենոյ, և մահ մեղուաց ախտ ժանտաբեր, և պտղոց ապականութիւն։ Սկիզբն ձմռան անձրեւային՝ հանդերձ որոտմամբ, և ցրտով. մէջն բարեհաճոյ վերջն սաստկութիւն սառանց, անձրեւաց, և գետոց։ Գարունն անձրեւային, և վնասակար ծառոց մինչև ցաւարտն. 'ի տեղիս տեղիս լինին կարկուտք։ Ամառն անձրեւային, և մառախլապատ։ Պարտիմք կանխել զհունձսն, զի մի ապականիցին։

Աշունն՝ հողմաշատ, և առողջաբար. որթք իցեն բազմախաղողք, է բարւոք տնկելն զծառս, և զարմատս, ցո-

*ըեանն դիւրաւ ապականի։ Պարտ է աղաչել զԱստուած վասըն պտղոց. ևս՝ զի չիցէ խռովութիւն 'ի մէջ իշխանաց։*

*Յայսմ տարւոջ տեսցի սաստիկ մահ մեծանուն, և հարուստ կանանց. զի երևակն և լուսաբերն գտանի կցեալք։ Դարձեալ, լուսնթագն յառաջնում տան երկնից՝ նշանակէ զազատութիւն մարդոց յամենայն հիւանդութիւնէ մարմնոյ։ Պատահեսցին սաստիկ պատերազմունք՝ և սպանմունք։ Մանաւանդ 'ի Թագաւորս, և 'ի յօգնիչս իւրեանց. ըստ որում ցուցանեն երևակն յանկեան, և հրատն յութերորդ տան երկնից։*

*Վերջացեալ այս 28. ամաց, և վերոգրեցեալ Թուականացն, դարձեալ սկսիր յսկզբանէն զի մշտնջենաւոր շրջան Արեգական է։ միայն փոխեա՛ զԹուականս Քրիստոսին, ասելով՝ 2021. և այլն ըստ կարգին։*



*Մշտնջենաւոր գուշակումն սակս հողմոց, եւ եղանակաց Տարւոյն՝ յԱմսէ յԱմիս։*

*Յունվարի առաջին օրն ցուցանէ զօդ, և զեղանակ Օգոստոս ամսոյն. եթէ իցէ օդն պարզ, և ջինջ, յառաջիկայ տարին լիցի պարարտ. եթէ արևելեան քամին հնչէ, լիցի մահ անասնոց, թէ արևմտեան, մահ մեծամեծ արանց, եթէ հարաւ, մահ ռամկաց. և թէ հիւսիս հնչէ, տարին լիցի անբեր՝ ամուլ՝ և ըստերջ։ Որպիսի իցէ երկրորդ օրն, նոյնպիսի Սեպտեմբեր ամիսն. և այսօր օդն երևի անհաստատ։ Երրորդ օրն օդն փոփոխի, ցուցանէ զբնութիւն Հոկտեմբեր ամսոյն։ 4. կէս ձմռան. հարաւ փչէ. անձրև, և գուշակէ զեղանակ Նոյեմբեր ամսոյն։ 5. ցուցանէ զորպիսութիւն Դեկտեմբերի. երևի ևս հողմախառն մրրիկ։ 6. 7. 8, երբեմն արևմուտ հնչէ։ 9. հարաւ, անձրև։ 10. 11. 12. օդն փոխի, 13 հողմակոծութիւն։ 14. 15. 16. 17. հարաւ, անձրև։ 18. 19. ձմռան եղանակ։ 20. 21 Արեգակն մտանէ 'ի ջրհոսն։ 22 օրն ամպոտ։ 23. մինչև 27. ալէկոծութիւն։ 28. 29. հարաւ։ 30. 31. մրրկախառն օդ։*

*Փետրուարի առաջի օրն արևելեան քամին փչէ. երբեմն հարաւ ընդ եղեմամբ։ 2. 3. առիւծն և բնաբիկն բոլորովին ցածանան. հնչէ արևմուտ. կամ հիւսիս։ 4. 5. Դլփինն ընդ ջրհոսին ցածանայ, անձրև. մրրիկ. կայծակ. գառան արևմտեան քամիք։ 6, 7. հողմային։ 8. 9, հողմակոծութիւն։ 10, 11, քամին արևմտեան փչէ։ 12, 13. աղեղնաւորն ցածանայ. քամոտ օր։ 14, յերեկոյեան ըմպանակ աստղն երևի. քամիք մինչ 'ի 19. 20. 21։ Արեգակն մտանէ 'ի ձուկըն. երբեմն հողմակոծութիւն։ երբեմն փչէ հիւսիս մինչև երեսուն օր։ 22. երևի տուտ արջին. օրն ցուրտ. զանազան քամի. անձրևային։ 23, սլաք աստղն երևի. է ժամանակն տնկելոյ զոլթս, ձիթենիս. ծնեբեկս, և զայլս ունտս.*

24. ջրհոսն մնասէ. և անձրևէ։ 25. տուտ արջին նլանէ, օրն անձրևային։ 26, մինչև 'ի վերջ ամսոյն առատօրէն հնչէ հողմն արևմտեան, որ բարեխառնօրէն գէջ է, և ջըրային, անձրևածին, և որոտաբեր ըստ եղանակին։

Մարտի առաջի օրն փչէ հարաւ. երբեմն ևս եղեմամբ, և ձեամբ։ 2. ճռաքաղ աստղն երևի. հնչեն հիւսիսայինք։ 3. 4. հոսէ հարաւ. երբեմն արևմուտ. օրն է ցուրտ. 5. քնարիկն ընդ հողմով երևի։ 6. արծիւ աստղն ընդ ուժգին հողմով ցածանայ։ 7. առիւծն կանուխ ելանէ։ 8. 9. այծեղջիւրն երևի, անձրև, և հողմ։ 10, 11. 12. փեգաղ աստղն է. հնչէ հիւսիս, հողմ և անձրև։ 13. ձուկն հիւսիսային երևի. քամիք հիւսիսոյ փչեն։ 14. ելանէ նաւապետ աստղն պանդխտի ծիծեռնին. փչեն զանազան քամիք. յայսմ ժամանակի զայգիս, և զբուրաստանս յօրինեն։ 15. 16. կարիճն ցածանայ. նշան ալէկոծութեան. արևմտեան քամին փչէ։ 20. 21, Արեգակն 'ի խոյն մտանէ, հիւսիս փչէ։ 22. 23. սկսանի երևիլ խոյն. անձրևային օդ. երբեմն ձիւնէ. և է գարնանային հաւասարակածու։ 24. 25. ձկունքն երևին, ձիւնէ։ 26. հողմածութիւն հանդերձ որոտմամբ: 27, 28, կարիճն ցածանայ. քամի. անձրև, և որոտ։ 29. 30։ հարաւ հնչէ, անձրև։ 31. քամի, և անձրև։

Ապրիլի առաջի օրն կարիճն ցածանայ՝ և է նշան ալէկոծութեան։ 2. 3, յամենուրէք օդն մառախլապատ. վերջիլեայ աստեղքն աներևութանան։ 4. 5. հնչէ հարաւ։ 6. անձրևէ։ 7. փչէ արևմուտ, և հարաւ ընդ եղեմամբ։ 8, վերջիլեայքն ցածանան, և լինի ցուրտ։ 9. 10. 11. հարաւայինք հնչեն, լինի հողմակոծութիւն։ 12. ցուրտ։ 13. կշիռն ցածանայ, և ցրտի։ 14. քամոտ. մրրիկ, և ջուր։ 15. 16. 17. 18. 19. ջրային։ 20. 21 մուտ Արեգական 'ի ցուլն. մէջ գարուն. ջրային։ 22. վերջիլեայքն երևին հարաւային քամիք հնչեն։ 23, քնարիկ աստղն երևի, և է նշան ալէկոծութեան։ 24, 25. 26. 27. լաւ օդ։ 28 հարաւ ընդ անձրևի։ 29. երևի այծիկն հնչէ հարաւ, երբեմն անձրևէ. 30. խեցգետինն ցածանայ յերեկոյին, և է նշան ալէկոծութեան։ Յայսմ աւուր է բարի պատուաստելոյ զծիթենիս և զայլ բոյսս։



Մայիսի 1. 2. ասի թէ՝ Արեգակն մնայ 'ի միում տեղւոջ, հիւսիսային քամիք հնչեն։ 3. չէնտաւր աստղն երևի, է նըշան ալէկոծութեան։ 4 5. նոյն աստղն զուշակէ զանձրև։ 6, 7. կարիճի կէսն ցածանայ. է նշան հողմակոծութեան. յառաւօտն երևին վերջիլեայ աստեղքն փչեն արևմտեան քամիք, բազմիցս անձրևէ։ 11. 12. 13. 14. քնարիկն յառաւօտն երևայ. է նշան ալէկոծութեան, է լաւ ժամանակ սըրբելոյ զկահս, և զըռպասս, չորացնելոյ զհնձեցեալ խոտս, և տնկելոյ զոստս ծառոց։ 15. 16. երևի ևս յառաւօտուն քնարիկն. հնչէ հարաւային կամ արևմտեան քամին. երբեմն անձրևէ։ 17. 18. 19. 20 նոյն քամիքն հնչեն ընդ ջրով։ 21. մուտ Արեգական յերկաւոր կենդանակերպն, հիւսիսային քամիք հնչեն, երբեմն հարաւ այսինքն ընդ ջրով։ 22. 23. 24. յառաւօտու ցածանայ տուտ արջին, և է նշան ալէկոծութեան։ 25. 26. 27, երևի այծիկն յառաւօտուն։ հիւսիսայինք հնչեն։ 28. հնչէ հարաւ։ 29 երևին վերջիլեայքն։ 30. 31. հողմակոծութիւն, է լաւ եղանակ՝ կրկին բրելոյ զայգիս և սափրելոյ զորթս։

Յունիսի 1. 2, Արծիւ աստղն երևի. քամոտ ժամանակ։ 3, 4. 5. փչեն հարաւային քամիք՝ հանդերձ անձրևաւ։ 6. հըռչեն հիւսիս, և անձրևէ։ 7. ցածանայ տուտ արջին. և արևմտեան քամիք տիրեն։ 8. դլփին աստղն սկսանի երևիլ։ 9, հնչէ հիւսիս, և անձրևէ։ 10. յերեկոյն երևայ Դլփինն. հոսէ արևմուտ. երբեմն թեթև անձրև գայ. է ժամանակ տըն-

կելոյ զօրթս, առաքելոյ յարօտ զանասունս։ 11. 12. հնչէ արևմուտ, օդն մըրկի ընդ որոտիւք։ 13. տաքութիւն սկսանի. երևի գլփինն. հնչէ հարաւ։ 14. երևի Հայկն, որ է Ճամփուրն։ 15. մըրկամըրոխ օդ. հնչէ հարաւ։ 16, ալէկոծութիւն. փչեն հիւսիսային քամիք։ 18. 19. հարաւ և արևմուտ փչեն։ 20. 21. Արեգակն մտանէ 'ի Խեցգետինն, ալէկծութիւն, է ամառնային Արևակացութիւն. ցերեկն սկըսանի կարճանալ, գիշերն երկարիլ։ 22 23 օձ, և շամփուրն երևին, և է նշան ալէկոծութեան։ 24, 25, 26. իշխէ արևմտեան քամին. շոք։ 27. 28. 29· ալէկոծութիւն. շուն աստղն երևայ։ 30. ցածանայ տուտ արջին ալէկոծութեամբ հանդերձ։ Եթէ յունիս 24. անձրևէ, վնասին ընկուզք. և հետևին 40. աւուրք անձրևաց, և եթէ պակասին անձրևք առատանան հունձք։

Յուլիսի ամսոյն 1. 2. 3 տիրէ արևմուտ, և լինի շոգ։ 4. յառաւօտուն ցածանայ պսակ աստղն։ 5. 6. խեցգետնի կէսն ցածանայ 7. 8. այծեղջեր կէսն ցածանայ։ 9. յերեկոյին ձուկ աստղն երևայ։ 10. իշխել սկսանին քամիքն։ 11. 12. հնչէ հարաւ։ 13 14. հիւսիս, և հարաւ փչեն։ 15. Նաւապետ աստղն երևայ հարաւ, և արևմուտ փչէ։ 16. 17. հիւսիս զուժէ։ 19. անհաստատ քամիք։ 20. 21. Արեգակն մտանէ յառիւծն. արևմուտ հնչէ. 22 հնչեն արևմտային քամիքն. իշխէ շնիկ աստղն, որ 'ի հնոցն կոչեցաւ շնիկ աստղ Արամազդայ։ 13. արծուին ցածանայ։ 24. փայլուն աստղն յառիւծոյ կրծին երևի, երբեմն ալէկոծութիւն։ 25 ջրհոսն սկսանի ցածանալ հարաւ, կամ արևմուտ հնչէ։ 26. շնիկ աստղն երևայ. տաք եղանակ։ 27, արծուին երևայ։ 28. 29. 30. 31. երևին փայլուն աստեղքն յառիւծոյ կրծին, արծուին խոնարհի, ալէկոծութիւն։



Օգոստոսի ամսոյն յառաջին օրն տարեկան քամիքն
հնչեն. հիւսիս ևս։ 2. 3. հարաւայինք փչեն։ 4. 5. առիւ-
ծոյ կէսն երևի, ալէկոծութիւն։ 6. քնարիկն երևի, տաք
է։ 7. ջրհոսի կէսն ցածանայ։ 8. 9. 10. 11. առիւծն երևի.
մռայլ. տաք։ 12. քնարիկն ցածանայ, քամի։ 13. 14.
Դլփինն ընդ նապաստակ աստղն ցածանան, հողմակոծու-
թիւն։ 15. 16. մթնապատ օդ։ 17. սկիզբն աշնան։ 18.
քնարիկն ցածանայ։ 19. դլփինն խոնարհի, ջեռէ միջակօրէն։
20. 21. մուտ արեգական 'ի կոյսն. հողմածութիւն։ 22. 23.
քնարիկն ցածանայ, պարզ կայ։ 24. վիրջիլեայքն երևան,
հիւսիս փչէ։ 25. տարեկան քամիքն փչեն։ 26. դլփինն ե-
րևի։ 27, ճռաքաղն երևայ, հարաւ փչէ. ալէկոծի, տուտ
արջին խոնարհի։ 28. վիրջիլեայքն երևան։ 29. արևմուտն
փչէ։ 30, ուսք Կուսին երևան. տարեկան քամիքն սպառին։
31. Անդրոմէդա աստղն երևի. հովիկ է։ 15. Յուլիսի ամ-
սոյն մինչև ցայսօր՝ պատուաստին, և աղբին բոյսք։ Եթէ
Օգոստոսի 10. պարզ օդ լինի, առատ, և լաւ գինի ցուցանի.
նոյնպէս և 15, որպիսի օդ իցէ 24. նոյնպիսի իցէ աշուն։

Սեպտեմբերի յառաջին օրն ջեռէ։ 2. Բէրէնիկ աստղն հա-
րաւային երևի, ջէռէ։ 3, անձրևէ, որոտայ։ 4. տուտ արջին
ընդ ճռաքաղին երևայ։ 5. քամիք իշխեն, անձրևէ։ 6. ձուկ
աստղն երևայ։ 7. ձուկն. և արծիւն ոչ ևս խոնարհին. այծն
երևայ, ալեկոծի։ 8 տուտ արջին քամով երևայ. որոտայ։
9. 10. 11 հարաւ, կամ արևմուտ փչէ։ 12. 13. տուտ ար-
ջին երևայ, անձրևէ։ 14. ծիծեռնիկն յայլ երկիրն չուէ։
15. 16. 17. տուտ արջին երևայ, հարաւ, կամ արևմուտ
փչէ։ 18. սումպուլ կուսին երևի. արևմուտ փչէ։ 19. ձկունք
երևան։ 20. 21. մուտ Ճէմսին 'ի Կշիռն, հասարակութիւն
աւուրց. յառաւօտուն ըմպանակ աստղն երևայ աշնանա-
մուտ, անձրևէ։ 22. խոյն խոնարհի. հարաւ անձրևաւ. կամ
արևմուտ փչէ։ 23. Նաւ աստղն խոնարհի. 24. կէնտաւրն.

հողմակոծութիւն ընդ ջրոյ։ 25. ջուր։ 26. 27. այծեամբ երևան, արևմուտ հնչէ։ 28. 29. վերջիլեայքն խոնարհին, ոչ ևս երևին։ 30. այծիկն երևի, հողմակոծութիւն։

Հոկտեմբերի յառաջին օրն հնչէ հողմն, երևին վերջիլեայք։ 2. նոյնպէս։ երեք, կառավարն խոնարհի. դառնայ արծիւն։ 4. անձրևաբեր բազմաստեղն երևայ. անձրևէ։ 5. պսակն երևայ։ 6. խոյի կէսն ընդ կարճին ցածանայ։ 7. այծեամբն երևան։ 8. փայլուն աստղ Պսակին երևայ. ամբոխի օդն։ 9. 10. վիրջիլեայք հողմով հանդերձ երևան։ 11. պսակն առաւօտուց երևի, ծովն խառնի։ 12. վիրջիլեայք հողմով երևան։ 13, 14 պսակն բոլոր առաւօտն երևայ ձմեռնային հարաւն փչէ. անձրևէ։ 15. 16. 17. հողմակոծութիւն, երբեմն անձրևէ։ 18. 19. արևմուտն փչէ։ 20. 21. մուտ Արեգական 'ի կարիճն, ծագել արևուն մտանեն վիրջիլեայքն. ալեկոծութիւն։ 22. ցածանայ տուտ ցլոյն. հարաւն հնչէ· երբեմն անձրևէ։ 23 իջանէ կարիճն։ 24. 25. վիրջիլեայք ընդ Չենտաւրին յառաւօտուն խոնարհին· 26. քամի. ալէկոծութիւն ծովու. ճակատ կարճին երևայ։ 27. 28. տուտ արջին խոնարհի քամով։ 29. Սևադէմ աստղն՝ որ է Կարսիոպէն ծածկի։ 30. 31. հայկն, կամ շամփուրն սկսանի ցածանալ. յերեկոյին քնարիկն երևայ. ալէկոծութիւն։ Է լաւ ժամանակ պատուաստելոյ. մաքրելոյ գրոյսս. ցանե, լոյ սերմանիս. սափրելոյ զորթս. վարելոյ, տնկելոյ, և սոցին նմանս գործելոյ։ Եթէ յայսմ ամսոջ տերևք ծառոց ոչ կանուխ ցցուին, մեծացուրտ ձմեռն հետևի· Եւ թէ տերևք ծառոց ցիրցանք իցեն, հետևեալ տարին ըստերջ, և առոյ ցիրցանք իցեն, հետևեալ տարին ըստերջ, և ամուլ անցանի։ Իմն ևս գայս ինչ, Արևելեան քամին է առողջարար, ջերմ. և չոր։ Արևմտեան՝ ցուրտ, և խոնաւ։ Հարաւայինն՝ ջերմ, և խոնաւ, և վնասարար։ Հիւսիսային հողմն միշտ է ցուրտ, և չոր։



Նոյեմբերի յառաջնում աւուր ամսոյն յառաւօտուն, վիրջիլեայքն ցածանան ընդ տուտ արջին, օդն անբոխի, անձրևէ։ 2. ցուրտ քամիք փչեն, անձրևէ։ 3· քնարիկն երևայ։ 4. 5. քամիք փչեն, անձրևէ։ 3. քնարիկն երևայ։ 4. 5 քամիք փչեն. անձրևէ։ 6. տուտ արջին ծածկի, օդն մառախլապատ։ 7. վիրջիլեայք, և հայկն ծածկին. քամի։ 9. օդն խռովի։ 10. սկիզբն ձմռան։ 11. վիրջիլեայք ծածկին։ 12. փայլուն աստղն կարճին երևի։ 13. վիրջիլեայք, և շամփուրն ծածկին յառաւօտուց· 14. կարիճն յառաւօտուց ցածանայ։ 15. 16 քնարիկն երևի յառաւօտուն, հողմ հնչէ· 17. օր հողմակոծութեան։ 18. հայկն, և քնարիկն երևին հողմակոծութեամբ։ 19. եղջիւրք ցլոյն ընդ արեգական ցածանան. հողմակոծի։ 20. 21 մուտ շէմսին յաղեղնաւորն սաստիկ հողմակոծութիւն։ 22. ջրհոսն, և ձիւնէ։ 23. եղջիւր ցլոյն ցածանայ։ 24. յառաւօտուն ծագի շնիկն։ 25. 26. հնչեն ցուրտ քամիքն։ 27 28. 29. շունն ցածանայ, օդն մառախլապատ. հողմ. ջուր։ 30. շամփուրն ցածանայ. քամի, անձրև։ է լաւ ժամանակ ցանելոյ, և ջրելոյ զորթս, բայց յաւուրս ջերմայինս. և թէ գիշերային ջէռ՝ խիստ լաւ է ճրագով գործ դաշտի, կամ այգեաց 'ի կատարածելն յառաջ քան զկաղանդ դեկտեմբերին։ Եթէ յետ մտնելոյ Արեգական յաղեղնաւորն՝ որոտայ ամպն, լինի առատութիւն մրգաց 'ի լեռնականս, և պակասութիւն, 'ի ձորային տեղիս։ Որպիսի իցէ չորեքտասաներորդ օրն, նոյնպիսի լիցի հետևեալ Մարտ ամիսն։ Եթէ նոյեմբերի 11. անձրևէ, կամ ամպէ անհաստատ ձմեռն հետևի, եթէ իցէ պարզ, է նշան ցրտութեան, և թէ զկնի անձրևին ցրտի օդն, նշանակէ զստերջութիւն։

Դեկտեմբերի յառաջին օրն պղտոր, բոլոր հայկն աներևութանայ յառաւօտուն։ 2. շունն ցածանայ յերեկոյին՝ քամի։ 3. ալէկոծեալ օրն, և ամպ, 4. 5. քամի. անձրև.

աղեղնաւորն խոնարհի։ 6. կարիճի կէսն երևայ։ 7. 8. արծիւն երևի. կարճի բոլորն ևս. քամի։ 9. 10. 11. յառաւօտուն շունն երևի. ոչ գոյ քամի. մռայլ։ 12. 13. 14. 15. 16. 17. քամի, անձրև։ 18. խաւարչուտ երկինք. հնչեն երկու հակառակ քամիք։ 19. այծիկն երևայ։ 20. արծուին ընդ այծեղջեր բարձրանան. մուտ Արեգական յայծեղջիւրն. աճի ցերեկն։ 21. 22. քամի. արծուին յերեկոյին երևայ։ 23. այծիկն երևի յառաւօտուն։ 24. արծուին, և պսակն խոնարհին հողմակոծութիւն։ 25, 26. գլփինն յառաւօտուն երևայ։ 27. ալէկոծի. ցրտի։ 28. 29. 30. յերեկոյին շնիկն խոնարհի. ալէկոծութիւն։ 31, քամոտ. ալէկոծութիւն։ Ցայսմ ամսոջ վերջացեալ լիցին ամենայն հողագործութեան արարք։

Որպիսի է դեկտեմբերի չորրորդ օրն, նոյնպէս՝ և բոլոր ամիսն։ հինգերորդ օրն նմանի Յունվարին։ վեցերորդն՝ Փետրուարին. այսպէս և այլն։ Եթէ սրտան երկինք, քամիս բերէ։ Կանաչութիւն աւուր Ծննդեան Քրիստոսի Զատկային ձիւնս գուշակէ։ Եթէ 24. և 25. այսօրեկ ամսոյ առանց ամպոյ իցեն, նշանակի առատութիւն ցորենոյ, գինւոյ, և մրգաց։ Իսկ եթէ քամի և անձրև ցուցանի ժանտ, և մահ։



Ցուցմունք վասն պատահարաց 'ի վերայ Եղանակաց բոլոր ամսոց։

ՅՈՒՆՎԱՐ։

Ի Յունվար, որ է Հոռի՝ թէ լուսինն խաւարի, ելանէ թագաւոր յարևելից. առնէ արինհեղութիւն շատ. և յաղթէ բազում զօրաց. և աղ և ձիւն շատ. և մարեխ լինի. և յարևմուտս լիութիւն։ Եւ յառնեն մեծամեծք 'ի վերայ իրերաց, և պատերազմին ընդ քաղաքս և առնուն։ Թէ բակ ունի՝ ջուրք պակասին. և յառաջանալ տարւոյն՝ թագաւոր մի փախստական լինի։ Թէ եղջիւրն ողորդ՝ ցուրտ լինի. և թէ 'ի կախ՝ արձրև գայ։ Թէ արեգակն խաւարի՝ թագաւոր ոմն ելանէ 'ի վերայ մարդկան, և սուր շարժի և աւերէ. և լինի յայնմ տարւոջ բարկութիւն. թէ բակ ունի՝ բազմանան գողք. և թագաւոր ոմն փախչի. խաշանց մահ և շարժին պատերազմունք։ Թէ իջանէ աղեղն յարևելս, անձրևաց առատութիւն, և ցաւք 'ի մարդկան. Թէ յարևմուտս իջանէ, տարին բարի և հողմային. հաց և գինի և պատերազմունք շատ. Թէ 'ի հիւսիս՝ կամ 'ի հարաւ, հողմ ելանէ շատ։ Թէ կայծակի՝ հողմ շնչէ 'ի յարևմտից, և ծառք պակասին 'ի պտղոց, և տարին բարի լինի։ Թէ որոտայ՝ բարի է ամենայն իրաց և յաւելումն խաշանց. ցորեն և գինի շատ. և լիութիւն ամենայն երկրի։ Թէ ցորեկն շարժի՝ պատերազմունք լինի և չորքոտանիք պակասին. և ամենայն իրաց առատութիւն։ Թէ գիշերն՝ աշխարհի մահտարաժամք. և քաղաքաց փոփոխումն, և կռիւք լինին. և գլխաւոր նեղեն և փախչին. և յարևելս հիւանդութիւն և յարուցմունք գետոց։

ՓԵՏՐՈՒԱՐ։

'Ի փետրվար, որ է Մահմի՝ թէ լուսինն խաւարի, ա-

բունհեղութիւն լինի 'ի մէջ թագաւորաց. և յարևելից ելանէ թագաւոր մի, և զհամիթ առնու. և վայ լինի արանց բազմաց և մահ. թէ բակ՝ գինի և բամբակ շատ. թէ եղջիւրն ողորդ լինի, ցուրտ լինի. թէ կախ՝ մուտք տարուն հարկանի։ Թէ արեգակն խաւարի, նուազութիւն է տարուն և ամենայն երկրի. թէ բակ՝ թագաւոր մի ելանի յարևելից և զբազումս հնազանդեցուցանէ, և արկանի 'ի վերայ երկրի տուգանք։ Թէ իջանէ ագեղն յարևելս, բազում ցաւք տիրեն բաբելացւոց, և շարժումն լինի հեծելոց. յարևմուտս բազում պատերազմունք, և թագաւոր մի 'ի զօրաց իւրոց կորչի. և ձիւն շատ գայ, և խաղաղութիւն մարդկան. գազանք շատանան, և հեծեալք մտանեն յարևմուտս. իջանեն հողմք և անձրևք. թէ յարևմուտս իջանէ, հողմ սաստիկ. ամենայն երկրի աղքատութիւն լինի, և արիւնհեղութիւն և հալածումըն և պատերազմունք, և պարսիք զօրանան։ Թէ կայծակի՝ լինի սով յարևելից կողմանէ, և մարդիկ մեռանին սակաւաթիւ կերակրոց. և պտուղք ծառոց պակասին։ Թէ որոտայ. զարունն ագնիւ և պտուղ շատ, և խաշանց առատութիւն. ցորեն և գինի շատ. թէ 'ի յուրբաթի որոտայ, կարկուտ գայ և սով. որք վաճառեն հարք զորդիս։ Թէ ցորեկն շարժ լինի և թէ գիշերն. ապականութիւն է մարգոյ. իսկ անասնոց առողջութիւն և ամենայն իրաց առատութիւն. և պատերազմունք՝ և թագաւորք կռուին ընդ միմեանս և մեծամեծք քաղաքաց անկանին, յիրեար խառնակին. և մարդիկք նենգաւորք լինին միմեանց. և իշխանք ապստամբին 'ի գլխաւորէն, արևելից գլխաւորն կորչի. և հեծելոց դադարումն լինի. և յեգիպտոս սով լինի։

## ՄԱՐՏ.

'ի մարտ, որ է Տրէ՝ թէ լուսինն խաւարի, ամենայն



իրաց թանկութիւն. բայց առողջութիւն է. և 'ի պարսիկս մեծամեծք մեռանին. և տարին բարի լինի. թէ բակ ունի՝ նշանակ է աւերման, ահի և մահու։ Թէ եղջիւրն ողորդ՝ այգուց պտուղք բառնան. թէ 'ի կախ, երաշտ և հողմն։ Թէ արեգակն խաւարի, ելանէ 'ի հռոմոց հեծեալս յարապիկս, և շատ ազմունք լինի. թէ բակ, հիւանդութիւն լինի. և զտեղի նորա առցէ այլ ոք. Թէ իջանէ ագեղն յարևելս, հեծեալք ելանեն, բայց հաստատութիւն լինի 'ի մէջ թագաւորաց. պտուղ շատ. և երեք ամիս անասնոց մահ. և թագաւորն զօրանայ 'ի մեծամեծաց իւրոց. և մահ անկանի յերկրի եանձրև գայ. թէ յարևմուտս իջանէ, առատութիւն ամենայն իրաց և խաղաղութիւն ամենայն երկրի։ Թէ կայծակի՝ բազում չարիք տիրեն 'ի վերայ երկրի, բայց մեղր շատ։ Թէ որոտայ, աշունն չոր և պարզ. ձմեռն երկար, և խաշանց մահ, և մարդկան առողջութիւն։ Թէ 'ի յուրբաթի որոտայ, գարունն հողմային. մարդկան առողջութիւն. մեղր և գինի շատ և պտղոց առատութիւն։ Թէ ցերեկն շարժի՝ գազանաց և թագաւորաց կռիւ լինի. և գողք կորչին և աղքատք ճոխանան. և յարևելից կողմ վնաս լինի. բայց ամենայն երկրի լիութիւն և քաղաքաց շատ բարի լինի. և բարկութիւն վերանայ. բայց սակաւ հիւանդութիւն, և թագաւոր ումն մեռանի։ Թէ գիշերն շարժի՝ խաղաղութիւն նշանակէ. և հողմն խիստ, և ցորեն շատ, սահմանն դիմակաց լինի թշնամւոյն. և թռչունք բազմանան։

## ԱՊՐԻԼ։

'ի յապրիլ, որ է Քաղոց, թէ լուսինն խաւարի, սով և տրտմութիւն լինի երկրի, և մեծամեծք ցածնան բայց 'ի հայք լիութիւն. և տարին բարի գայ. և 'ի պարսիկս սով մեծ. և թագաւորք պարսից հնազանդին. թէ բակ՝ ցաւք 'ի մարդիկ, և թշնամիք խափանին. և լինի ուրախութիւն

ամենայն երկրի։ Թէ եղջիւրն ողորդ՝ այգիք աճէկ. թէ 'ի կախ՝ մահ անկանի և օդն խառնակի։ Թէ արեգակն խաւարի, սպանումն թագաւորաց և պակասումն զօրաց. թէ բակ առնու, արիւնհեղութիւն. և հողմն. և յոլով հիւանդութիւն մարդկան. ջուրք պակասին զօրք շատանան, և մարդիկ զարհուրին. Թէ իջանէ աղեղն յարևելս, խառնակումն լինի 'ի թագաւորն պարսից. և մեծամեծաց կորուստ, և սուգ և տրտմութիւն. յարևելս մեծ ոմն մեռանի. և հակառակութիւն ընդ թագաւորն արևելից։ Թէ յարևմուտս իջանէ, ելանէ թագաւոր մի յարևելից և առնէ արիւնհեղութիւն. և տիրէ քաղաքաց, բազում պատերազմունք, և գերութիւն լինի յերկիրն պարսից, և մնացեալքն տարագիր լինին, զօրք շատանան և մարդիկ փախստական լինին, և խաղաղութիւն սակաւ գտանի. Թէ որոտայ՝ և խաշինք կոտորին. և տղայոց մահ. թէ յուրբաթի որոտայ, 'ի հարաւոյ կողմն տարին բարի լինի. և մարդկան առողջութիւն. և մեղր շատ. և խաշանց բարի լինի. շարժմունք և հարուածք մեծամեծաց. և կանայք հաշմածին լինին։ Թէ ցերեկն շարժի, արիւնհեղութիւն լինի յարևելս. և հեծեալք սփռին ընդ ամենայն երկիր. և ահով լինի խաղաղութիւն. և լինի աւերումն թագաւորաց և գլխաւորք անկանին։ Թէ գիշերն շարժի՝ գերութիւն լինի. և 'ի տեղիս տեղիս բարի անձրևական. պատերազմունք շատ և անբաւ։

ՄԱՅԻՍ.

'Ի մայիս, որ է Արանց՝ թէ լուսինն խաւարի, բարի է ամենայն արմտեաց. և հակառակութիւն երկրին հռոմոց և կոտորումն խստագոյն այլազգաց և աւերսցեն զբազում տեղիս և հարկանիցեն. և յամենայն երկիր սուգ և մեծ տրտմութիւն հասանէ յանօրինաց. և կանայք յղիք մեռանին. և թագաւորն սպանէ զոսոխն իւր և ինքն մե-



ռանի, և թագաւորեն որդիքն իւր. թէ բակ՝ խառնակումն
լինի յարապիկս. և գազանք մեռանին. թէ եղջիւրն ողորդ,
զօրք բազմանան. և գազանք մեռանին. թէ կախ՝ թանկու-
թիւն հացի և հիւանդութիւն։ Թէ արեգակն խաւարի, թա-
գաւոր ոմն մեռանի. և լինի հակառակութիւն մեծ. թէ բակ՝
թագաւոր ոմն մտանէ յօտար քաղաք և ոչ յաջողի և յետս
դառնայ և լինի մարդկան առողջութիւն։ Թէ իջանէ աղեղն
յարևելս. մուտք շատ. տարին արդիւնաւոր. մեղր և բամ-
բակ թանկ. պատերազմ բազում. և յարևմուտս աղքատու-
թիւն և թագաւորն մարաց պատերազմի ընդ այլ թագա-
ւորի. և յետոյ խաղաղանայ. թէ յարևմուտս իջանէ՝ հիւան-
դութիւն. ջերմ և ծաղիկ և ցաւ։ Թէ կայծակի, երեք օր
հողմ ելանէ, և լինի արիւնհեղութիւն և մեծ մարդ մեռա-
նի։ Թէ որոտայ, պտուղք շատանան, և գինիք բացախին,
և հիւանդութիւն. թէ յուրբաթի որոտայ, մարդկան մահ,
և անասնոց ծախք. հացի յուզումն. զօրք շատանան. հաւատք
կորչին. մարդիկ դիւահարին. մեծամեծք չքանան. տղայք
խանգարին յոլովայնի. Թէ ցերեկն շարժի՝ ջերմ շատ. և
թագաւոր մի ելեալ՝ առնէ արիւնհեղութիւն. և լինի մահ
մեծամեծաց. մարդիկ սպառին. ընդ հեթանոսս կռիւ. ցո-
րեն պակաս. թշնամիք բազմանան. հաւատացելոց թերա-
հաւատութիւն։ Թէ գիշերն շարժի, արքունեաց և հարս-
տաց՝ պակասութիւն, թագաւորաց անկումն ցորեն յո-
լով. և մարախ անկանի։

ՅՈՒՆԻՍ.

'Ի յունիս, որ է Մեհեկի՝ թէ լուսինն խաւարի, սասա-
նութիւնք աղքատաց և արիւնհեղութիւն. անձրևքն պակա-
սին քառասուն օր. և թագաւորն բաբելացւոց սպանանէ
զոսոխն իւր. թէ բակ, յետ հինգ աւուր հողմն սաստիկ.
և անձրևաց պակասում. և գազանք մեռանին, և խաղա-

ղութիւն լինի. թէ եղջիւրն ողորդ, գազանք մեռանին. և օդք խառնակին. թէ կախ, երաշտ և թանկութիւն։ Թէ արեգակն խաւարի՝ թագաւոր մի ելանէ յարևելս և տապալէ զբազում տեղիս. և առնէ շատ աղմուկ և սասանի երկիր. թէ բակ, երթան հեծեալք 'ի յարևմուտս. և առցեն քաղաքս և տարցեն աւարս։ Թէ իջանէ աղեղն յարևելս, վաստակ աղէկ 'ի կողմն հարաւոյ. և ցաւ անկանի. մարգիք և շունք կատաղին յերկրին պարսից. թէ յարևմուտս իջանէ, անձրև շատ, ձէթ, գինի և մեղր շատ։ Թէ կայծակի՝ ողութիւն լինի անասնոց և թռչնոց։ Թէ որոտայ արիւնհեղութիւն լինի. հաց առատ և գինի թանկ. և մարդկան առողջութիւն։ Թէ ցերեկն շարժի, արիւնհեղութիւն, սրտնեղութիւն, արտասուս, և հիւանդութիւն. և աթոռ մեծ անկանի, և ծառք ապականին, և Աստուած քաղցրութեամբ հայի յաշխարհ։ Թէ գիշերն շարժի, մանկունք անասունք կոտորին. աղբիւրք բազմանան. և ցորեան շատ. աշխարհի խաղաղութիւն։

ՅՈՒԼԻՍ։

'Ի յուլիս, որ է Արեգի՝ թէ լուսինն խաւարի. արիւնհեղութիւն լինի 'ի խորասան և աւեր շատ. և քաղաք շարժին. և թագաւոր ժառանգէ զնա. և յարևմուտս պատերազմունք. թէ բակ, անասնոց և հողմոց և անձրևաց բազմութիւն. և աղբիւրք առատանան. և մարդկան առողջութիւն. թէ եղջիւրն ողորդ լինի՝ երաշտ. թէ 'ի կախ՝ անձրև գայ։ Թէ արեգակն խաւարի, յառնէ որդի թագաւորի և սպանանէ զհայր իւր և նստանէ յարևելս. առցէ քաղաք բազում, և հեծեալք նորա ցրուին ընդ ամենայն երկիր. թէ բակ, մահ հասանէ թագաւորի և որդւոց նորա. և լինի թշուառութիւն զօրաց նոցա. և ելանէ արապիկն և առնէ վնաս բազում։ Թէ իջանէ աղեղն յարևելս՝ մեռցի թագաւորն իւր



և խափանին գործք իւր. և հեծեալք ելանեն և մտանեն 'ի յարևմուտս. և պատերազմին պարսք ընդ այլազգիսն և յաղթեն նոցա. 'ի բաբելօն ի յարևմուտս պատերազմունք լինի. և ցորեան առատ. թէ յարևմուտս իջանէ, արիւնհեղութիւն 'ի կողմն հարաւոյ. Թէ կայծակի՝ պակասին անձրևք, մեղր և բամբակ աղէկ. ահ անկանի 'ի վերայ երկրի և պատերազմ լինի։ Թէ որոտայ՝ խաշանց մահ և ծաղիկ տղայոց. ցորեան շատ և ազատաց մահ. թէ յուրբաթի որոտայ. ձմեռն շատ. տարի բարի ծառոց և տնկոց։ Թէ ցերեկն շարժի՝ ապականութիւն տղայոց. և նեղութիւն մեծ գայ 'ի վերայ երկրի. և ձայնք և որոտք շարժի։ Թէ գիշերն շարժի, արքունիք յառնեն 'ի վերայ. և մեծամեծաց հիւանդութիւն. և նաւուց կործանումն։

ՕԳՈՍՏՈՍ։

Ի օգոստոս, որ է Ահեկի՝ թէ լուսինն խաւարի, ցուրտ պինդ լինի. յետոյ անձրև գայ. և հիւանդութիւն խիստ 'ի հարաւոյ կողմն, և հաց առատ. և յարևմուտս սով և նեղութիւն. փայլատակմունք շատ. ծառք նեղութիւն կրեն. առողջութիւն մարդկան. երեք ամիսք անձրևք պակասին, և առնուն զքաղաքս հայաստանեայց այլազգիք և յամենայն քաղաքս ձայն ահի անկանի. և 'ի խորասան արիւնհեղութիւն. թէ բակ ունի՝ հողմն ելանէ և անձրև գայ. և 'ի տեղիս տեղիս խռովութիւն յոլով։ թէ եղջիւրն ողորդ՝ հօտք բազմանան. յամենայն աղէկ։ Թէ արեգակն խաւարի, մտանէ թագաւորն հռոմոց յարապիկն, և ելանէ արապըն և կոտորէ զհռոմն, և մեծ խառնակումն լինի. թէ բակ. թագաւոր մեռանի և այլ ոք թագաւորէ, և յաւուրս նորա լինի խաղաղութիւն։ Թէ իջանէ աղեղն 'ի յարևելս, յառաջիկայ ամիսն ձիւն գայ, և պարզ և ցուրտ լինի և 'ի հռոմք պատերազմունք բազում. և արևմտից թագաւորն 'ի

գերութիւն վարի. և Ուռուսք ընդ իրեարս պատերազմին. և խաղաղութիւն ընդ ամենայն երկրի. Թէ յարևմուտս իջանէ, տարին բարի՝ պտուղք առատ՝ և թագաւորին փոխումն. և մարդիկ 'ի քաղաքէ 'ի քաղաքս փոխին. և անկանի մահտարաժամ։ Թէ կայծակի, կոծումն և աշխարումըն. հալածումն և խռովութիւն թագաւորաց և երկրի նոցա։ Թէ ցերեկն շարժի, կռիւ լինի. և շատ անկանին 'ի գետին. աշխարհք ապականին. ծովք չքոտանան. ցորեան և ամենայն պտուղք շատ։ Թէ գիշերն, անձրև սաստիկ մինչև 'ի յերեսուն օր. ցուրտ խիստ և տղայոց մահ։

## ՍԵՊՏԵՄԲԵՐ։

'Ի սեպտեմբեր, որ է Մարերի՝ թէ լուսինն խաւարի, պաղ և ցուրտ և նեղութիւն և խռովութիւն ամենայն երկրի. գի յառնեն քաղաքք 'ի վերայ քաղաքաց. և մեռանի յարևմուտս մեծ այր մի. և նոր խորհուրդ շարժի 'ի վերայ երկրի և վնասէ զմարդիկ. և պտուղ երկրի չորանայ. Թէ բակ՝ անձրև կարկտախառն եկեսցէ. կամ ձիւն հողմով. և ցամաք ցուրտ լինի. ձմեռն ազնիւ, և հողմ սաստիկ։ Թէ եղջիւրն ողորդ լինի, անձրև բազում. և մահ. և բարին պակասի. Թէ կոխ. անձրև սակաւ և բարի յոյժ։ Թէ արեգակն խաւարի, ամենայն իրաց սղութիւն և մահ. պատերազմունք և արիւնհեղութիւն. և չատանիան հարամիք. և յետոյ առատութիւն լինի ամենայն երկրի. Թէ բակ՝ ցամաք ցուրտ լինի. և զարհուրումն 'ի քաղաքի. և մուտք գինւոյ պակասի, և ցորեանն բազմանայ։ Թէ իջանէ աղեղն յարևելս, պտղոց սակաւութիւն և խաղաղութիւն ամենայն երկրի. բայց սերմն պակասի. և յերկիրն բաբելացւոց երեք տարի սով լինի. և յարևմուտս անձրևային. և առիւծք 'ի մարդկան եօթն ամիս վնաս առնեն. Թէ յարևմուտս իջանէ, անձրևաց պակասութիւն. ցուք



տղայոց. հաւուց և խաշանց առողջութիւն։ Թէ որոտայ առատութիւն հացի. անձրև բազում և հիւանդութիւն։ Թէ կայծակի, առատութիւն ամենայն իրաց և զօրք յարևելից յարևմուտս երթան. և բազում պատերազմունք լինի և բարկութիւն 'ի վերայ երկրի։ Թէ ցերեկն շարժ լինի. խաղաղութիւն աշխարհի. պատերազմաց դադարումն, մեծատանց մահ. կանանց և տղայոց և խաշանց ցաւ։ Թէ գիշերն շարժ լինի, խաղաղութիւն և ուրախութիւն և ցորենոյ լիութիւն. և ծովք բազմանան։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ։

'Ի հոկտեմբեր, որ է Մարգաց՝ թէ լուսինն խաւարի, տարին բարի և առատութիւն հացի և ամենայն իրաց. և խաղաղութիւն 'ի մէջ մարդկան. և անձրև շատ և լիութիւն. և այր մի անկանի յիշխանութիւն 'ի լեռնէն տիւրոսի. Թէ բակ. ձիւն շատ, և ցուրտ խիստ. և անձրևք մեծամեծք. Թէ կոխ՝ մահ գուշակեն և կարկուտ։ Թէ արեգակն խաւարի, տարին ցաւագին և մահ լինի։ Թէ բակ, ահոտ լինի և փախուստ հռոմոց, և ծաղիկ բազում։ Թէ որոտայ, անձրև բազում և թաքութիւն խիստ. մեծաց մահ. Թէ յուրբաթի որոտայ, եղանեն իրաւունք և դառնան մարդիկ 'ի տեղիս իւրեանց. հաց և գինի շատ. և շարժումն զօրաց յարևմտից և 'ի հիւսիսոյ։ Թէ իջանէ աղեղն յարևելս, անձրև շատ և վաստակոց աճումն. և բազում լիութիւն լինի երկրի. բայց մարդիկ վտանգին 'ի ցաւոյ. և բազում պատերազմունք լինին յարևմուտս. և 'ի բաբիլօն ժանգ. և յարևելս բազմութիւն վաստակաց. Թէ յարևմուտս իջանէ. անկանի սով 'ի կողմն հարաւոյ։ Թէ կայծակի, պտուղք ծառոյ պակասին. և բազում քաղաքաց տապալումն։ Թէ ցորեկն շարժ լինի, սակաւ սասանի երկիր և ոչխարաց մահ։ Թէ գիշերն շարժի, թագաւորք քաղաքաց հեծանոսաց յօտար

աշխարհ փախչեն. և այլք առնուն զնոցա տեղին և ըղձագաւորութիւն, պտուղք ծառոց պակասին. և անձրև անուշ. և ցուրտն զօրանայ. և վայրի կենդանիք կորչին. և յետոյ երևին բազում խաղաղութիւն:

## ՆՈՅԵՄԲԵՐ:

'Ի Նոյեմբեր, որ է Հրոտից՝ թէ լուսինն խաւարի, 'ի գարունն աճէ վաստակն. ամենայն իրաց առատութիւն. և տղայոց շահեկանութիւն և յերուսաղէմ շատ անձրև գայ. և 'ի մէջ թագաւորաց կռիւ լինի, և մինն մեռանի. Թէ բակ, առատութիւն և խաղաղութիւն, և գետք բազմանան. Թէ եղջիւրն ողորդ՝ հաց և գինի շատ, և ցուրտ: Թէ աբեգակն խաւարի, կոտորումն անասնոց և գազանաց, և հիւանդութիւն տղայոց: Թէ բակ, շարժին հեծեալք՝ յարևմուտս երթալով: Թէ իջանէ աղեղն յարևելս՝ երաշտութիւն. վաստակաց ժանգ և յարևելս թագաւոր մի 'ի թշնամեաց իւրոց մեռանի և տրտմութիւն լինի, և ձիւն շատ գայ: Թէ իջանէ աղեղն յարևմուտս, առողջութիւն և խաղաղութիւն և առատութիւն: Թէ որոտայ, մահ լինի. վաստակք և այգիք լաւանան. ցորեն և գինի շատ. Թէ յուրբաթի որոտայ՝ աւերումն հարկանէ. և շարժին քաղաք և գիւղ և ելանէ թագաւոր ումն յարևելից և ապականէ զերկիր առաջի իւր. Թէ ցերեկն շարժի. ջուրք շատանան և հողմ լինի. և տարին պտղաբեր և առատութիւն անչափ: Թէ գիշերն շարժի՝ յայն աեղին ուր լինի, կռիւ լինի և սասանութիւն. և փախուստ մարդկան:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ:

'Ի դեկտեմբեր, որ է Նաւասարդի՝ Թէ լուսինն խաւարի, շատ անձրև գայ. և լինի եղեամն և պարզ կայ. և դառ-



նութիւն օդոց. և լինի խաղաղութիւն քաղաքի. և ամառն պատերազմունք. բայց լիութիւն լինի. մարախ գայ և վնաս առնէ. գարունն խառնակ և ծաղիկ անկանի. Թէ բակ ունի, իշխանաց սէր և խաղաղութիւն. ձիւն և կարկուտ գայ. թագաւորք մեռանին և պարսիկք յանձրևաց ապականին. Թէ եղջիւրն ողորդ լինի. սղութիւն և ցուրտ նշանակէ. Թէ կախ, անձրև գայ: Թէ արեգակն խաւարի, խաղաղութիւն, բայց 'ի չորից կողմանց տարին խառնակ գայ և տղայոց ծաղիկ. Թէ բակ ունի, շարժին հեծեալք յարևելից, և յարևմուտս երթան, գինի շատ. և ուրախութիւն լինի մարդկան: Թէ իջանէ աղեղն յարևելս, երաշտանան աւուրք, և խառնակին ամպք. և սուր շարժի 'ի վերայ երկրի. Թէ յարևմուտս իջանէ, առատութիւն ամենայն իրաց և ամենայն երկրի. և առողջութիւն ամենայն մարդկան: Թէ կայծակի, հրացայտ լինին աստեղունք. հիւանդութիւն մարդկան. ցորեն և գինի շատ. և պարսից կոտորումն: Թէ որոտայ, ամենայն երկրի բարի լինի. և վաստակ բազում, Թէ յուրբաթի որոտայ՝ նաւագութիւն լինի յարևելս: Թէ ցերեկն շարժի, այն տեղաց առաջնորդքն խառնակումն և կռիւ լինի. և բազում պատերազմունք: Թէ գիշերն շարժի, մեծամեծաց տրտմութիւն. և հեծեալք շարժին և զօրք ելանեն. և մարդկան նեղութիւն լինի. և աւերումն քաղաքաց. և գլխաւորաց կոտորումն. և վաստակաց նուազումն:

*Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք յաւիտեանս ամէն:*

## Ցուցմունք 'ի վերայ երկոտասան կենդանակերպից. որոց և ասի Տանուտէր։

### Խ Ո Յ։

Յորժամ Խոյն լինի տանուտէրն, գարունն ազնիւ. ամենայն իրաց և ցորենոյ առատութիւն և 'ի հում տունկք չորանան. վաստակ աղէկ, 'ի յերկիրն բաբիլօնի սով լինի. 'ի յայսօրիս գինի առատ. 'ի յերկիրն հնդկաց մահ անկանի. և խաղաղութիւն յերկիրն հնդկաց մահ անկանի. և խաղաղութիւն յերկրին գլխատայ մինչև 'ի ծովն հիւսիսոյ. և յարևմուտս շարժումն լինի. և բազում քաղաքք տապալին։ Եւ յորժամ 'ի հիւսիսոյ կողմն աստղ ելանէ, քաղաքք ընդ իրեարս հարկանին. մեծամեծաց կորուստ 'ի թագաւորաց կամ 'ի յԱստուծոյ։ Եւ յորժամ աղեղն իջանէ, ամենայն աշխարհի խաղաղութիւն ցուցանէ. ամառն բարի. և վաստակ աղէկ և անձրև գայ. մեղր և կիթ շատ. ձիւն թեթև. և մարդկան առողջութիւն։

### Ց Ո Ւ Լ։

Յորժամ Ցուլն լինի տանուտէրն, գարունն գիճային. յառաջ շատ մի ցանիր՝ զի մուտք տարուն չէ աղէկ։ Յերկիրն բաբելօնի սով լինի և մահ։ Յետ գարնան՝ հողմային. զի ցուլն զէջ է և ջերմ. ելանէ ապականութիւն վաստակոց 'ի յերկնից։ Յասորիս՝ մահ եզանց և խաշանց. և 'ի տեղիս տեղիս ամառն տօթային՝ խիստ ջերմային. բայց հակառակ խիստ լինի. յառաջ ձմեռն բաղցր, և յետոյ ձիւն շատ. գարունն ազնիւ. ամենայն բարւոյ ազնւութիւն ցուցանէ։



### ԵՐԿԱՒՈՐ։

Յորժամ Երկաւորն լինի տանուտէրն, գարունն միջակ. և 'ի բազում տեղիս սով լինի և տրտմութիւն։ Յերկիրն պարսից վաստակ ոչ լինի. և ձմեռն վատ խիստ լինի, և անկանի կռիւ և պատերազմ ընդ իրեար. և խռովի երկիրն 'ի սահմանս պարսից. և շարժումն երկրին գլխատայ մինչև 'ի բաբիլօն՝ բայց ոչ բազում։

Յասորիս և 'ի միջագետս՝ ձմեռն կակուղ, և գինի շատ քան զցորեան. և տարին առողջ գայ. յետոյ ահագին հողմ ելանէ. և ծնունդք ոչ բազմանան. բերանացաւ խիստ. և աղբերաց պակասումն։

### ԽԵՑԳԵՏԻՆ։

Յորժամ Խեցգետինն լինի տանուտէր. գարունն յոյժ և հողմային. ամենայն պտղաբերք ապականին. և գինի սակաւ. վաստակ աղէկ լինի. բայց սակաւանայ անձրև։ Անասնոց և գազանաց անցումն. և տրտմութիւն ի վերայ երկրի. արօտ անասնոց չիք. և 'ի տեղիս տեղիս մօրեխ երևի։ Ձմեռն թանկ լինի. և հողմ ելանէ։ Որ հիւանդանայ՝ խիստ նեղի 'ի ցաւս։ Աշունն շատ քաշէ. բայց ցուրտ լինի։

### Ա Ռ Ի Ւ Ծ։

Յորժամ Առիւծն լինի տանուտէրն, գարունն աղէկ. դաշտք լիալար. վաստակք և ամենայն արմատիք պտղաբերք. պտտառին ոստք վասն շատ լինելոյ. և գինի շատ։ Ամառն անձրև գայ բազում. և քաղաքք աւերին 'ի սմբակաց։ 'Ի բաբիլօն շարժումն լինի ժողովրդոց։ Յասորիս

տրտմութիւն լինի. զի օդն առնու զվաստակ·անձրև անուշ՝ յետոյ երաշտի։ Ձմեռն քիչ, ցուրտ խիստ. և 'ի սաստկութիւնէ ձմերանն՝ մառախուղ նստի. և գազանք սատակին։ 'Ի տանէն յունաց զօրք ելանեն. և բազում գաւառք ընդ ոտս հարկանին։

Կ Ո Յ Ս։

Յորժամ Կոյսն լինի տանուտէրն, գարունն աղէկ. վաստակ աղէկ. բայց մուտք տարուն պակասին. և այգի մի վաստակեր՝ զի գինի ոչ լինի. և պտղաբերք պտուղ ոչ տան։ 'Ի յերկիրն արևելից ամպոց սակաւութիւն. տարին ցաւագին. և աչացաւ բազում. զասորիս՝ սով և մարախ հարկանէ։ Յերկիրն պարսից՝ գլխաւոր մի անկանի. և զօրք ելեալ ասպատակեն. և բազում գաւառս առնու։ 'Ի տեղիս տեղիս աշունն շատ քաշէ, ձմեռն քաղցր. և սով սաստիկ. որք վաճառեն հարք զորդիս. և տեսանեն ամենեքեան զվայր իւրեանց։

Կ Շ Ի Ռ։

Յորժամ Կշիռն լինի Տանուտէրն, գարունն անձրև սակաւ գայ. բայց ցօրեն շատ. և ապականի աղէկ գինի։ 'Ի հռոմ տրտմութիւն անկանի. և խառնակումն խիստ։ 'Ի հայք աւեր մտանէ. և բաժանեն զերկիր 'ի վերայ իրերաց. և տունք մեծամեծաց տապալին։ Ցաւք անասնոց և եզանց. բայց ծախումն սակաւ. պիծակ հարկանէ զերկիրն. փոքացաւ յարենէ. գազանաց մահ։ Ամառն անձրևային. և ամենայն պտղաբերք աղէկ լինին։ Յերկիրն գլկատայ խաղաղութիւն։ Յաշունն անձրև գայ, յետոյ երաշտ։ Ձմեռն աղէկ և ձիւն շատ։ 'Ի տեղիս կարկուտ։



Կ Ա Ր Ի Ճ։

Յորժամ Կարիճն լինի Տանուտէրն, գարունն անձրև ամպով՝ բայց կտուր. առաջն երաշտ, և յետոյ ցուրտ ահեղ և սոսկալի։

Հաւ ոչ գայ տարին. զի օդք տրտմին 'ի հրամանէն այս և լինի խառնակումն ամպոց և ճայթումն փայլատակմանց, և յահեղ որոտմանց. սասանի երկիր. գետք և ծովք յառնին. և ալեկոծեալ մրրկին։ Գարունն խառնակ գայ յամպոց՝ մինչև յելանել բազմաստեղըն. պտղաբերք չորանան, գինի սակաւ. վաստակ աղէկ։ Բայց հունձ սակաւ հասանի. կամ յամպոց, կամ 'ի կարկտէ, կամ յայլ պատահարաց սակաւ գայ 'ի շահ և թրթուր երևի։ Յերկիրն պարսից խառնակումն. և անկանին ընդ իրար. և շարժին զօրք նորա. և թագաւորն յունաց շարժի զօրօք խուովք յաթռոյ խումէ, և բազում գաւառք ապականին 'ի ըմբակաց· և խռովի երկիրն զի մուտք տարուն պակասին։ Եւ 'ի մտանել աղեղնաւորին՝ սով լինի. և որ աշունն անցանէ՝ լաւ լինի։ Ամառն հողմային, ձմեռն թեթև. բայց ցուրտ խիստ. և 'ի հասարակ ձմեռն՝ անձրև գայ։

ԱՂԵՂՆԱՒՈՐ։

Յորժամ Աղեղնաւորն լինի Տանուտէրն, գարունն խառնակ գայ յամպոց մինչև յամառնային եղանակն. տարին հողմային. դաշտք լիարար վաստակօք՝ գինւով և ամենայն պտղով. բայց այգիք ապականին 'ի կարկտէ, կամ յայլ պատահարաց, պիծակ խիստ, սով 'ի բազում տեղիս. շարժումն զօրաց և ձայն պատերազմաց յարևելից, և յարևմտից, և շարժումն ժողովրդոց 'ի վերայ իրերաց։ Զի գաւառք

բազումք ապականին 'ի սմբակաց. տունք մեծամեծաց տապալին 'ի թագաւորաց, կամ 'ի յամենայն. վասն զի 'ի նեղութեան ժամանակին՝ ուրանան ծնողք զորդիս իւրեանց. և տագնապի երկիր իբրև զնաւ ալէկոծեալ, Բայց յերկիրն ասորոց խաղաղութիւն. և լի ամենայն բարւով. յառաջ ձմեռն՝ ջերմ քաշէ և ցամաք. և ցորեն լաւ լինի քան զգարի. և ուխարաց մահ լինի։

ԱՅԾԵՂՋԻՒՐ։

Յորժամ Այծեղջիւրն լինի տանուտէրն, գարունն աղէկ. անձրև ըստ կամաց. պիծակ խիստ. պտուղք պակասին. դաշտք լիաբար վաստակօք զոր յառաջն ցանեն. բայց 'ի բարձր տեղիս՝ զվաստակն օդն տանի։ Ի հայք տրտմութիւն անկանի, և մեծամեծք թափին 'ի հարաւոյ՝ բարկութիւն շարժի 'ի սմբակաց, և ցամաքեն աղբիւրք անդնդոց և գետոց, լինին ճայթմունք յերկնից. զաւառք ապականին 'ի կարկտէ. տարին ցաւագին լինի. և քաղաքք բազումք կորնչին. և մեղր պակաս.

Ջոր յետոյ սերմանէ յաշունն, աղէկ լինի. ձմեռն աղէկ գայ. ցուրտ և ձիւն ոչ լինի։ Հացն յապրիլէն 'ի վեր աղէ մինչև 'ի յունիսն։ Թէ լուսինն խաւարի՝ պտղաբերք ապականին. մուտքն աղէկ լինի՝ յժէ տեղիս ուր ժանգ չուտէ։

ՋՐՀՈՍ։

Յորժամ Ջրհոսն լինի տանուտէրն. գարունն գիջային. անձրևք մեծամեծք. պտղոց առատութիւն. 'ի դաշտ տեղ մի սերմաներ՝ զի ժանգն առնու զվաստակն. և շարժումն զօրաց յարևելից մինչև 'ի մուտս արևու. և ապահովին մարդիկ 'ի ծերպս վիմաց։ Մահ խաչանց. առաջնորդաց կորուստ.



մեղր սակաւ ընդ ամենայն երկիր. մարդկան առողջութիւն առ հասարակ. գնացք կարկտի. և հողմն գայ 'ի հիւսիսոյ. պտղոց և տնկոց պակասումն լինի. 'ի տեղիս թրթուր հարկանէ։ Ձմեռն ցամաք. ցորեն և գարի շատ լինի։ Իսկ յարևելս սով լինի 'ի խաշին ամսոյն 'ի վեր. և դաշտք չբերեն պտուղ. լերանց վաստակ. այգիք միջակ լինին։

Ձ Ո Ւ Կ Ն

Յորժամ Ձուկն լինի տանուտէրն՝ գարունն միջակ, և կտուր, և անձրևային. և յարուցմունք գետոց։ Ցորենոյ և պտղոց առատութիւն. մեղր սակաւ. և 'ի տեղիս տեղիս պատերազմունք։ Մահ տարաժամ խաշանց. և խիստ փորապատերազմունք։ Մահ տարաժամ խաշանց. և խիստ փոր-

յաւ։ Ծովք շարժին. և լերինք լիաբար վաստակօք։ Մարախ և թրթուր ապականէ զերկիրն պարսից։ Յարևելս խաղաղութիւն. և յերկիր հռոմոց պատերազմունք։ Ամառն անձրևային բարւով 'ի հունձս հասանէ. մեծամեծաց մահ խառնակումն ազգաց ընդ իրեար։ Աշունն անձրև շատ գայ. և զօր ցանես 'ի խաշին ամսին՝ աղէկ լինի. 'ի տեղիս տեղիս ձիւն շատ։ Եւ 'ի հասարակ ձմեռանն հարաւ շարժի. և անձրև գայ, և ցուրտ լինի։ Գինի շատ, բայց ոչ յամէն տեղի, մուտք միջակ. և ձմռան 'ի միջի ամիսն տասն կամ տասնեհինգ՝ եղանց բաղի. և ողայոց մահ։

*'Ի վերայ եօթն Մոլորակացն. Հանդերձ Կաղանդացուցին,*
*եւ ծնիցեալ աւուրբ մանկան։*

### Ա Ր Ե Գ Ա Կ։

Արեգակն է իբր թագաւոր. և ուղղեւորիչ մոլար աստեղաց, զի ունի զազդողականութիւնս քան զայլսն։ Օր արեգականն՝ է կիրակի. ցերեկեան և երեկոյեան առաջին ժամն։ Կաղանդի օրն եթէ 'ի կիրակի հանդիպի, ձմեռն լինի սաստիկ ցուրտ. գարունն՝ բարեխառն. ամառն՝ չոր և սակաւակութ. աշունն՝ հողմային։ Ռոճիկն առատ, այսինքն գարի, ցորեն, գինի, ձէթ և մեղր, ոչխար և անդեայք։ Փասքսութիւն 'ի մէջ ազնուաց, և քսութիւն ընդդէմ մեծամեծաց. մահ տղայոց և մանկամարդաց։ Ծնեալն ընդ իշխանութեամբ արեգական՝ լինի մսեղ. շառագոյն. լայնաճակատ. բարակունք. աչեղ, յարմարաքիթ. միջակաբերան. միջակապռունգ. յարմարակզակ. կարմրայտ և գեղեցկադէմ։ Բարուքն՝ ծանր, համեստ. առատասիրտ. խորախոհ. պատուասէր, և քաղցրաբան։

### Լ Ո Ւ Ս Ի Ն

Ունի զանազան արարս. մանաւանդ յաճիլն, և 'ի նուազիլն. նոյնպէս վնասակար համարի յաճման լուսնոյն՝ զկենդանիս կրտելն, զարմտիս հաւաքելն, զուգակցութեամբ ամուսնացելոյն. և այլ սոցին նման առք և արարք. իսկ 'ի լրմանն՝ շահեկան, և պիտանի։ Օր լուսնոյն է երկուշաբթի. և նոյն աւուր ցերեկեայ առաջին ժամն։ Կաղանդի օրն եթէ յերկուշաբթի հանդիպի, ձմեռն բարեխառն. գարունն՝ զովական. ամառն՝ միջակ և ազնիւ. աշունն՝ յոյժ խոնաւ, որ ջուրք բնաւ ոչ պակասին։ Ցորենոյ պակասու-



թիւն, բայց այլ սերմանց առատութիւն, գինի և ձէթ միջակ. սարսռելի. նուազութիւն անասնոց. հիւանդութիւն մարդոց, փեռեկտութիւն 'ի մէջ մեծամեծաց. արգանդացաւ կանանց. պակասութիւն տպրշմի, և մեղր։ Ծնեալն ընդ իշխանութեամբ լուսնոյն՝ լինի սպիտակամարմին. մաղաստ. նեղակզակ. բոլորադէմ, ատամնայարմար. միջակաչեայ, քնափ, փոքրաբերան. գաղտերակ հաստաթիկունք. երկայնաբազուկ. յամրաշարժ, սպիտակամազ. լայնաճակատ. նստաքիթ. բացերես. փոփոխական. դիւրահիւանդ. երկրասէր. ջրասէր. և վավաշոտ։

### Հ Ր Ա Տ Ն

Պատճառէ զանազան փոթորիկս. սառնամանիս. ալէկոծութիւնս. և զայլ օդային պղտորութիւնս. երբեմն և սաստիկ ջերմութիւնս ծանր հիւանդութիւնս. և շարժէ զանձինս 'ի խռովութիւն՝ 'ի վիճաբանութիւն՝ յապստամբութիւն՝ յարեանհեղութիւն, և յայլ բազմատեսակ թշնամութիւն։ Օր հրատին՝ է երեքշաբաթի. և նոյն աւուր ցերեկեան, և երեկոյեան առաջին ժամն։ Կաղանդի օրն եթէ յերեքշաբաթի հանդիպի, ձմեռն լինի ցրտային՝ անձրեւային՝ խաւարչուտ, և շատաձիւն. գարունն՝ դիջային. ամառըն՝ ջեր. աշունն՝ չոր։ Առաջակայ տարին՝ լինի ծովու ալէկոծութիւն, նաւաբեկութիւն, նուազութիւն ցորենոյ, և այլ արմտեաց. միջակութիւն մեղեր, ձիթոյ, և մրգաց առատութիւն մաշի, և հունդ սերմաց՝ պակասութիւն գինւոյ, մահ մանր կենդանեաց. նաև՝ իգաց առաւել հիւանդութիւն և մահ, քան թէ արուաց։ Երևի թէ՝ ոչ սակաւ ազնուապատիւ արք մահուամբ զկեանս փոխիցեն։ Ծնեալն ընդ իշխանութեամբ հրատին՝ լինի թխամարմին. շառատեսիլ. ոլոր, և փոքրամազ, հրաչեայ, մեծապինչ, սակաւամօրուք, և անյարմարատամն, սրտմտօղ՝ չարաբարոյ՝ չարահնար՝ չա-

բախնդաց։ Ղեգուագար՝ կամապաշտ՝ թերահաւատ՝ ա-
բենաբբու՝ ամբարտաւան՝ իգամոլ՝ խաբեբայ՝ ստերդմնեայ՝
անգութ՝ յափըշտակօղ՝ թշնամի խաղաղութեան, և ան-
յագ 'ի վնասահարութենէ։

## Փ Ա Ց Ղ Ա Ծ Ո Ւ Ն

Է այլայլուն՝ փոփոխական՝ և երկարուն, ընդ բարւոյն՝
բարերարոյ. ընդ չարին՝ չարաբարոյ. Օր փայլածուին՝ է
չորեքշաբթի. և նոյն աւուր առաւօտեան, և երեկոյեան ա-
ռաջին ժամ։ Կաղանդի օրն ելթէ 'ի չորեքշաբթի հանդի-
պի, ձմեռն դժուար լինի՝ բայց ոչ սաստիկ ցուրտ. գա-
րունն՝ դէջ, և ոչ գովելի, ամառն՝ բաջ ջեր. և ազնիւ։ Մի-
ջակ ցորեն, և այլ հունդ. կութ գինւոյ՝ ձիթոյ՝ մեղր՝ ա-
ռատ. բայց 'ի տեղիս տեղիս սղութիւն ռոճկաց, և երևի
թէ՝ յաշնան իցէ մահ գլխաւոր արանց. խելառութիւնք.
կողացաւութիւնք. գլխացաւութիւնք. վիժածք. և նաբ համ-
բաւք։ Ծնեալն ընդ իշխանութեամբ փայլածուին՝ մաղա-
սամակարդ լինի. ծանր և փափկամարմին, ունայնախոհ՝
երկրասէր՝ քաղցրախօս՝ յօժարածիծաղ՝ մարդելոյզ՝ հպարտ՝
ստասաց՝ խորամանկ՝ նեղաճակատ՝ երկայնունք՝ սևաչեայ՝
մարմարադէմ՝ նեղաքիթ՝ հաստաշրթն՝ յարմաբակղակ՝ և
սիրօղ սև զգեստուց։

## Լ Ո Ի Ս Ն Թ Ա Գ Ն

Պատճառէ՝ բարեկամութիւնս, խաղաղութիւնս՝ հան-
դարտութիւնս՝ և ջերմեռանդութիւնս, մանաւանդ 'ի ման-
կութեան հասակս։ Իշխէ 'ի վերայ խոհեմ՝ համեստ՝ ա-
մօթխած՝ ներհուն՝ ազատաբարոյ՝ զուարճամիտ, և բարե-
պաշտ անձանց։ Օր լուսնթագին՝ է հինգշաբթի. նոյն ա-



ւուր առաւօտեան, և երեկոյեան առաջին ժամ։ Կաղանդի
օրն ելէ 'ի հինգշաբաթի հանդիպի, ձմեռն անոյշ, գա-
րունն հողմոտ, ամառն ցանկալի, աշունն անձրևային։ Ա-
ռատութիւն ցորենոյ, ռոճկի՝ մրգաց՝ արմատեաց՝ գինւոյ.
և ձիթոյ։ Ծնեալն ընդ իշխանութեամբ լուսնթագին՝ լինի
գեղեցկահասակ. կարմրախայտ՝ փափկամիս՝ հաստերակ՝
բարեձև՝ միջակամատնեայ՝ գոբշահեր՝ մեծաճակատ՝ մեծա-
բերան՝ մեծակտոր՝ հաստաքիթ՝ սևաչեայ՝ ատամնախիտ՝
լայնածնօտ՝ լայնակուրծ՝ և լայնաթիկունք։ Բարուքն լինի
հաւանդարտ՝ համեստակենցաղ՝ բարեհաճոյ՝ անպատիր՝ հաւա-
տարիմ՝ ժուժկալ՝ ընդունակ ամենայն բարեաց, և հանճա-
րոյ։

## Լ Ո Ի Ս Ա Բ Ե Ր Ն

Որ և գիշերավար ձայնի՝ իշխէ 'ի վերայ կանանց երեխա-
յից՝ երաժշտաց՝ բարեբախտ, և զարդարուն անձանց։ Օր
լուսաբերին՝ է ուրբաթ. ժամ՝ նոյն աւուր առաւօտեան,
և երեկոյի առաջինն։ Կաղանդի օրն ելթէ յուրբաթի հան-
դիպի, ջուրք ոչ պակասին. ձմեռն ծանր, և սաստկութիւն
դառն ցրտոյ. գարունն հողմոտ, ամառն դէջ, և անոյշ. մա-
սամբ չոր՝ մասամբ հողմակոծ, և անձրևային։ Ապրուստ
առատ՝ թէև ծանրագին. կութն շատ և լաւ. երևի նշան
աչացաւութեան. ծանր տագնապ մեծանուն, և պատուա-
կան անձանց. տարաձայնութիւն յայլ և այլ կողմունս աշ-
խարհի. և 'ի տեղիս տեղիս գետնաշարժութիւն։ Ծնեալն
ընդ իշխանութեամբ լուսաբերին՝ լինի բարձրահասակ, գը-
ւարճերես՝ աչեղ՝ ծիծաղադէմ՝ հերատարած՝ և արծուաքիթ.
բարուքն ճարտարաբան՝ խոհեմ՝ գթոտ՝ սիրելի՝ համեղախօս՝
գըօսասէր՝ իգասէր և տափածու։

## Ե Ր Ե Ւ Ա Կ Ն

Պատճառէ ջերկս, և գաշխատանս. սով. և ցման. զանձկութիւն՝ զաւերածութիւն՝ և զօրյնատարաս թշուառութիւնս։ Տիրէ 'ի վերայ ծերոց՝ անկելոց՝ և առանձնացելոց. զօշաքաղ՝ վաշխակեր՝ կախարդ՝ գծուծ, և մոայոյզ անձանց։ Օր երևակին՝ է շաբաթ. ժամն՝ առաւօտեան. և երեկոյեան առաջինն։ Կաղանդի օրն եթէ 'ի շաբաթի հանդիպի, չորութիւն. և սղութիւն. ձմեռն երկար՝ հողմակոծ՝ սառսուռ և սակաւիկ անձրևային. գարունն հոսէ, ամառն գէջ, աշունն չոր և հով։ Բազմատեսակ ամուսնութիւն. անկումն հին տանց. երեքօրեայ՝ և չորեքօրեայ տենդ. մահ ծերոց՝ անկելոց ոչխարաց և ապրշմագործ որդանց։ Ծնեալն ընդ իշխանութեամբ երևակին՝ լինի սևամազնեայ, թխադէմ, մեծակզակ, մազոտ, հաստապարունգ. ջլոտ՝ և նեղակուրծ։ Բարուքն ագահ՝ խորախոհ՝ մոայոյզ՝ յամրաշարժ՝ նենգժոտ՝ բղջախոհ՝ առանձնակեաց, և սիրօղ սևաւ հանդերձից։



*Բնական զուշակմունք՝ առ 'ի գիտել բնականաբար զնշանըս Անձրևաց, Հողմոց, Ջերմութեան եւ ալէկոծութեան*

## ՆՇԱՆՔ ՊԱՐԶ, ԵՒ ԼԱՒ ԵՂԱՆԱԿԻ

Առատագոյն անձրևն՝ ջուրն՝ և ձիւնն 'ի ձմրային ժամանակի, նշանակէ զջերմութիւնն գարնան, և ամառան։

Ծիածանն (*որ եւ կոչի երկնային աղեղն*) մինչ յոյժ բարձրացեալ երևի յանձրևային եղանակի, գուշակէ զպարզ, և գլաւ եղանակ։

Ծիածանն, որ յերեկոյեան երևի յարևելեան կողմն՝ սակաւ հողմով, ցուցանէ գլաւ եղանակ։

Փայլակիլն յարևմուտս կոյս 'ի յերկիրն, նշանակէ ըզպարզ, և գլաւ եղանակ։

Մաշկաթև թռչունքն՝ եթէ բազում թռով, և յանսովոր ժամանակի թռչիցին յերեկոյի. ցուցանէ և հետևեալ օրն լինիլ պարզ, և ջերմ։

Եզինք եթէ ընկողմանիցին 'ի վերայ ձախ կողման գուշակումն է պարզութեան եղանակին։

Ագռաւք եթէ կաչաղիցեն յառաւօտուց, է նշանակ լաւ և պարզ եղանակի։

### *Նշանք անձրևոյ*

Ծովային, կամ լճային ջուրն՝ մինչ անդր քան զսովորն անշարժ կայ, նաև թարց արեգական ջերմութիւնն, նշանակեն զանձրև։

Առատաբար, նաև նորապէս հոսեալ ջուրն, և անդր քան զչափն վերացեալն, նշանակէ զյորդ անձրև։

Տակաւ ջուր լինիլն 'ի ձմրային եղանակին, ցուցանէ զգարունն ջրաւէտ լինել։

Եթէ հիւսիսակողմն միայն փայլակեսցէ յերեկոյն, նըշանակէ զապառնի անձրեւն։

Ցաւէտ խայթօղ ջերմութիւնն 'ի յամառն՝ գուշակէ յապառնւոջ անձրեւ լինիլ։

Լուսինն եթէ ունիցի զսեաւ եզջեւր, գուշակումն է անձրեւային եղանակի։

Սպիտակ, և թանձր ամպն կուտակեցեալ, ցուցանէ զանձրեւ որոտմամբ։

### Նշանք հողմոց.

Բաղն, և կամ անդրա կոչեցեալ երկակենցաղ թռչունըն, եթէ բազմիցս թաղիցի 'ի ջուր, և բախբախեսցէ ըզթեւս, է նշան հողմոյ։

Կարմրագոյն ծիածանն, զհողմն գուշակէ։

Յերեկոյին փայլակելն 'ի հիւսիսակողմն միայն, նշանակէ հողմ և ցուրտ լինիլ։

Փայլակելն 'ի կէս աւուր, ցուցանէ հարաւային հողմն։

Ի պայծառ գիշերի, նշանակէ յայնմ կողմանէ գալ հողմն, ուր փայլակի։

Ձուկն մինչ դառնայ, և պատի դէպ յերկիր, նշանակի հողմ։

Ի յերեսն պայծառ երկնից մինչ փոքրիկ ամպք տարածեալք լինին, նշանակի մեծ հողմ լինիլ։

Դլփին ձկունքն, այսինքն եօնուզ պալըխըն՝ մինչ խաղալով շրջին 'ի խաղաղ ծովու ցուցանի հողմ գալ յայնմ կողմանէ՝ ուստի գան նոքա։

Լուսինն մինչ երեւի սպիտակ, և կարմիր շրջանակաւ, նշանակի հողմ։

### Նշանքն ջերմութեան.

Փայլակելն 'ի պայծառ ժամանակի մինչ օդն է ջինջ. նըշա-



նակէ ջերմութիւն։

'Ի զարնան, և 'ի յաշնան ժամանակի՝ եղեամ անկա-
նիլն, նշանակէ լինիլ լաւ և ջերմ եղանակ, և օր։

Ագռաւք մինչ կան ընդդէմ արեգական, և կտուցօք բո-
րեն զինքեանս, գուշակի լինիլ եղանակն ջերմային։

Քառայօն թռչունքն՝ մինչ թռչին յերեկոյին ժամու,
ցուցանի լինիլ ջերմ եղանակ։

### Նշանք ալէկոծութեան, եւ մրրկանաց

Մինչ տտաւոր աստղ երեւի, նշանակէ զալէկոծութիւն,
և զմրրիկ։

Մինչ շուրջ զլուսնիւ երեւին կանանչ շրջանակք, և
պղտորութիւնք, նշանակի ալէկոծութիւն։

Մինչ նոյն շրջանակք իցեն ճապաղք, և կանաչ, և կամ
սեւ գունով, նշանակի լինիլ մրրիկ մեծ։

Սպիտակ, և թանձր ամպն երեւեալ յամարայնի, գու-
շակէ զալէկոծումն, և զմրրկումն եղանակին որոտմամբ
հանդերձ։

Ոչխարք և եզինք մինչ քորեն ոտիւք իւրեանց զեր-
կիր՝ 'ի յաշնան, և մերձ իւրերաց ընկողմանին, նշանակի
մրրկային լինել ձմեռն։

Ցերկոյին որոտալն, նշանակէ զխառնակումն եղա-
նակին, և 'ի սուղ ժամու լինի ալեկոծութիւն և մրրիկ։

### Նշանք լուսնի, որովք կարէ ճանաչիլ պայծառ, եւ խառնակ եղանակն

Նոր լուսինն՝ եթէ տեսանիցի նուրբ՝ պայծառ՝ և ջինջ՝
'ի յերրորդում, կամ 'ի չորրորդում աւուր, նշանակէ զպայծա-
ռութիւն եղանակին։

Կիսաբոլոր լուսինն՝ եթէ երևիցի յոյժ կարմիր, նըշանակէ զհողմ։

Եթէ երևիցի նսեմ, և սեաւ ՚ի յոմանս մասունս իւր, ցուցանէ զանձրև։

Եթէ երևիցի սեաւ, և բթացեալ եղջերօք, նշանակէ զանձրև, և զջուր։

Եթէ երևիցի կարմիր, և միզապատ շրջանակաւ և բակիւ, ցուցանէ զալէկոծութիւն և զկարկուտ։

Լրացեալ լուսինն՝ եթէ ունիցի ՚ի շրջապատն իւր զսեաւ բիծ ինչ, նշանակէ զամպ և զանձրև։

Եթէ իցեն շուրջ զլուսնիւ երկու. կամ երեք շառաւիղք սեաւ ամպով ցուցանի ալէկոծումն։

*Եւ ծանիր աստանօր, զի լուսինն ունի զչորս ժամանակս. եւ զչորս մասունս*

Առաջին մասն և ժամանակն, որ պարունակէ զեօթն օր. նաև է ջերմ և խոնաւ, նման գարուն եղանակի։

Երկրորդ մասն, և ժամանակն՝ նմանապէս պարունակելով զեօթն օր, գոլով ջերմ և չոր, նման ամառան եղանակի։

Երրորդ մասն ևս ունելով զեօթն օր, նաև զցրտութիւն և զչորութիւն, նման աշնան եղանակի։

Չորրորդ մասն նմանապէս պարունակելով զայնքան աւուրս, և գոլով ցուրտ և խոնաւ, նման ձմեռային ժամանակի։

*Նշանք արեգական, ՚ի ձեռն որոց ճանաչիլ կարէ եղանակն*

Արեգակն մինչ երևի պարզ՝ ջինջ՝ և յոյժ պայծառա-



փայլ, գուշակէ զլաւ եղանակ՝ ոչ ունենալով զոնեայ ըզփոքր ինչ ամպ։

Արեգակն մինչ հակի առ մուտն, պարզ՝ լուսաւոր՝ և թարց ամպոյ, նշանակէ պարզ լինիլ հետևեցեալ օրն։

Եթէ հակիցի ՚ի մուտն՝ պարզ և առանց ամպոյ՝ բայց մերձ ինքեան ունիցի զճաճանչաւոր և հրափայլ ամպս, է նշան՝ թէ ոչ անձրևէ յայնմիկ գիշերի, և ոչ ևս ՚ի հետևեալ աւուրն։

Արեգակն մինչ հակի ՚ի մուտն՝ ունելով մերձ ինքեան ըստ նկատման մեր՝ կարմրագոյն, ճաճանչափայլ և ճապաղ ամպս, հաւաստի նշան է՝ թէ ոչ անձրև։

Արեգակն մինչ կարմիր, և նսեմաշողթ երևի նշանակէ զանձրև։

Արեգակն մինչ բարձրանայ ՚ի կորնթարդն երկնից, եթէ տեսանիցի ՚ի ճառագայթի իւրում ամպ ինչ մթին և սեւ, նշանակէ զանձրև։

Արեգակն ՚ի հակիլ իւրում ՚ի մուտն, եթէ ունիցի ՚ի ձախ կողմ իւր զսեաւ ամպ ինչ նշանակէ զարգարումն անձրևոյ։

*Նշանք ծիածանի որովք գուշակի եղանակն*

Ծիածանն՝ եթէ յամպային, և յանձրևային ժամանակի երևի, նշանակէ զպարզութիւն։

Ծիածանն՝ եթէ առակցեալ տեսանի արեգական՝ յելանելն, կամ ՚ի մտանելն, նշանակէ զպարզութիւն եղանակին հանդերձ հողմով։

Մինչ երկու ծիածանք երևին ՚ի միասին, նշանակէ զանձրև։

Ծիածանն եթէ երևի ՚ի պարզ ժամանակի, յուցանէ զհողմ։

Ծիածանն եթէ յոյժ կարմիր և դեղին երեւիցի, նշա-
նակէ զհողմ։

Ծիածանն եթէ երեւի՛ի յառաւօտեան ժամու, գուշակէ
զհողմ դէպի 'ի յերեկոյին ժամու։

Ծիածանն եթէ երեւի յառաջ քան զկէս օրն, նշանա-
կէ զանձրեւ և զհողմ։

Ծիածանն եթէ երեւի շուրջ զկէս աւուրբ, ցուցանէ
զջուր։

Ծիածանն եթէ երեւի զկնի կէս աւուր. նշանակէ զսա-
կաւ անձրեւ, և զլաւութիւն եղանակին։

Ծիածանն եթէ երեւիցի արտաքոյ քան զսովորական
եղանակն, և ժամանակն տարւոյն, գուշակէ զպարտութիւն
և զչորութիւն։

Ուստի գիտել պարտիս յայսմիկ տեղւոջ, զի բազում
հեղինակք հաստատեն, թէ յառաջ քան զգալուստն Քրիս-
տոսի 'ի դատաստան զքառասուն ամ ոչ երեւելոց է բնաւ
ծիածան, 'ի նշան զարհուրելի վրէժխնդրութեան Աստուա-
ծայնոյ, որ սպառնացեալ լինի դէպ առ դատապարտելի
մեղաւորս։ Այլ և ասեն նոյն հեղինակք, թէ նաև յառաջ
քան զջրհեղեղն՝ ոչ տեղացեալ իցէ երբէք անձրեւ 'ի վերայ
երկրի. այլ ամենայն երկրի ոռոգանեցեալ 'ի յառատութենէ
ջուրց աղբերաց և գետոց։ Եւ վասն այսորիկ պտուղք՝
որք էին անդր քան զջրհեղեղն, յոյժ քաղցրագոյնք էին քան
զպտուղս այժմոյս, և խոտեղէնքն ես ունէին զառաւել ներ-
գործութիւնս և զօրութիւնս։



Համառօտ ընազննութիւն մարդկային մասանց, հաւաք-
եալ 'ի գրեանց Արիստոտէլի եւ յայլոց հեղինակաց առ
'ի ճանաչել զբնական բարս եւ զյօժարութիւնս նոցին

Ցաղագս Գլխոյ

Գլուխ՝ որ է սլուր դէպ 'ի գագաթն, նշանակէ զկայունու-
թիւն, զհաստատութիւն, զանուսումնականութիւն, զնա-
խանձոտութիւն և զանպատկանութիւն առ իմաստս։
Գլուխ՝ որ է մեծագոյն քան զպատկանն, նշանակէ
զտգիտութիւն և զյիմարութիւն։
Գլուխ՝ որ է միջակ կազմողութեամբ, բացայայտէ ըզ-
նըբութիւն. զուշիմութիւն, զխորագիտութիւն, և զյիշո-
ղականութիւն։
Գլուխ փոքր՝ բայց ոչ առաւել երկայն. նշանակէ ըզ-
հանճարհեղութիւն և զխոհեմութիւն։
Գլուխ երկայն և կակող, բացայայտէ զզգուշութիւն
և զկարգադրութիւն։
Գլուխ փոքր՝ բայց երկայնավիզ, արտայայտէ զտա-
Գլուխ փոքր՝ բայց երկայնավիզ, արտայայտէ զտկարութիւն։
բաբախտութիւն, զսակաւախելութիւն, և զտկարութիւն։
Գլուխ տափարակ. ցուցանէ զցոփութիւն և զանըզգ-
նութիւն։

Ցաղագս Ճակատու

Մեծագոյն ճակատն, արտայայտէ զծուլութիւն, ըզ-
յամրութիւն, և զփոքրախելութիւն. որպէս տեսանի 'ի
յեզինս։
Նեղագոյն և փոքրագոյն ճակատն, ցուցանէ զանու-
սումնականութիւն, զտգիտութիւն և զչատակերութիւն։
Բոլորակ ճակատն, նշանակէ զբարկութիւն, և զաներ-
ջանկութիւն։

Քառակուսի և չափաւոր ճակատն. ցուցանէ զզգօնութիւն, և զմեծազգիութիւն, որպէս երևի 'ի յառիւծն։

Երկայն ճակատն, նշանակէ զիմաստութիւն, և զուշիմութիւն։

Փոսորակ ճակատն, գուշակէ զամօթխածութիւն և ըզպարկեշտութիւն։ Կնճռոտեալ ճակատն. ցուցանէ զտըխրականութիւն և զտրտմահոծութիւն։

Դիւալի ճակատն ցուցանէ զհամարձակն, և նմանի ցլոյ և առիւծոյ. և օրինակ երևի 'ի շունս, որք եթէ ունիցին զբրդալի ճակատս՝ յոյժ բարկացօղք լինին. բայց եթէ ունիցին զմազազուրկ ճակատս՝ երկչոտք են։

## Յաղագս Յօնից

Յօնք՝ որք են վայրահակք դէպ 'ի քունն, ցուցանէ զնենգժոտութիւն և զպատրողութիւն։

Յօնք՝ որք հակեալք են դէպ 'ի ռունգն, արտայայտէ զնախանձ և զքինախնդրութիւն։

Յօնք՝ որք են կամարաձևք՝ հասեալք մինչ ցռունգն, նշանակէ զուսումնասիրութիւն և զնրբամտութիւն։ Բայց եթէ յոյժ առակցիցին անդ առ իրեար, նշանակէ զսակաւիմաստն, և զտխուրն։

Յօնք՝ որք են երկայնամազք, և լայնադիրք՝ ցուցանէ զգազանաբարոյութիւն։

Յօնք՝ որք են ճախատամազք, նշանակէ զմեղմն, ըզհեզն և զշըջանկատն։

Մի հաւատասցես զքեզ երբէք առնն իմաստունք, մարգոյ՝ որ ունիցի 'ի մի կցեալ զյօնս իւր վայրահակաբար և միշտ 'ի խոնարհ նկատիցէ. նաև այնմ՝ որ 'ի ծնէ շլանկատ ծնանիցի, զի ըստ մեծի մասին, և զրեթէ՝ բնաւք այսպիսիք նենգաւորք են։



## Յաղագս Երեսաց

Երես վտիտ և նիհար՝ արտայայտէ հոգունակն և զփոյթեռանդն։

Փոքրագոյն երեսն, բացայայտէ զփոքրոգութիւն, որ ցուցանի նմանութեամբ կապկի։

Մեծ երեսն՝ արտայայտէ զյամրն, և զդանդաղկոտն, որպէս երևի 'ի յեզն և 'ի յէշն։

Ստուար, և լի երեսն՝ ցուցանէ զփափկասէրն և զհեշտասէրն։

Յոյժ բոլորակ երեսն՝ ծանուցանէ զտգիտութիւն։

Տգեղ երեսն՝ հազիւ կարէ ունիլ զբարի վարս, և սովորութիւնս։

Երես՝ որ բազմիցս քրտնի դիւրապէս վասն սակաւ շարժմանց, և աշխատութեանց, արտայայտէ զխորամանկութիւն, զքսութիւն, և զշատակերութիւն։

Երես՝ որ է փոսորակ 'ի ճակատոյ մինչև 'ի կզակն, կամ 'ի բերանն, նշանակէ զվատ բարս, և սովորութիւնս, քանզի զայսպիսիս՝ տեսանեմք լեալ բազմիցս կաշառասէր, տոկոսատու և գող։

## Յաղագս Աչաց

Աչք՝ որք արագապէս, և զանազանապէս շարժի, և սը-րապէս տեսանէ, նաև մերթ դադարի. նշանակէ զանհաւատարմութիւն, զգողութիւն, և զնենգութիւն, և ունիլ զպէսպէս չարիս 'ի սրտի։

Փոքրագոյն աչքն, ցուցանէ զտգիտութիւն և զփոքրոգութիւն. զարբեցողութիւն և զտխրականութիւն. որոյ նմանութիւն տեսանի 'ի կապիկս։

Աչք՝ որ է մեծ, փոս, արտայայտէ զգողն և զաւազակն։

Զափաւոր աչքն՝ որ սակաւ ինչ հակի որպէս առնն ո-

մանք՝ 'ի կապուտաշորթն՝ նշանակէ զբարութիւն, զնուրբ իմացականութիւն, զհաւատարմութիւն, զհետաքրքրութիւն, զբարի բնութիւն, և զխաղաղասիրութիւն։

Խաժակն՝ բայց փայլուն, բացայայտէ զյանդգնութիւն, և զհակումն 'ի չարութիւն։

Ջաւարթագին, քաղցրանկատ աչքն նշանակէ զերկարակեցութիւն։

Ամենևին սեաւ աչքն, նշանակէ զերկչոտութիւն, ըզտկարութիւն, և զշահասիրութիւն։ Բայց մինչ երևին անդ շիթք սակաւ ինչ մեղուագոյնք. նշանակէ զարդարամիտն, զուշիմն, և զարին։ Եւ մինչ ոմանք յայնցանէ երևին քառակուսիք. նշանակէ զունօղն գերազանց բարուց։

Աչք՝ որ այնքան խորանկեալ է, մինչ զի թուի թէ ծածկեալ իցէ, նշանակէ զչարագործութիւն և զբարկութիւն, զվատթար սովորութիւն, զյանդգնութիւն, զխստաբարոյութիւն, զստաբանութիւն, զմոլեխիրութիւն, զվավաշոտութիւն, զհպարտութիւն, զդաւաճանութիւն, զնենգութիւն և զնախանձ։

Կարի իմն կոկոն աչքն՝ կարմրաշորթ և փոքր, նշանակէ զանձնասիրութիւն լեզուին և զանհաստատութիւն սրտին։

Նեղագոյն աչքն, արտայայտէ զանկայնութիւն և ըզդիւրափոխութիւն յամենայն գործառութիւնս։

Դժուարահայեաց աչքն՝ եթէ իցէ գիջային, ցուցանէ զճշմարտախօսութիւն, և զկարգադրութիւն 'ի առնելիս։

Ցոյժ կապտագոյն աչքն՝ դեղին թարթչօք, ցուցանէ զվատութիւն և զխաբկոտութիւն։

Աչք՝ որ բազմիցս փակի և բանի, արտայայտէ զերկչոտութիւն, և զթուլութիւն։

Մթագոյն աչքք. ցուցանէ զբղջախոհութիւն և զգինէսիրութիւն։



*Յաղագս Ռնկան*

Ռունկն՝ որ է մեծ և լայնանիստ՝ նշանակէ զվավաշոտութիւն, զնենգժոտութիւն, զյանդգնութիւն, զնախանձ, զագահութիւն, զստաբանութիւն զժլատութիւն, զբթամրտութիւն, և զերկչոտութիւն։

Մեծ ռունկն՝ բայց ոչ լայնանիստ, նշանակէ զբարեմրտութիւն և զլաւութիւն:

Արծռունկն այսինքն քիթ՝ որ կեռացեալ է նման կտուցի արծուոյ, արտայայտէ զվրէժխնդրութիւն, զմեծաոգւութիւն, զկորովութիւն, և զվավաշոտութիւն։

Բացունչն այսինքն այնպիսի ռունկն, որ ունի զերկուպինչս իւր բաց, նշանակէ զւարթամտութիւն, և զկորովութիւն։

Ռունկն՝ որէ սուր և բարակ 'ի ծայրն, ցուցանէ զգայրացկոտութիւն, զկռուարարութիւն, և զաղաղկոտութիւն, որպէս երևի օրինակն 'ի շունն։

Ռունկն՝ որ է բոլորակ և կլորակ 'ի ծայրն արտայայտէ զմեծաոգւութիւն, որպէս տեսանի օրինակն 'ի յառիւծն։

Ռունկն երկայն, նշանակէ զթեթևամտութիւն, և զդիւրաշարժութիւն։

Ռունկն կարի փոքրագոյն, ցուցանէ զգողութիւն։

Ռունկն յոյժ հակեցեալ 'ի մի կողմն, բացայայտէ զանարգարն։

Ռունկն՝ որ հաւասար գծիւ իջանէ վերուստ 'ի վայր՝ ոչ ունելով զբարձրութիւն և զցածութիւն, նշանակէ զաբիութիւն, և ըզխոհեմութիւն։

*Յաղագս Ականջաց*

Միջակ ականջն՝ որ ոչ իցէ մեծ, և ոչ փոքր, նշանակէ զհամեստն, և զկրթեալն։

Մեծ ականջն՝ որ 'ի վեր կոյս բարձրացեալ է. ցուցանէ զանխոհեմութիւն, զշատախօսութիւն, և զպարզութիւն յիշողականութեան, և զերկարութիւն կենաց։

Փոքր ականջն՝ արտայայտէ զչարամտութիւն, զխոբամանկութիւն, ըզնախանձոտութիւն, զանխորհրդականութիւն, և զկարճութիւն կենաց։

Նուրբ և երկայն ականջն. արտայայտէ զնախանձոտութիւն։

Ականջն՝ որ ընկողմանեցեալ կայ 'ի վերայ գլխոյ, նըշանակէ զբթամտութիւն և զծուլութիւն։

Բոլորակաձև ականջն, նշանակէ զանհասկացողութիւն, և զանխելամտութիւն։

Գիսաւոր ականջն, ցուցանէ զլաւ ունկնդրութիւն և զանսացողութիւն։

### Յաղագս բերանոյ եւ Շրթանց

Բերան՝ որ է մեծագոյն, և լայնաձիգ. բացայայտէ զշատակերութիւն զհամարձակութիւն, զպատերազմասիրութիւն և զանգթութիւն։

Բերան փոքր, նշանակէ զփոքրասրտութիւն և զկանացի բարս։

Շրթունք մեծ, ցուցանէ զգիտութիւն, զթանձրամտութիւն, և զկռուարարութիւն։

Շրթունք կարմրագոյն, նշանակէ զմաքրութիւն, նաև զբարի և զառաքինական կազմութիւն։

Շրթունք խամրացեալ և գունազուրկ, բացայայտէ զպակասութիւնն առաքինութեան և բարոյականութեան։

Շրթունք հաստ, և սակաւ մի կախեալ յարտաքս 'ի բերանոյ, նշանակէ զտարտամութիւն, զխակամտութիւն, ըզդիւրահաւանութիւն, և զանհաճելի բարս. որպէս երևի 'ի ձիս, և 'ի ջորիս։



Շրթունք նուրբ, և 'ի վեր կոյս սակաւ ինչ ստուար՝ ընդ նմին նաև բերան մեծ, բացայայտէ զմեծասրտութիւն, զուժեղութիւն. զազատաբարոյութիւն. և զիմաստութիւն։

Շրթունք այնպէս վերացեալ 'ի վեր, մինչև երևիլ լընտերաց, ցուցանէ զկռուարարութիւն, զչարակնութիւն, զինքնահաւանութիւն, և զլեզուագարութիւն։

Չափաւոր շրթունք ըստ քանակութեան, և ըստ որակութեան, ցուցանէ զխորհրդապահութիւն, զխորագիտութիւն, զքաջութիւն, և զուսումնասիրութիւն։

Շրթունք նուրբ՝ ունելով զբերան փոքր, նշանակէ զեղեռնագործութիւն, և զթուլասրտութիւն։

### Յաղագս Լեզուի եւ Ատամանց

Լեզու թանձր և լայն նշանակէ զբթամտութիւն և զկոպտութիւն։

Լեզու սպիտակ, բացայայտէ զաղքատութիւն և զողորմելիութիւն։

Լեզու կարմիր և բարակ. ցուցանէ զսրամտութիւն առ 'ի ստանալ զիրս և զստացուածս բազումս։

Երկայն և հաստ ատամունքն ցուցանէ զորմահոծութիւն, զարբեցողութիւն և զեղեռնագործութիւն։

Հաստ և լայն ատամունքն, որք հակին դէպ 'ի յարտաքս, կամ դէպ 'ի ներքս. նշանակէ զպագշոտութիւն և զհեշտասիրութիւն։

### Յաղագս ծնօտից. որ ասի չէնէ

Ծնօտ փոքր և կարճ նշանակէ զխստաբարոյութիւն, զնախանձոտութիւն և զմոլեկանութիւն։

Ծնօտ բոլոր և կլորակ նշանակէ զիգաբարոյութիւն և զմեղկութիւն։

Ծնօտ երկայն և սուր արտայայտէ զնենգժոտութիւն, և զաւանել բարկացողութիւն։

Ծնօտ մսալի 'ի ներքին կողմանէ. նշանակէ զըղջախոհութիւն։

Ծնօտ չափաւոր, և իբր քառակուսի. բացայայտէ զբարեբարոյութիւն։

*Ցաղագս Հերաց. թէ գլխոյն, եւ թէ ծնօտից*

Խարտեաշ՝ այսինքն կիսասև և կակուղ հերքն. արտայայտեն զնրբամտութիւն և զխոհականութիւն։

Գանգուր և գռուզ հերքն. նշանակէ զհպարտութիւն, զվատթարութիւն և զաներկչոտութիւն։

Հերք՝ որք բուսեալք են դէպ 'ի ճակատն. ցուցանէ զանզգամութիւն և ըզգազանաբարոյութիւն։

Հերք շիկագոյն և հաստ. նշանակէ զանխոհականութիւն և զանխելամտութիւն։

Հերք հաստագոյնք և խիստք. ցուցանեն զկամակորութիւն և զինքնահաւանութիւն։

Հերք սպիտակ. նշանակեն զերկչոտութիւն և զամօթխածութիւն։

Ճաղատ մօրուսն նշանակէ զըղջախոհութիւն և զհեշտասիրութիւն։

Բարեկազմ մօրուսն արտայայտէ զբարեբարոյութիւն և զհամեստութիւն։

*Ցաղագս Ձայնի*

Ձայն հաստ՝ նման փողոյ՝ նշանակէ զզօրեղութիւն և զարիութիւն։

Ձայն հաստ և բարձր ցուցանէ զհամարձակութիւն և զճոռոմաբանութիւն։



Ձայն բարակ և մեղմ արտայայտէ զտխրականութիւն. զկարծկոտութիւն և զերկչոտութիւն։

Ձայն միջակ ոչ հաստ և ոչ բարակ բացայայտէ ըղխոհեմութիւն և զճշմարտախօսութիւն.

Ձայն՝որ է նման ձայնի ոչխարաց, կամ այծից է նըշան տգիտութեան։

Ձայն՝ որ ընդ ըռունկսն արտելանէ. բացայայտէ ըղստաբանութիւն և զչարակամութիւն։

Մարդ՝ որ հազիւ թէ ծիծաղի. է նրբիմաց, և ուշիմ։

Մարդ՝ որ բազմիցս ծիծաղի. է անխոհեմ և սակաւիմաց։

Մարդ՝ որ բարձրաձայն ծիծաղի է ստաբան և ստասաց։

Մարդ՝ որ թարց պատճառի ծիծաղի և 'ի ծիծաղիլըն բազմիցս հազայ, կամ շարժէ զգլուխն. է անհաւան, անմիտ և անխելք։

Մարդ՝ որ նուազ և ցանցառակի ծիծաղի այսինքն սէյրէկ. է մտացի, ժլատ և հնարաւոր 'ի արհեստն. զոր ունի։

*Ցաղագս պարանոցի. որ և ասի վիզ*

Վիզ՝ որ է հաստ, բայց ոչ գիրութեամբ մսոյ, այլ մեծութեամբ ոսկերաց և ջլաց. նշանակէ զուժեղութիւն և զզօրութիւն։

Վիզ հաստ և մսաւոր. ցուցանէ զբարկացողութիւն և զայրացկոտութիւն։

Վիզ երկայն և բարակ բացայայտէ զերկչոտութիւն և զչարախորհուրդ լինիլն։

Վիզ կարճ. ցուցանէ զհամարձակութիւն և զյանդըգնութիւն։

Վիզ վերամբարձ նշանակէ զապստամբութիւն և ըզյանդգնութիւն։

Զգոյշ և սահ լինիլ պարտիս առեն իմաստունք՝ յայն-
պիսեաց արանց, որք ունին բնականաբար զպակասութիւն.
և զերևելի տգեղութիւն ինչ 'ի յոմանս անդամս, զի հա-
մանշանեցեալք են 'ի բնութենէ արատաւորութեամբ։

*Ցաղագս Թիկանց. Լանջաց Ստեանց եւ Որովայնի*

Թիկունք լայն ցուցանէ զկորովութիւն և զքաջու
թիւն։

Թիկունք միջակ արտայայտէ զգովելի անձն։

Թիկունք կարճ նշանակէ զագահութիւն և զընչասէ-
րութիւն։

Լանջք՝ որ ասի կուրծք, եթէ ծածկեցեալ իցէ մա-
զիւք մինչև ցորովայնն, նշանակէ զանկայնութիւն, զանգթու-
թիւն և զանկրօնութիւն։

Լանջք՝ որ միայն ինքն է մազոտ, ցուցանէ զսրտեղու-
թիւն։

Լանջք մսալի ցուցանէ զանխելամտութիւն և զյիմա
րութիւն։

Լանջք՝ որ է երկայն քան զփորն. նշանակէ զանխոհե-
մութիւն։

Լանջք մեծ արտայայտէ զմեծաոգիութիւն և զհա-
մարձակութիւն։

Ստինք՝ որք են կախեալք 'ի կրծոց, նշանակէ զհզօ-
րեղութիւն և զզօրաւորութիւն։

Որովայն մեծ արտայայտէ զհպարտութիւն, և զրղջա-
խոհութիւն։

*Ցաղագս Բազկաց*

Բազուկն՝ եթէ այնքան երկար եղիցի, որ ձեռն մին-
չև ցծունկն հասանիցի, նշանակէ զնրբիմացութիւն և զու-
ժեղութիւն. նաև զյանդգնութիւն և զիղձ իշխելոյ։

Բազուկ այնքան կարճ, որ մինչև 'ի բարձսն հասանի-



ցի, Նշանակէ զշարամտութիւն և զչարախնդրութիւն։
Բազուկ՝ որ է յոյժ մազալից. ցուցանէ զվավաշոտու-
թիւն։
Այն՝ որ 'ի խօսիլն յաւէտ շարժէ զձեռն և զբազուկն.
է նախանձոտ, շատաբան և նանրաց։
Այն՝ որ 'ի խօսիս ոչ տարածէ զձեռն և զբազուկն
է հասունակ մտօք, մեծախորհուրդ և խոհեմ։

*Ցաղագս Ձեռաց. Մատանց. եւ Եղնգնաց*

Ձեռք՝ որ է առաւել կարճ և փոքր. նշանակէ զուղ-
ղութիւն և զհնարաւորութիւն։
Ձեռք երկայն բարակ և բարեկազմ. նշանակէ զբարի
սովորութիւն, զերկարութիւն կենաց, զուղղասիրութիւն,
զպատուասիրութիւն և զերկիւղածութիւն յԱստուծոյ։
Ձեռք ստուար՝ եթէ ունիցի զկարճ մատունս քան ըղ-
չափն աւելի. արտայայտէ զնենգաւորութիւն, զղաքանա-
կալութիւն և զպօղութիւն։
Ձեռք թիւր. նշանակէ զշատակուլութիւն և զշատա-
խօսութիւն։
Մինչ երբեմն դողայ ձեռք ուրուք 'ի յառնուլն զիր ինչ
նշանակէ՝ թէ շուտով դառնայ 'ի բարկութենէ և է մարդ
բարի բնութեամբ և ամօթխած։
Մատունք մեծ և վայրակոր նշանակէ զչարաբարոյու-
թիւն և զագահութիւն։
Մատունք՝ փոքրիկ և բարակ արտայայտէ զյիմարու-
թիւն և զնուազախելութիւն։
Մատունք փոքր և հաստ նշանակէ զհամարձակութիւն
և զչարակնութիւն։
Եղունգն սպիտակ՝ տափակ՝ կակուղ նօսր՝ կարմրագոյն՝
և կարի փայլուն նշանակէ զուշիմութիւն և զհնարաւորութիւն։
Եղունգն կոր և գար ցուցանէ զյափշտակողութիւն և
զըթամտութիւն։

Եղունգն յոյժ կարճ արտայայտէ զչարակամութիւն և զչարակնութիւն։

### Յաղագս Սրունից եւ ոտից

Սրունք բարակագոյն նշանակէ զտգիտութիւն և զմոռացկոտութիւն։

Որունք հաստագոյն ցուցանէ զհամարձակութիւն և զպարխութիւն։

Սրունք ջղալից նշանակէ զուժեղութիւն։

Սրունք կարճ և հաստ. արտայայտէ զանբարոյականութիւն և զտմարդութիւն։

Սրունք փայլթախ բացայայտէ զվատութիւն։

Ոտք մսալից նշանակէ զառաւել ցայտկոտութիւն։

Ոտք փոքրիկ նշանակէ զթեթևանձնութիւն։

Ոտք հաստ և կարճ արտայայտէ զառաւել տկարութիւն։

Ոտք բարակ և կարճ ցուցանէ զչարաբարոյութիւն։

Ոտք երկարագոյն նշանակէ զնենգաւորութիւն։

Ոտք բարակ և ծայրքն վերամբարձեալք, արտայայտէ զդարանակալութիւն։

Արձակաքայլն ցուցանէ զմեծասիրտ գոլն։

Արագընթացն, որ զսպէ զինքն և կորակնէ գերեսն և կծկէ զբոլոր մարմինն նշանակէ զերկչոտութիւն, զժլատութիւն և զագուլսաբարոյութիւն։

Մանրաքայլ արագօղն, չարաբարոյ և վատուժ ասի լինիլ։

### Յաղագս գունոց մարմնոյ

Սևամորթն ցուցանէ զխորամանկութիւն և զխորագիտութիւն։

Սպիտակ և կարմիր գոյնն նշանակէ զուժեղութիւն և զսրտոտութիւն։



Սպիտակ գոյնն՝ հանդերձ դեղնութեամբ, ցուցանէ զպակասութիւն ուժոյն։

Հրային գոյնն՝ հանդերձ փայլուն աչօք. ցուցանէ ըղձկտումն առ մոլեգնութիւն։

Միջակ գոյնն՝ 'ի մէջ սպիտակին և սևին, ցուցանէ զբարեբարոյութիւն և զուշիմութիւն։

### Յաղագս կանոնաց քննազննելոյ

Նախ պարտիս հասարակապէս պահել 'ի մտի քում. զի (ըստ մեծին Ալպերտոսի) չափակից անդամքն, ըստ գունոյն, ըստ ձևոյն, ըստ քանակութեան, ըստ կալուածոյն և ըստ շարժման. ցուցանէ զբարի մտացն զընդաբոյս յարմարութիւն։ Բայց անդամքն որք տեսանին ներհակք գտանիլ ասացելոց յատկութեանց, ցուցանեն զթիւրամիտսն։

Երկրորդ՝ պարտիս գիտել, զի թէպէտ նշանօք անդամոց ճանաչին բարք և յօժարութիւնք մարդկային, բայց ոչ գնեն նոքա զհարկաւորութիւն. իբր թէ 'ի հարկէ այնպէս լինիլ պարտի մարդ և այլ ցուցանեն միայն զձկտումն և զհակումն բնութեան։

Երրորդ՝ վասն արտաքին նշանաց՝ զորոց ասացաւ մինչև ցայժմ, ոչ է պարտ խոկայն ենթադատել զմարդն. զի գուցէ լինիցի նշան պատահական և ոչ բնական, կամ գուցէ յաղթեալ իցէ զայնպիսի նշանեցեալ հակմունս՝ ներհակ սովորութեամբ. կամ թէ՝ թերևս յետս ընկրկեալ ներգործութեամբ ազօթից։

Չորրորդ՝ զի նախապետաբար 'ի յաչքն կայանայ կատարեալ քննազննութիւնն. ուստի եթէ ենթադատումն աչաց համաձայն գտանիցի ընդ քննազննութեան այլոց մասանց, յայնժամ է ստոյգ քննազննումն և ենթադատումն։ Իսկ եթէ տարաձայն գտանիցի յաչաց, յայնժամ հաւանելի երևիցի ենթադատումն, որ լինի զաչացն. Վասն որոյ ասեն քննագէտք բազումք, թէ աչքն է կարապետ սրտին։

Գուշակութիւն յորքանութենէ լուսնոյն, թէ որպիսի իցէ ծնեալն. զերակ թողուլն՝ կամ զարիւն յուզելն։

Լուսնոյ յառաջին աւուր ծնեալն լինի կարճակեաց։ Հիւանդացեալն երկբայի յաւուրս 14, 21. և 28. յետոյ առողջանայ։ Զերակ թողուլն զեղնահարէ։

2 Աւուր ծնեալն՝ լինի երկայնակեաց, հիւանդացեալն՝ մինչև 12. օրն երկմիտ, յետոյ լաւանայ. զարիւն յուզելն՝ բերէ և պատճառէ զտենդ։

3 Աւուր ծնեալն՝ լինի կարճակեաց. հիւանդացեալն՝ տագնապի, իսկ յետոյ առողջանայ. զարիւն թողուլն վնաս է։

4 Ծնեալն՝ թոյլ. հիւանդացեալն մինչև 'ի 21. օր տագնապի, ապա լաւանայ. արիւն յուզելն միջակ։

5 Ծնեալն՝ տղայ միռանի. և հիւանդացեալն երկարանայ՝ ապա լաւանայ. արիւն թողուլն քսոտ առնէ։

6 Ծնեալն՝ ցաւագար. հիւանդացեալն մերձ հետևեալ ամսոյն 5 աւուրն պարզի. արիւնն՝ շահաւէտ։

7 Ծնեալն՝ երկայնակեաց. հիւանդացեալն երկմտի արիւնն՝ վնասէ։

8 Ծնեալն՝ յերկտասարդութեան մեռանի. հիւանդացեալն զկնի 14. աւուրց մահառիթ. արիւնն վնասէ։

9 Ծնեալն թուլամարմին. հիւանդացեալն տագնապի՝ և լաւանայ. արիւնն քսոտէ զմարմինն։

10 Ծնեալն երկայնակեաց. հիւանդացեալն մահառիթ. արիւնն դեղնացաւութիւն բերէ։

11 Ծնեալն վտանգահոծ. հիւանդացեալն՝ յերիս աւուրս պարզի. արիւնն վնասէ։

12 Ծնեալն միջակակեաց. հիւանդացեալն զկնի 15. աւուրց մահառիթ. արիւնն կարի շահաւէտ։

13 Ծնեալն կեցցէ. հիւանդացեալն 'ի 18. երրորդում աւուր վտանգի. արիւնն վնասէ։

14 Ծնեալն տկար. հիւանդացեալն 15. օր վտանգի, յետոյ պարզի. արիւնն հիւանդութիւն բերէ։



15 Ծնեալն երկայնակեաց. հիւանդացեալն զկնի չորից աւուրց մահու վտանգի. արիւնն շահաւէտ։

16 Ծնեալն առոյգ. հիւանդացեալն յետ 28. աւուրց առողջանայ. արիւնն վնասակար։

17 Ծնեալն առոյգ. հիւանդացեալն յետ 18. աւուրց լաւանայ. արիւնն վնաս բերէ։

18 Ծնեալն երկբայ. հիւանդացեալն զկնի 3 օրն լաւանայ. արիւն թողուլն շահաբեր։

19 Ծնեալն անոյժ. հիւանդացեալն զկնի 3. աւուրց լաւանայ. արիւնն հիւանդութիւն բերէ։

20 Ծնեալն յաղթանդամ. հիւանդացեալն զկնի 7. օրէն վտանգի մահու. արիւնն վնաս է։

21 Ծնեալն երկայնակեաց. հիւանդացեալն 'ի տասներորդում աւուր հետևեալ ամսոյն առողջանայ. արիւնն շահաբեր։

22 Ծնեալն միջակակեաց. հիւանդացեալն յառաջնում աւուր հետևեալ ամսոյն լաւանայ. արիւն յուզելն է շահաբեր։

23 Ծնեալն տկար. հիւանդացեալն զկնի 12. աւուրց՝ է առիթ մահու. արիւնն շահ։

24 Ծնեալն երկբայկեաց հիւանդացեալն առողջանայ. արիւն թողուլն է շահ։

25 Ծնեալն թուլամարմին. հիւանդացեալն յետ ութ աւուրց հետևեալ ամսոյն պարզի. արիւն թողուլն շահ։

26 Ծնեալն՝ և հիւանդացեալն վտանգահոծ. արիւնն շահ։

27 Ծնեալն միջակակեաց. հիւանդացեալն 10. օրէն յետ վտանգի մահու. արիւնն վնասէ։

28 Ծնեալն միջակակեաց. հիւանդացեալն յառաջանում աւուր հետևեալ ամսոյն պարզի. զարիւն յուզելն, կամ զերակ թողուլն վնասակար։

29 և 30 Ծնեալն լինի վատոյժ. հիւանդացեալն վտանգահոծ. արիւն թողուլն վնաս։

*Իգնատիոսի արարեալ մարմնախաղաց փորձիւ*

Թէ գաղտն խաղայ՝ շահի և մեծութեան նշան է. հար-
կիք և բարի գտանէ. անուն եղանէ հարկած. 'ի բարի ճա-
նապարհ երթայ և ուրախանայ։

Թէ գագաթն խաղայ՝ բարի է և սիրի յամենեցունց.
մեծութեան և փառաց հանդիպի. մեծ թագաւոր տեսանէ՝
յիշխանաց պատիւ առնու, 'ի ճանապարհ երթայ. շահի և
ուրախանայ։

Թէ ծոծրակն խաղայ՝ զերծանի 'ի չարէ և 'ի հոգոց.
ի նեղութենէ և 'ի տանջանաց։

Թէ աջ դին գլխոյն խաղայ՝ զօր առէ, սիրէ. երկար
ճանապարհ երթայ և շատ շահի և բարւոյ հանդիպի և դառ-
նայ բարով։

Թէ ձախ դին գլխոյն խաղայ՝ 'ի չարէ ազատի. կամ
որդի լինի, մեծ բարի գայ իւր յաւագաց և յազգէ. բռզակի
հանդիպի. շահու և մեծութեան։

Թէ գլխոյն վերի դին խաղայ՝ 'ի հոգս անկանի. բայց
պատիւ առնու։

Թէ ամենայն գլուխն խաղայ՝ բարի և շատ իրաց հան-
դիպի. շատ իրք անկանի իւրն. գաղտ իրք տեսանէ և լսէ։

Թէ ճակատն խաղայ՝ պատուի 'ի բազմաց և զամենայն
զօր ասէ՝ առնէ. և գանձ գտանէ. դատավարութիւն վայե-
լէ. մեծանայ յաւագէ և 'ի փառս հասանի։

Թէ աջ ըներակն խաղայ՝ զնոյն մեծանայ յաւագէ.
'ի սգոյ զերծանի, 'ի հոգս անկանի յաղագս կանանց՝ և
մեռանի։

Թէ ձախ ըներակն խաղայ՝ լրութեան և խնդման
հանդիպի. շնորհք առնու. պատւոյ և մեծութեան է խոր-
հուրդ. կամ կռուի ընդ մարդոյ։

Թէ աջոյ յօնքն խաղայ՝ սրտնեշտութիւն է և կորուստն
գտանի։

Թէ ձախն՝ լրութեան և խնդման հանդիպի. յերկար
կեանք յորդորի և շահի. կամ հիւանդանալոյ նշան է։



Թէ յօնամէջն խաղայ՝ հանբաւ լսէ նեղութեան,
անպատեհ բան առնէ զնոյն, տրտմի և վիրաւորի.
Թէ աջ աչաց առաջի աղբիւրն խաղայ՝ սրտնեղութեան,
սգոյ և տրտմութեան հանդիպի. բայց բարի գտանէ. կամ
ընդ թշնամոյն կռուի, վէրք և լաց լինի։
Թէ ձախ աչացն՝ շատ բարւոյ և առողջութեան հանդի-
պի. գհեռաւորն տեսանէ և սրտնեղի։
Թէ աջ աչաց յետի աղբիւրն խաղայ՝ շատ բարւոյ
հանդիպի զիւր հեռաւորն տեսանէ և խնդայ. իրաց հանդի-
պի և վայելէ։
Թէ ձախ աչացն՝ հարստութեան և մեծութեան հան-
դիպի. մօտենայ առ աւագ, տեսանէ ազգական և խնդայ.
բարութիւն կամ իրք անկանի իւրն ի նմանէ. թէ շատ և
թէ սակաւ իրք գտանէ։
Թէ աջ աչաց վերի կոպն խաղայ՝ հարստութիւն և
հարկիք է. մեծանայ յաւագէ. ինչ ժողովէ և ցնծութիւն
կրէ. կամ արտասուէ և սրտնեղի. բայց շուտով զերծանի։
Թէ ձախ աչացն՝ առելութիւն և լաց է. բայց յետոյ
բարի է. ուրախութիւն և խնդումն, և սրտնեղութիւն
հիւր գայ։
Թէ աջ աչաց ներքի կոպն խաղայ՝ 'ի հեռի ճանա-
պարհ երթայ. դհեռաւորն տեսանէ. բարի գտանի
և խնդութիւն։
Թէ ձախ աչացն՝ շատ բարւոյ հանդիպի. ցանկայ և
հասանի. ցնծայ և ուրախանայ. կամ ազգի առելութիւն
է. լալոյ և սգոյ հանդիպի։
Թէ աջ պտուղն խաղայ՝ սրտնեղութիւն է։ Թէ ձախն՝
բարի գտանէ։
Թէ աջ ակն ամեն խաղայ՝ շատ բարւոյ հանդիպի.
առողջանայ և ազատի 'ի դժուարութենէ. 'ի մեռելոց իրք
անկանի իւրն և ընտանեաց և հեռաւորն գայ։
Թէ ձախն՝ շատ և առատ բարւոյ հանդիպի. մեծարի

յաւագաց և զանձ գտանէ. հարկիք և հարստութիւն. բայց սրտնեղի և չարանայ։

Թէ աջ ակն ամէն վարօքն խաղայ՝ զիւր հեռաւոր մարդն տեսանէ։

Թէ ձախն՝ հիւանդանայ, բայց ապրի։

Թէ աջ վերի արտևանուքն խաղայ՝ հեռաւոր մարդ գայ իւրն. տրտմի և լայ, բայց իւր բանն ըստ կամացն լինի։

Թէ ձախն՝ հեռաւոր կարևոր տեսանէ և խնդայ. և առողջութիւն և խնդումն և բարի գտանէ։

Թէ աջ ներքին արտևանունքն խաղայ՝ լաց և սրտնեղութիւն է, կամ մեծ բարի գտանէ 'ի մարդկանէ։

Թէ ձախն՝ լաց և սրտնեղութիւն է. բայց իւր հեռաւորն գայ։

Թէ ակւառակն խաղայ՝ 'ի մեծ մարդոց հարկիք առնու։

Թէ աջ դիհ քթին խաղայ. սակաւ մի հիւանդանայ. յատելութենէ և 'ի նեղութենէ զերծանի. կռւոյ և վիճի հանդիպի՝ որ ոչ է կամակից, բայց զօրանայ և ազատի 'ի չարէն։

Թէ ձախն՝ իբր անկանի՝ կամ որդի լինի իւրն, մարտընչի ընդ թշնամւոյն՝ բայց յաղթէ բան զոր զուգէ՝ բարի գայ իւրն նոյն, 'ի հիւանդութենէ առողջանայ և սիրոյ հանդիպի։

Թէ ամենայն քիթն խաղայ՝ 'ի մեծամեծաց շահ առնու։

Թէ քթի ծայրն խաղ 'ի պարտուց ազատի և հարստանայ։

Թէ աջ դիհ ծայր քթին խաղայ՝ ցաւոց հանդիպի։ Թէ ձախն՝ յանկարծ մարդ կռուի ընդ ինքն։

Թէ աջ քթափողն խաղ. ըստ մարդոյ սէր գնէ։ Թէ ձախն՝ 'ի պարտուց ազատի։ Թէ քթաօղն խաղայ. հարստանայ։

Թէ երկու պինչն խաղայ. հարստանայ. բայց իւրն ընտանի մեռանի։

Թէ աջ այտն խաղայ՝ տրտմութեան հանդիպի. գործ գործէ և ամաչէ. սակաւ մի հիւանդանայ և ողջանայ. գալիք և պատահարք հանդիպի իւրն։



Թէ ձախն՝ որդի լինի իւրն և խնդայ սրտհեշտի. բարի սիրելւոյ զանձի՝ և լիութեան հանդիպի։

Թէ աջ ընատեղն խաղայ՝ սրտնեղութիւն է. խիստ հիւանդանայ՝ բայց ապրի։ Թէ ձախն՝ ձայն գուժի լսէ և տրտմի. 'ի ճանապարհ երթայ. և իւր բանն աղէկ գայ։

Թէ աջ երեսն խա. առողջութիւն է և զանձ գտանէ. 'ի նոյն տեղաց փոխի և սրտհեշտի։ Թէ ձախն՝ սակաւ մի տրտմի և տկարանայ. վէրք լինի իւրն. պակաս ցաւս հանդիպի և շուտով մեռանի։

Թէ աջ դիհ կլափանն խաղ. դառնայ իւր ճանապարհէն. սրտհեշտի և շատ բարի լինի իւրեան. կամ սակաւ մի տըկաքանայ։ Թէ ձախն՝ հետ իւր ազգին կռուի, հիւանդանայ, բայց ապրի. բռզակ գայ իւրն և ուրախանայ։

Թէ աջ դիհ կզակին խաղայ՝ վիճի և կռուի ընդ իւր ազգին. սակաւ մի տկարանայ՝ և սրտհեշտի. 'ի նեղութիւն անկանի՝ և Աստուած փրկէ 'ի ցաւոյ և 'ի չարէ ազատի։ Թէ ձախն՝ հեռաւոր ճանապարհորդ գայ իւրն ազգէն կամ հեռաւոր ճանապարհ երթայ. 'ի սակաւ ցաւոց ողջանայ և խնդայ։

Թէ աջ ականջն խաղայ. համբաւ լսէ յազգականէ. խընդութիւն և լիութիւն է. յանկարծ բարւոյ հանդիպի սիրուի յամենեցունց. շահի և զուարճանայ. բայց տկարանայ՝ կամ ազգականն մեռանի։ Թէ ձախն՝ հեռաւորն գայ. յիշեն զինքն 'ի բարին՝ 'ի հեռու տեղ. զնոյն բարի գրոյց լըսէ։ Յանկարծ խնդութիւն և մեծ առողջութիւն է. աչք աւաղաց իւրն քաղցրանայ. բռչակ գայ իւրն. ուստի ակն ոչ ունի։

Թէ աջ ականջի զմակն խաղայ՝ ընդ մարդ դատախազի։ Թէ ձախն՝ զինքն 'ի բարին յիշեն։

Թէ աջ ականջի վերի դիհն խաղայ՝ 'ի հոգս անկանի։ Թէ ձախն՝ յանկարծ զանձ գտանէ։

Թէ աջ ականջի տակն խաղայ՝ բարի գտանէ՝ ուստի ակն ոչ ունի։

Թէ ձախն՝ չէ բարի։

Թէ ամենայն բերանն խաղ.՝ 'ի սրտէ սիրեցեալ սիրե-
լի հեռաւոր համբուրէ և մեծաբի..'ի սիրելւոյն։

Թէ լեզուն խաղայ՝ կռիւ և խռովութիւն է. ատելութիւն
և աղաղակ, Թշնամի խօսի ընդ ինքն. սրտնեղութիւն և վի-
ճոյ նշան է։

Թէ աջ դին լեզուին խաղայ՝ հարստանայ։ Թէ ձախն՝
բարւոյ հանդիպի։

Թէ լեզուն ամէնն խաղայ՝ 'ի մատնողաց և զրպարտո-
ղաց զգոյշ լիցի և պատրաստ կայցէ։

Թէ վերին շուրԹն խաղայ՝ համբաւ լսէ սպանման.
վէճ է և խռովութիւն. կռիւ և ատելութիւն. սրտնեղութիւն
և զէն. կամ հեռաւոր գայ իւրն. ճօշք է. վատ զրոյց լսէ և
տրտմի։ Թէ ներքինն՝ սրտնեղի. վիճի և յաղԹէ. ում ցան-
կայ՝ հասանի. հեռաւորն գայ. և բարւոյ նշան է։

Թէ շրԹանց երկու գինն խաղայ՝ խօսք լսէ և վիճի.
խնդայ 'ի գաւակէ. բամբասի 'ի մարդկանէ. զէն է՝ տրտմու-
Թիւն և սուգ։

Թէ ներքի և վերի շրԹունքն խաղ.՝ սիրելի համբուրէ։

Թէ աջ դին վերի շրԹանն խաղայ՝ կռիւ լինի և խօսք.
'ի մարդկանէ սրտնեղի և 'ի սուգ անկանի. կամ գաւակ լի-
նի խնդման. սրտհեշտի և ուրախանայ։ Թէ ձախն՝ սէր և
խնդութիւն և խաղաղութիւն է. գաւակ լինի բարի և շնոր-
հաւոր. յանկարծ խնդայ 'ի գաւակէ. վճարէ զպարտս և սի-
րելի գայ իւրն։

Թէ վերի շրԹանց մէջն խաղայ՝ համբուրէ զով ուզէ.
զրոյց լսէ և տրտմի։ Թէ ներքին՝ տրտմի.

Թէ աջ դին ներքի շրԹանն խաղ.՝ սրտհեշտի և ուրա-
խանայ։ Թէ ձախն՝ ուրախանայ։

Թէ աջ դին շրԹանն խաղ.՝ իւր անձին առողջութիւն է։
Թէ ձախն՝ կտրիճ տղայ լինի իւրն։

Թէ շրԹներն խաղայ՝ բարի և բողակ գայ իւրն։



Թէ աջ դին բերանոյ կայն խաղայ՝ բարձրանայ և կո-
խէ զԹշնամին իւր։
Թէ ձախն՝ յաղԹէ Թշնամւոյն. 'ի բարի հեռաւոր տեղ
երԹայ. կոխէ զչար կամս և մեծանայ։
Թէ աջ դին վերին բերանոյն խաղայ՝ զանձ գտանէ.
սրտհեշտի՝ և բարւոյ հանդիպի. բողակի և մեծութեան։
Թէ ձախն՝ յաղԹէ Թշնամւոյն և բարւոյ հանդիպի, հե-
ռաւորն գայ և զօրանայ։ Թէ առաստաղն խաղայ՝ սրտնեղանք
անկանի։
Թէ աջ դին առաստաղին խաղայ՝ բարի գտանէ և ուրա-
խանայ։ Թէ ձախն՝ պակաս մի հիւանդանայ և շուտով
առողջանայ։
Թէ աջ Թուշն խաղայ՝ 'ի Թշնամեաց պատրաստ կաց։
Թէ ձախն՝ մեծ բարութիւն գտանէ։
Թէ աջ երախն խաղայ՝ հարստութեան նշան է։Թէ ձա-
խըն՝ իբրաց մի բողակի։
Թէ աջ դին կլափանն խաղայ՝ սրտհեշտի և ուրախանայ.
և աչօքն շատ բարի տեսնու։
Թէ ձախն՝ բողակ գտանէ։
Թէ կլափան ծայրն խաղայ՝ ոսկւոյ և կումաշի հանդիպի։
Թէ կլափն խաղայ՝ շահոյ նշան է։
Թէ աջ խամ ծիծն խաղայ՝ առողջութիւն է։ Թէ ձախն
խնդայ և ուրախանայ։
Թէ փողքն խաղայ՝ սրտնեղութեան զրոյց լսէ։
Թէ աջ դին վզին խաղայ՝ 'ի հեռուստ տեղաց շահ գայ
իւրն, շատ կումաշի հանդիպի և բողակի տիրանայ. մեծու-
Թիւն առնու՝ ուստի ակն ոչ ունի. և ուրախանայ։ Թէ
ձախն՝ գլխաւոր լինի և խնդայ. մեծութիւն առնու. հա-
ընտանայ՝ և աչքն շատ բարի տեսնու խնդութիւն և
ողորմութիւն գտանէ կամ անպատեհ բան գործէ և
յաւագէ կամ յագգէ՝ ընդ վայր զրոյց լսէ։ Թէ ամէն
վիզն խաղայ՝ մեծ նեղութիւն գայ իւր վերայ. իւր կեան-

ըըն պակասի կամ սրով հատանի վիզն և տունն այրի։

Թէ աջ դիհ թիկնամէջն խաղայ՝ սրտնեղանք է։ Թէ ձախն՝ բան առնէ՝ զոր չէ արժան։

Թէ աջ թիկն խաղայ՝ յորդայթէ թող պատրաստ կենայ։

Թէ ձախն՝ խնդայ իւր սրտովն։

Թէ թիկնամէջն խաղայ՝ հարստանայ ինքն։

Թէ աջ անթակն խաղայ՝ յիւր ձեռաց գործոյն ըսպակի։

Թէ ձախն՝ մեծութեան հանդիպի. խնդութեան և սիրոյ նշան է։

Թէ աջ բէճն խաղայ՝ հարստանայ և սրտհեշտի. կամ ցնորք է և տրտմութիւն. պատրաստ կացցէ 'ի չարէ և 'ի կնոջէ։ Թէ ձախն առողջութիւն է. նոր ազանի. բարի լինի իւրն կամ անպատեհ բան գործէ,

Թէ աջ թիկունքն խաղայ՝ նոր ազանի։

Թէ ձախն՝ խնդիրք իւր կատարի։

Թէ աջ ծղին խաղայ. գլխացաւի անկանի և լաւանայ. զնոյն 'ի սաֆրայէ ցաւոյ հանդիպի. սատտայ հարկանէ։

Թէ ձախն՝ խնդումն և ցնծութիւն է. զինչ բարի ուզէ գտանէ յընկերաց. պարգև 'ի մարդկանէ, շահի և ըսպակի։

Թէ աջ արմունկն խաղայ՝ սիրելւոյ հանդիպի. սէր է լաւ և բարի. 'ի բան արքունեաց մտանէ կամ սակաւ մի տկարանայ. գլուխն ցաւի և տրտմի 'ի ցաւոց և հիւանդանայ և Աստուած հանէ 'ի հիւանդութենէ։ Թէ ձախն՝ բարի է և խնդումն. հիւրն գնայ և չերծանի. ցնծայ և սրտհեշտի. կամ յօտարաց վիրաւորի և հիւանդանայ։

Թէ աջ բազուկն խաղայ՝ գայր և կին համբուրէ. 'ի կընոջէ սիրի. հասանէ խնդութեան և սիրելի գտանէ։

Թէ ձախն՝ մեծ բարւոյ և շահի հանդիպի. բարի և շնորհաւոր է. պատուի 'ի մարդկանէ և ըսպակ գտանէ։ Թէ աջ թևն խաղայ՝ ցաւոց և նեղութեան հանդիպի։

Թէ ձախն՝ 'ի գնտան մտանէ։



Թէ աջ բազկի ձուկն խաղ. գլխացաւութեան հանդիպի։

Թէ ձախն՝ յիւր ընտանեացն բարի զրոյց լսէ և բարի լինի։

Թէ աջ ձեռաց թաթն խաղայ՝ վէճ գայ մեծ և ծեծ. աղմուկ է. զնոյն այլ վիրաւորի 'ի մարդկանէ։ Թէ ձախն առատ բարի գտանէ, արծաթոյ և ոսկոյ և գանձի հանդիպի. յաւազէ իբր առնու. կամ վինի ընդ մարդ։

Թէ աջ ափն խաղայ՝ բարի գործոյ հանդիպի. կամ կռւոյ և աղաղակի։

Թէ ձախն՝ շատ բարւոյ հանդիպի կամ արծաթ շահի։

Թէ աջ բոյթն խաղայ՝ 'ի մեծ մարդոյ սիրուի և պատուի, յաւազէ իբր առնու. անկասկած բարի գտանէ. շնորքի 'ի մեծաց պարգևք և մեծութիւն. բարի խօսին զինքն առ մարդիկ. ազգ կամ եղբայրք իւրմով խնդան։

Թէ ձախն՝ հարստութիւն և հարկիք է. աղէկ լինի իւրն. բարւոյ և գանձի հանդիպի. զինչ ուզէ՝ առնու. ասեն սուտ իբր վասն իւր և ինքն 'ի մեղք անկանի։

Թէ աջ խաժլ մատն խաղայ՝ չարի հանդիպի. գէշ խօսք լսէ, ճօշան զինքն, 'ի զուր վիրաւորի. 'ի լեզու անկանի. վատ խօսին զինքն առ մարդիկ։

Թէ ձախն՝ բարի է և ուրախութիւն. խորհուրդ բարի խորհի. գութ գտանէ. զովք լսէ, իբր զոր կամի, գտանէ։

Թէ աջ միջի մատն խաղ. վէճ անկանի. վինի և յաղթէ թշնամւոյն. բարի գտանէ. ուստի ակն ոչ ունի. փոխի ի մեծ բան. հարստութիւն և շատ ըսպակի լինի իւրն 'ի մեծէ։

Թէ ձախն կռւոյ և սրտնեղութեան նշան է. վինի և յաղթէ. իբր գտանէ և խնդայ. գերծանի 'ի տրտմութենէ. և բարի գայ իւր վերայ։

Թէ աջ ձագ մատն խաղայ 'ի բարին յիշուի. շատ բարի գտանէ. հարստանայ և շահի. խնդրուածքն կատարի. հեռաւոր սիրելի գայ. զնոյն 'ի յԱստուծոյ բարի գտանէ. Թէ ձախն՝ զինքն ի բարին յիշեն շատ բարւոյ հանդիպի. 'ի յաւաղութենէ մեծանայ, սրտով յորդորի և խնդայ և իւր սրտի խորհուրդն յայտնի։

Թէ աջ ճկոյթն խաղայ՝ ըռզակի հանդիպի. զանձ գտանէ և հարստութիւն. պարգևք 'ի յԱստուծոյ, զուր տրտմի. 'ի ճօշք անկանի և զերծանի։ Թէ ձախն՝ վէճ է և աղաղակ, ատ խօսք ասեն վասն իւր. կամ բարձրանայ և հարստանայ, 'ի տրտմութենէ ազատի 'ի բարի տեղ յիշուի 'ի մեծամեծաց։

Թէ աջ ձեռն ամէնն խաղայ՝ հարկի 'ի մեծաց. մեծարի 'ի մարդկանէ. հարստանայ և խնդայ. կամ չար գայ իւրն, պատրաստ կացցէ։ Թէ ձախն՝ բարի գտանէ, ուստի ակն ո՛չ ունի. 'ի մեծ մարդոյ հարկիք առնու, պարգևս 'ի թագաւորէ. խնդայ և հարստանայ. ամէնն բարի լինի իւրն։

Թէ աջ ձեռաց ամէն մատունքն խաղան՝ տրտմի. բայց յետոյ, սրտհեշտութիւն գայ իւրն. չարն հեռանայ յիւրմէն. և Աստուած ընդ ինքն է։ Թէ ձախն՝ գանձուց և պատուոյ հանդիպի։

Թէ աջ ձեռաց վերի թաթն խաղայ՝ նախանձ և ծիկլ զնեն ընդ ինքն և յաղթել չկարեն.

Թէ աջ ուսն խաղայ՝ առողջութեան նշան է և նոր հալաւս ագանի։ Թէ ձախն՝ իրք անկանի իւրն և խնդայ. պարգևս 'ի յԱստուծոյ առնու. պատուի 'ի մեծաց։

Թէ աջ ծիծն խաղայ՝ ռոճկի և ուրախանայ. ազգականքըն զօրանան, սիրելիքն բազմանան. նոյն և ծանօթք շատանան։ Թէ ձախն՝ հեռաւոր մարդ տեսանէ և յընտանեաց խնդայ. մեծութեան հասանի կամ վիճոյ հանդիպի և ակամայ վիրաւորի՝ և դժուարի։

Թէ աջ դիհ կրծոցն խաղայ՝ բարւոյ հանդիպի. 'ի չարէ և 'ի հոգոց ազատի. կումաշի տիրանայ և մեծութեան հասնի. կամ գործ գործէ՝ զոր չէ արժան և ապաշաւէ շատ։

Թէ ձախն՝ ամենքն սիրեն զնա. զչարն որ զալոց է Աստուած անցուցանէ յիւրմէն։

Թէ ամէն կուրծքն խաղայ՝ զոր սիրէ՝ զիրկս արկանէ. խնդման յառաջք է. բերկրումն անձին. բարւոյ աւետիք է. հարստանայ և սէր գտանէ։



Թէ աջ դիհ սրտին խաղայ՝ բազմանան սիրելիքն՝ և ուրախանայ։

Թէ ձախն՝ տրտմութիւն հասանի։

Թէ սիրտն խաղայ՝ սրտնեղութիւն է և հոգ. իւր մարդըն մեռանի. յանկարծ սրտնեղութեան և տրտմութեան հանդիպի։

Թէ աջ դիհ թևի ներքի կողմն խաղայ՝ յօտար երկիր երթայ։ Թէ ձախն՝ հիւանդանայ՝ և շուտ ողջանայ։

Թէ աջ դիհ կողիցն խաղայ՝ շահու հանդիպի. 'ի տեղւոյն փոխի և 'ի ճանապարհ երթայ. սակաւ մի տկարանայ՝ բայց յառնէ։ Թէ ձախն՝ իւրն որդի ծնանի. կամ զնոյն 'ի ճանապարհ երթայ փոփոխումն է տեղաց 'ի տեղ։

Թէ աջ ողն խաղայ՝ կին առնու և զաւակ խնդման լինի։

Թէ ձախն՝ զաւակ բարի լինի իւրն և մեծութիւն գտանէ։

Թէ մէջ ողանն խաղայ՝ բարի է իւրն։

Թէ աջ մսանն խաղայ՝ հարստանայ։

Թէ ձախն՝ նոյն է։

Թէ երկու մսանքն խաղան՝ հարստութիւն է իւրն։

Թէ աջ կուշտն խաղայ՝ մեծութիւն գտանէ. կին առնու բարի. բարձրութիւն և խնդութիւն է. զոր ինչ խնդրէ 'ի յԱստուծոյ կատարի։ Թէ ձախն՝ զնոյն կին առնու և զաւակ խնմդան լինի. 'ի հոգոց զերծանի. սրտհեշտի և մեծ լինի։

Թէ աջ դիհ փորուն խաղայ՝ մեծանայ և ըռզակի։

Թէ ձախն՝ շատ լայ և տրտմի։

Թէ ամէն փորն խաղայ՝ զինչ ուզէ 'ի յԱստուծոյ տայ Աստուած։

Թէ փորն խաղայ՝ բարի է և մեծութիւն։

Թէ աջ կողն խաղայ՝ 'ի հիւանդութենէ ազատի։

Թէ ձախն՝ յայլ ճանապարհ երթայ։

Թէ աջ դիհ կողին խաղայ՝ բարի է իւրն։

Թէ ձախն՝ նոյն է։

Թէ աջ բովն խաղ՝ ուրախութիւնն մեծ գտանէ։ Թէ ձախըն՝ որդի լինի իւրեանն, կամ 'ի մահու երկիւղէ ազատի։

Թէ պորտն խաղ. շահ գայ իւրն. իւր բարիքն բազմանան. գերծանի 'ի հուրց. կին առնու. կամ 'ի կնոջէ խնդայ։

Թէ աջ դին փորքափորն խաղայ՝ հարստանայ։

Թէ ձախն՝ ըղձակի 'ի յԱստուծոյ. և յաղքատութենէ ազատի։

Թէ փոքր փորն ամէնն խաղայ՝ բարի զրոյց լսէ՝ և խնդայ. բազմանան իւր ինչքն. բարի կնոջ դիպի. հարստանայ և մեծանայ։

Թէ որանքն խաղայ՝ մեծ բարի լինի յաւագաց, Աստուած տայ զխնդրելին. զինչ ուզէ՝ առնու. խորհուրդն կատարի. և արու զաւակ լինի խնդման։

Թէ աջ դին իրանացն խաղ. հարստանայ։

Թէ ձախն՝ մեծանայ և ուրախանայ։

Թէ ծայրն խաղայ՝ կամ տակն՝ մեծանայ. կամ զէն գայ իւրն։

Թէ ծածուկ մարմինն խաղայ՝ յազգէ բարի գտանէ. խընդութիւն և ուրախութիւն։

Թէ աջ ձուն խաղ. հարստանայ և ծերանայ և իւր կամքն կատարի։

Թէ ձախն՝ յայլ կին մերձենայ և իւրն շնորհաւոր որդի լինի։ Խիստ սրտհեշտի. հարկիք առնու և զովի. 'ի տուն ցնծութեան երթայ. կամ հարսանեաց հանդիպի։

Թէ երկու ձուն միահետ խաղան՝ շնորհաւոր որդի լինի։

Թէ աջ ձուատակն՝ խաղայ՝ ըղձակ առնու՝ ուստի ակըն ոչ ունի. կամ յայտնի լինին գաղտնիք իւր։

Թէ ձախն՝ առնու զով ուզէ և ուրախանայ. կամ սըրտնեղանք է։

Թէ ցայլքն խաղ. ընդ կնոջ նմջէ և 'ի բարին յիշուի. հասանէ իւր ցանկութեանն, զնոյն իրք, որ ուզէ՝ առնու. իւր խորհուրդն կատարի և բանն յաջողի։



Թէ աջ ցայլքն խաղայ. ըղձակի յիւր գործոյն։ Թէ ձախըն՝ 'ի մեղս անկանի և 'ի չարէ պատրաստ կացցէ։

Թէ աջ ձուն խաղ. լինի իւր բանն՝ զօր առնէ։

Թէ ձախն՝ խնդութիւն և սրտհեշտութիւն է. խնդման և շահի հասանի.

Թէ մէջ ողին խաղայ՝ սրտհեշտի և խնդայ։

Թէ աջ դին ողին խաղայ՝ բարութիւն գտանէ և յաւար վարէ։ Թէ ձախն՝ նոյն է։

Թէ նստոյ տեղին խաղայ՝ դէպ 'ի ձուն՝ չար է. տուգանաց հանդիպի. ծախուի իւր իրքն և զէն լինի. տուգ հանդիպի իւրեան, անկասկած տրտմի։

Թէ աջ բումբն խաղ. մտնի 'ի մարդոց. այլ Աստուած յաջողէ նմա՝ և գերծանի և իւր թշնամիքն մեռանին. զուր խօսին զիւրմէն զօրաւոր, ասեն բան անպատեհ։

Թէ ձախն՝ սուտ ասեն վասն իւր. բարի առնէ մարդոց և չշահի. 'ի մեղս անկանի և սրտնեղի. բայց շուտով ուրախանայ։

Թէ երկու բումբի նեքքին խաղ. իբր անկանի իւրն՝ անբարի առնէ. ուստի ակն ոչ ունի. յանկարծ շահի. անշնորհ մարդոյ։

Թէ աջ անդամն խաղայ՝ բարի է և խնդութիւն. ցընծայ և սրտհեշտի. կամ գաղտ զրուցեն զինքն. պակաս մի երկնչի. վախէ յիւր անձէն. արտմութիւն է և զէն։

Թէ ձախն՝ բարի է. Աստուծով ուրախ լինի. նոր ազանի և խնդայ կամ ճօշան զինքն մարդ թշնամանայ ընդ ինքն և զէնի հանդիպի սակաւ մի յիւր բանէն.

Թէ անդամոյ գլուցի դիհն խաղ. զօրութիւն է.

Թէ աջ անդամոյ գլուցին խաղայ՝ մեծանայ և բարձրանայ յոյժ։

Թէ ձախն՝ շատ ըղձակի տիրանայ։

Թէ աջ անդամոյ ներսեն խաղայ՝ սրտնեղութիւն հասանի։

Թէ աջ ծունկն խաղ. մօտենայ առ աւագս. մեծու-
թիւն և հարկիք է կամ 'ի վէճ և 'ի դատուսմն անկանի։

Թէ ձախն՝ առ աւագ մտանէ. 'ի հարկիք ելանէ. կա-
տարի իւր բանն առ աւագ. կամ գէշ զրոյց լսէ.

Թէ աջ զրուցի ծունկն խաղ. մատնեն զինքն՝ և բա-
րով զերծանի։

Թէ ձախն՝ առ ժամայն զերծանի։

Թէ աջ ներսի ծունկն խաղայ՝ աւետիս լսէ։

Թէ ձախն 'ի դատաստանէ ուրախանայ և խնդայ։

Թէ աջ սրունքն խաղ. հարստութիւն է. 'ի մեծաց գո-
վասանութիւն առնու։

Թէ ձախն՝ հարստութիւն է։

Թէ աջ ամենայն սրունքն խաղայ՝ ահ որ կայ իւր վրայ՝
անցանի։ Թէ ձախն՝ յամենայն նեղութենէ ազատի։

Թէ աջ ոլոքն խաղ, յոր է սրունքն՝ բարւոյ նշան է.
վիճի և բարի գտանէ. ցանկայ և խնդայ. յիւր մօտերացն
մարդ մեռանի. մօտենայ առ աւագ. հարկիք առնու և մեծանայ։

Թէ ձախն՝ թշնամեաց յաղթէ. առատ բարի և շնորհա-
ւոր լինի. կամ սուգ է և տրտմութիւն. այլ յետոյ՝ բարի
գտանէ. հարկի 'ի յԱստուծոյ պարգևս և սէր առնու 'ի մեծ
մարդկանց և հարստանայ։

Թէ աջ ներսև ոլոքին խաղայ՝ բարի զրոյց լսէ և ու-
րախանայ.

Թէ ձախն՝ 'ի ճանապարհ երթայ։

Թէ աջ կոճն խաղայ՝ սգոյ և լալոյ հանդիպի. յիւրն
սիրելի մարդ մեռանի և տրտմի։

Թէ ձախն՝ խօսք ելանէ իւր վերայ խնդումն և ցնծու-
մըն է. բերկրի 'ի սիրելեաց գտանէ բարի յաւագաց, հա-
սանի ուրախութեան.

Թէ աջ կոճի զրուցի գիհն խաղայ՝ հետ մեռելի եր-
թայ. Թէ ձախն՝ սրտհեշտանք է։

Թէ աջ կոճի ներսի գիհն խաղ. 'ի մեծ մարդկանց



հարկիք առնու. բարի է և սրտհեշտութիւն. Թէ ձախն՝
ուրախութիւն է յոյժ։ Թէ աջ ոտից թաթն խաղայ՝ սրտհեշ-
տանք է և ուրախութիւն յոյժ. ծանրանայ ի վերայ
մարդկան. հաստատի իւր գործն 'ի յԱստուծոյ. 'ի գործ
Աստուածային գնալ նշանակէ. 'ի ճանապարհ երթայ, դատի
վասն իւր ապրանացն և դառնայ բարով. Թէ ձախ ոտիցն՝
բարի է և շահ՝ ըռզակն շատանայ, մօտենայ առ աւագ և
փառաւորի, ճանապարհ է խնդման և բարձրութեան մտա-
նէ յարքունիս. շատ խնդայ և հարստանայ։

Թէ աջ ոտից կոճն խաղայ՝ զենի հանդիպի և յետոյ
ըռզակի։

Թէ աջ կրնկան կախ ջիլն խաղայ՝ օտար զրոյց լսէ։

Թէ ձախն տօլված առնու և սրտհեշտի.

Թէ աջ ոտից ներբանքն խաղայ՝ 'ի ճանապարհ երթայ.
վէրք հասանի իւրն, յերբէ յիւր ազգէն. 'ի ծանօթից
տրտմի, ահի իրք հանդիպի. բայց յետոյ բարի լինի իւրն.
ի տրտմութենէ ազատի. իրք գտանէ և շահի. հարստանայ
և խնդայ։ Թէ ձախն՝ 'ի ձեռն աւագաց՝ մեծութիւն և իշ-
խանութիւն և հարկիք առնու, իւր բանն յաջողի. 'ի դար-
պաս մտանէ. մեծանայ և հարստանայ։

Թէ աջ ոտից ամենայն թաթն խաղայ՝ տրտմի յիւր
ազգէն. հեռանայ յազգէ իւրմէ. նոյն և թեթևանայ առ
ծանօթս իւր. կամ 'ի ճանապարհ երթայ և իշխանութիւն
գտանէ. և շահի 'ի ըռզակէ. Թէ ձախ ոտիցն՝ հեռանայ
յազգականացն և տրտմի, սակայ մի հիւանդանայ և ապրի.
'ի ճանապարհ երթայ. հարկիք և շնորհ առնու՝ ուստի ակն
ոչ ունի. մեծանայ և բարձրանայ։

Թէ աջ ոտից ներքին կամ վերին խաղայ՝ 'ի ճանա
պարհ արդիւնաւոր երթայ. մեծութեան հասանի և սրտ-
հեշտի, յանկարծ խնդայ և հարստանայ։ Թէ ձախ ոտիցն՝
բարի լինի իւրն յանկարծակի. յաւագաց ռոճիկ առնու.
խնդայ 'ի ճանապարհի. սէր է և բարձրութիւն։

Թէ ոտից մէջն խաղայ՝ մարդ վիճի ընդ ինքն և ծեծվի։

Թէ աջ կրնկան վերևն խաղայ՝ օտարանայ յերկրէ. և գրոյց լսէ բարի։

Թէ ձախն՝ 'ի չար անկանի։

Թէ աջ կրունկն խաղայ՝ մեծութիւն է. բայց հետ մեռելի ընթանայ. մատնեն զինքն և բարով գերծանի։

Թէ ձախն՝ տօլված և բարի է. ուրախանայ և խնդայ։

Թէ աջ ոտն ամէնն խաղայ՝ 'ի ճանապարհ երթայ։ Թէ ձախն. բարի գայ իւրեանն, ուստի ակն ոչ ունի։

Թէ աջ ոտից բոյթն խաղայ՝ գնայ յիւրմէն տրտմութիւն. հեռաւորն գայ, ի մարդկանէ շահի և հարստանայ։

Թէ ձախն՝ առողջութիւն է անձինն. հեռաւոր տեսանէ. սիրելիքն բազմանան. յԱստուծոյ ըռզակի և խնդայ. և ամէնեքեանքն սիրեն զնա. կամ ցաւք դիպի իւրն. և հիւանդանայ խիստ։

Թէ աջ ոտից խաժլ մատն խաղայ՝ հիւանդանայ մինչ ի մահ. տրտմի և վախէ. բայց յետոյ բարի լինի իւրն ի փորձութիւն անկանի և ազատի. և իւր գնացած մարդն գայ։ Թէ ձախն հարստութեան և հարկեաց մեծութեան և ինեղութեան հասանի. կամ վէրք ընդունի 'ի ստոյ և տրտմի. վախէ ի չառէ, որ ոչ գայ իւրն։

Թէ աջ ոտից միջի մատն խաղայ՝ սրտնեղութիւն գայ. ի վիշտ և ի տրտմութիւն անկանի. և մեծ փոթորակ գայ իւրն. մարդ կռուի ընդ ինքն և ծեծվի. և չար լինի։

Թէ ձախն՝ վիճում է. ի մեծ աղաղակ անկանի. զուժ առնու բազմանայ կռիւ. մեծ զէն անկանի ընդ ազգականի և վիճի. կամ ցնծում է մտացն. սիրով հետ մարդոյ ասուլիս առնէ. շատ բարւոյ հանդիպի և ուրախանայ։

Թէ աջ ոտից ծագ մատն խաղայ՝ գտանէ զինչ ուզէ. հարկիք և սէր. կամ վիճի ընդ ծանօթի և թշնամիքն շատանան։

Թէ ձախն՝ յազգէ հեռանայ, բաժանի 'ի տանէ և յորդ-



ւոցն. գնայ յայլ տեղ և յաջողի. կարի հանգիստ և լաւ լինի, բամբասեն զինքն առ կանայս։

Թէ աջ ոտից ճկոյթն խաղայ՝ մեծութիւն և հարըստութիւն տայ Աստուած իւրն. լինի զօր կամի. յաւագաց շնորհք առնու. ըռզակի և բարւոյ հանդիպի. կամ իրք կորուսանէ։

Թէ ձախն՝ տրտմի յաւագէ. աղմուկ 'ի սիրելեաց՝ վէրք 'ի յաւագաց. անպատեհ բան լսէ. յաղթեն ազգականքն իւր. կամ 'ի վաճառէ շահի. գանձ և առողջութիւն և շատ բարի գտանէ։

Թէ աջ ոտից ամէն մատունքն խաղան՝ հետևակ 'ի ճանապարհ երթայ. բարի լինի իւրն և խնդայ. ցնծութիւն և մեծ սէր գտանէ. պարգևս առնու 'ի յԱստուծոյ. հեռաւոր օտար մարդ ծանօթանայ ընդ ինքն. 'ի մարդկանէ պատուի և բարւոյ հանդիպի։

Թէ ձախ ոտիցն՝ խիստ դատում է, նեղութիւն է և վէրք. ցաւք լինի. սրտնեղի 'ի խօսից. աղքատանայ և դարձեալ փորձի,

Թէ տափողն խաղայ՝ խնդայ և 'ի ձի հեծնու. և 'ի բարի ճանապարհ երթայ։

Գիտողին ամենայն գաղտնեաց և յայտնողին զպարագայս՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ փառք յաւիտեանս ամէն։

## Տաղ 'ի վերայ Յովասափու Թագաւորի՝ որդւոյ Թագաւորին Հնդկաց Աբեններայ։ (Ա)

Յորժամ հայրն երկնաւոր յերկիր հաճեցաւ. և բանն Աստուած իջեալ յերկնից մարմնացաւ. 'ի խաչափայտն ելեալ սիրով բարձրացաւ. եղաւ 'ի գերեզման և փառօք յարեաւ։

Ելեալ մարմնով յերկինս՝ յաջմէ հօր նստաւ. և Աստուած սուրբ հոգին 'ի յերկիր իջաւ. 'ի վերնատանն 'ի կերպ հրոյ յայտնեցաւ. ի դասս առաքելոց սիրով բնակեցաւ։

Աշխարհս առաքելոցն վիճակեցաւ. երկիրն Հնդկաստան Թովմայի անկաւ. գնացեալ անդ քարոզեաց Տեառն հրամանաւ. և անդէն սքանչելօք նահատակեցաւ։

Հաւատ քրիստոնէից անդ հաստատեցաւ. կռապաշտութիւն դիւացն խափանեցաւ. մի ոմն 'ի չաստուծոց խորտակեալ բարձաւ. անունն Քրիստոսի փառաւորեցաւ։

Յետոյ չար թագաւոր մի երեւեցաւ. որ Աբեննէր անուն նմա կոչեցաւ. սատանայի կամաց նա հետեւեցաւ. կռապաշտութիւնս դիւաց կամաւն իւր անկաւ։

Հալածէր զքրիստոնեայս յաշխարհէն Հնդկաց. և անթիւ բազմութիւնս անդ նահատակեաց. զանունն Քրիստոսի 'ի յերկրէն ջնջեաց. զմենեսեանսն դիւաց պաշտօնեայս կարգեաց։

Չունէր մեծ թագաւորն Աբեննէր զորդի. որ ժառանգէր զաթոռն իւր հայրենի. շատ աղաչեաց զկուռս վասն զաւակի. և դևքն ոչ կարացին տալ նմա զորդի։

### Վասն ծննդեանն եւ սննդեան Յովասափու։ (Բ)

Աստուածն ամենայնի որ բարեգութն է. դարձ, ի մեղաւորաց նա կամեցօղ է. Աբեննէր արքային զաւակ պարգևէ. այն որ 'ի փուշ անկոյն՝ վարդ բուսուցանէ։



Իսկ նա 'ի չաստուածոցն ըղձա գիտենայ զենէ զոհս բազումս և ուրախանայ և կռոցն առաջի անկեալ գոհանայ. Յովասափ կոչեցին զանունն նորա։

Ժողովեալ զաստղաբաշխսն, որք էին գիտուն. եկեալ 'ի միասին համարով յխուն. հարցեալ թագաւորին վասն իւրեան որդւոյն. ասեն թէ լինիցի քան զքեզ մեծագոյն։

Մի ոմն 'ի նոցանէ, այն որ ճարտարն է. Աբեննէր արքային զայս դարձեալ ասէ. հզօր մեծ թագաւորդ մեր գիտասցէ. որդին քո քրիստոնեայ իսկ լինելոց է։

Յորժամ լուաւ արքայն զբանս աստղագիտին. տրտմեցաւ դառնագին վասն զաւակին. խնդրէր հնարս առնել վասն Յովասափին. կի մի լուիցէ նա զձայն քրիստոնեայ ազգին։

Յորժամ որ կտրեցաւ մանուկն 'ի ստենէ. թագաւորն տեղի նմա պատրաստէ. տղահասակ մանկունս առ նա ժողովէ և զՅովասափ մանուկն իւր ուրախ առնէ։

Եւ պատուէր ետ նոցա 'ի դուրս ոչ հանել. և ալեօք և ծեր՝ անդ ոչ մուծանել. ցաւոց ձայն և մահու անդէն ոչ յիշել. և ոչ զքրիստոնէից օրէնս անուանել։

Եւ թէ 'ի յայն մանկանցն մեռանէին. որք որդւոյ արքայի ընկերակիցք էին. մի այլ փոխան նորա կացուցանէին. զմեռեալն յօտար երկիր գնացեալ ասէին։

Մանուկն Յովասափ յորժամ զարգացաւ. իմաստութեան բանից նա հետեւեցաւ. բերին առ նա վարպետ 'ի նմանէ ուսաւ. և յաստղաբաշխութեան արուեստ վարժեցաւ։

Յուտել և 'ի խմել յուրախութեան կայր. ձայնիւ երգեցողաց խնդութեամբ ցնծայր. և հայր նորա յամէն աւուր առ նա գայր. որդւոյն Յովասափու սիրով բարև տայր։

### Վասն ելանելոյն արտաքս Յովասափու։ (Գ)

Յաւուր միում մտօք խորհուրդ արարեալ. մանուկն Յովասափ 'ի տրտմութեան լեալ. կոչեալ զմի յընկերաց իւրոց

և հարցեալ վասն էր 'ի տաճարիս եմ ասա արգելեալ։

Յայնժամ պատասխանիալ նմա ծառային. Յովասափու ասաց զբանս արքային.զքրիստոնեայս հալածեաց ասէ հայր քոյին. կամեցաւ խափանել զանուն Քրիստոսին։

Եւ զքեզ վասն այսորիկ աստ արգելեալ է. զի մի զօրէնս նոցա ականջ քո լսէ. զբանս աստղագիտին նմա ծանուցանէ. որ վասն Յովասափու նախ ասացեալ է։

Շնորհն աստուածային 'ի սիրտն ծագեալ. որդւոյն թագաւորին յորժամ զայս լուեալ. յայնժամ եկեալ առ նա հայր 'ի յողջոյն տալ. ելանելոյ 'ի դուրս յարքայէն խնդրեալ։

Ասաց զարդարեցէք զփողոց քաղաքին.հիւանդք և ցաւագարք մի երևեսցին. և դասք երգեցողաց պատրաստք եղիցին. քանզի ուրախասցի որդի արքային։

Հանապազ Յովասափ 'ի դուրս ելանէր հաւասար ընկերօքն իւր ուրախ լինէր. յանկարծ ուրուկ և կոյր մի նա տեսանէր. տրտմութեամբ զարհուրեալ և սիրտն ճմլէր։

Ի հարց թէ ինչ պատճառաւ նա ցաւագնեալ է. ասեն թէ պատահմամբ 'ի տարերացս է. էհարց թէ ամենից այն լինելոց է. ասեն այլ ոչ ումանց որոց պատահէ։

Յաւուր միում ելեալ ծեր մի տեսանէ. որ 'ի գաւազանին վերայ դողդոջէ. եհարց վասն այն ծերոյն թէ այս ինչ պատճառ է. ասեն թէ օր մահուն եկեալ հասեալ է։

Էհարց թէ ամենից մահն հանդիպի. եթէ նորա միայն զոր աչօք տեսի. ասեն թէ ամենայն մարդ որ ծնանի. մահուամբ 'ի յաշխարհէս ելանել պարտի։

Լուեալ Յովասափու զայս սիրտն դողաց.և դառնացեալ ոգւով նա յոյժ հառաչեաց. զկեանս մարդոյս յերկրի ոչ ինչ համարեաց. երազ է գիշերոյ զոր դաւիթ ասաց։

Օրըստօրէ տրտում կայր և վշտանգիւր. և հանապազ ծածուկ մտօք տագնապիւր. զփառս և զպատիւ ոչ ինչ համարէր. խնդրէր մարդ իմաստուն որ զկնքն խրատէր։



*Վասն զալոյ Բարաղամու ճգնաւորին առ Յովասափ՝ եւ քարոզութեան նորա (Դ)*

Արարչագործն Աստուած արքայն համայնից. որ հանապազ խնդրող է մոլար հօտից. նա որ յերկնից իջեալ վասն իւր ծառայից. 'ի փայտ խաչին ելեալ՝ փրկեաց յանիծից։

Եհան յանապատէն զհովիւն բարի որոյ և իսկ անուն Բարաղամ կոչի. իջեալ 'ի քաղաքին վասն Յովասափի որ էր տեղ պատրաստեալ փառացն Յիսուսի։

Եկեալ ի քաղաքին ճգնաւորն ընտրեալ.որ էր Աստուածաշունչ գրովքն վարժեալ. 'ի քաղց և 'ի ծարաւ զմարմինըն ճնշեալ.'ի յայրս և 'ի փապարս լերանց բնակեալ։

Զքաղաքական զգեստ առեալ ագանի. 'ի կերպարանըս եղեալ վաճառականի. գնացեալ էհաս 'ի դուռն որդւոյն արքայի. որ էր լցեալ շնորհօք որդւոյն Միածնի։

Ծառայն Յովասափու զնա տեսանէ. հանդարտաբար սիրով առ նա խօսակցէ ասաց յինչ պէտս եկեալ զնա հարցանէ. ասաց վաճառական եմ յօտար երկրէ։

Եւ մարգարիտ ունիմ առ իս մեծագին.որ չկայ 'ի գանձանակ քո թագաւորին. ոչ ես տեսեալ նման իմոյ մարգարտին. ոչ դու ոչ քո աքքայն ոչ նախնիքն նորին։

Քանզի մարգարիտն այն՝ հանց շնորհ ունի. որ կոյրն տեսանէ և աչքն բանի. խլից լսել շնորհէ և համրն խօսի հոգւով հիւանդացեալն նովաւ բժշկի։

Մտեալ ծառայն ասաց որդւոյ արքային. զբանն Բարաղամու սուրբ ճգնաւորին. որ էր վաճառական անգին մարգարտին, զոր և Քրիստոսն ասաց յաւետարանին։

Հրաման առեալ ծառային 'ի Յովասափէ. զվաճառօղ մարգարտին 'ի ներս մուծանէ. որդւոյ թագաւորին նա զըլուխն դնէ. մանուկն Յովասափ զնա մեծարէ։

Յայնժամ ասէ նմա մանուկն խոհեմ. թէ ցոյց ինձ ի մարգարիտն զայն որ տեսանեմ. ասաց վասն այն եկի որն քեզ ցուցանեմ. զմեծագին մարգարիտն իմ քեզ վաճառեմ։

Բայց նախ դու ունկն դիր մտօք իմ բանիս· որ ես զպատճառն ասեմ այս մեծ մարգարտիս. եթէ խօսից իմոց դու հաւանեսցիս· ապա տեսոյ նորա արժանաւորիս·

Քանզի արքայն և տէրն որ իմ Աստուածն է. յԱւետարանն իւր սուրբ զայս ասացեալ է· առակաւոր բանիւ նա խօսեցեալ է. ամէն մարդոյ խրատ զայս ասացեալ է։

Սերմացանն ելեալ սերմանել յերկրի. 'ի սերմանն անկաւ 'ի ճանապարհի. թռչունք երկնից կերին ոտից կոխելի. է օրինակ մեղաց և սատանայի·

Իսկ այլն անկաւ 'ի փուշ և հեղձուցին զնա. օրինակ մեծութեան որ հոգս ունենայ. և այլն յապառաժի որ ոչ բուսաւ նա. և տապն փորձութեան չորացոյց զնա։

Այլ որ անկեալ բուսաւ 'ի յերկիր բարի. բերեալ պըտուղ հարիւր վաթսուն երեսնի. նման է արդարոց գործոց 'ի յերկրի. այնց որք կամարարք Աստուծոյ լինին·

Եթէ տեղի ունիս դու սերմանելոյ. այլ և լաօղ լինիս բանին Աստուծոյ. յայնժամ ես կամք ունիմ սիրով պատմելոյ. զխորհուրդ պաշտօնէիցս տեառն Աստուծոյ·

Ապա թէ զմարգարիտն իմ դու իմանաս. և հոգւով և մարմնով նմա ցանկանաս զամէն իշխանութիւն քո նորա գին տաս. և անանց մեծութիւն յայնժամ ստանաս։

Իսկ եթէ ոչ ունիս դու տեղի սերման. այլ ես փուշ ապառաժ ճանապարհ կոխան. յայնժամ ի յԱստուծոյ չունիմ ես հրաման. ցուցանել զմարգարիտն իմ քեզ պատուական·

Քանզի յԱւետարանն ինձ պատուիրեալ է. թէ զբան պատուիրանին որ մարգարիտն է. խոզից մեղսասիրաց որք շունք գործովք են մի տայք կոխան առնել՝ զի շատ մեղանք են·

Մանուկն Յովասափ որդի արքային. յորժամ լուաւ զբարբառ սուրբ ճգնաւորին. ծագեաց լոյսն շնորհաց 'ի սիրտս նորին. բորբոքեցաւ սիրով անխօս մարգարտին·



Ուրախութեամբ սկսաւ խօսիլ ընդ նմա. ասէ արքայ որդին մեծին Բարաղամայ. թէ զինչ բան զօր ունիս՝ զամէնն ինձ ասա. քանզի բարի խրատու հոգիս իմ ցանկայ։

Ջերմն հոգևոր դու յիս սերմանէ. թռչունն երկնից զնա տանիլ ոչ կարէ. ոչ տապն փորձութեան չորացուցանէ. և ոչ փուշն մեղաց զնա հեղձուցանէ։

Այլ հաւատով զբան քո յիս ընդունիմ. և լուսով կատարման բարեաց ակն ունիմ. սիրով բուսուցանեմ՝ արդիւնաւորիմ. միթէ անանց կենաց ժառանգ լինիցիմ։

*Առակ զոր ասաց Բարաղամ Յովասափու։* (Ե)

Բարաղամ ասաց առակ մ'ասեմ դու լսէ. որ թէ 'ի միտ պահես՝ քեզ բազում շահ է. անցաւոր աշխարհիս այս օրինակ է. և զկեանս յաւիտենից քեզ ծանուցանէ։

Թագաւոր մի փառօք 'ի կառս իւր նստէր. յանկարծ երկու աղքատ մարդ նա տեսանէր. մարմինքն սևագոյն արևակէզ էր. ոչ ունէին զհանդերձս որ զնոսա ծածկէր։

Ելեալ դէմ արքային ասեն յայտնապէս. մենք եմք քարոզ կենացն ճշմարտապէս. սոսկացեալ թագաւորն այն ահեղապէս. երկիր եպագ նոցա անդ խոնարհապէս։

Զօրքն թագաւորին զնա բամբասեցին. եղբօր նորա ասեն զբանս արքային. և նա գնացեալ պատմեաց զայն թագաւորին. վասն էր խոնարհեցար արանցն այն չնչին։

Սահման կայր քաղաքին այն թագաւորին. զմահապարտ մարդիկն զորս ըմբռնէին. փողով ազդեցութեան ծանուցանէին. որք զգառնագոյն տանջանսն տեսանէին։

Թագաւորն զեղբայրն իւր ետ ըմբռնել. զանզակ մահապարտից հնչեցուցանել· 'ի մէջ հրապարակին ձեռս 'ի յետս կապել. զխորհուրդ դատաստանին ասա ծանուցանել։

Յայնժամ արքայն եղբօրն իւր ելեալ ասէ· թէ դու զարհուրեցար 'ի յայդ մահուանէ. զի արդ ես ոչ վախիմ յարանցն յայնցանէ. որք ինձ սպառնան տանջանս որ ոչ անցանէ։

Յովասափու ասաց Բարաղամ զայս առակ. թէ բան թագաւորին՝ է քեզ օրինակ. որ կամիցիս լսել զբարեացն յիշատակ. ատել զկռապաշտութիւն՝ տանն հակառակ։

Առակ Երկրորդ։ (Զ)

Դարձեալ առակ մի այլ ասեմ այսմ նման. է օրինակ մեղաց և արդարութեան. ունկն դիր և լսէ կամօք հաճութեան. և տես զփառս աշխարհիս դատարկ և ունայն։

Երկու սնտուկ շինեաց արքայ մի բարի. զմինն ելից ոսկւով և ակամբք ցանկալի. և զմիւսն զազրահոտ աղբով աղտեղի. զերկուսն ամուր փակեաց անտեսանելի։

Եւ զայն որ զմէջն ոսկւով ևակամբք լցեալ էր. զդուրսն սևագոյն կպրով ծեփեալ էր. և այն որ 'ի ներսն աղբով 'ի լի էր. մեծագին հանդերձիւ դուրսն ծածկեալ էր։

Ասաց գին արարէք երկու ամանին. նոքա զգործն ծածուկ գիտել չկարացին. զայն որ աղբով լցեալ մեծ գին արարին. և զայն որ մէջն ոսկւով՝ անարգ խոտեցին։

Մեկնեմ զբան առակիս՝ դու սիրով լսէ. այն մարդն որ յաշխարհիս թագուն բարի է. թէպէտ 'ի մէջ մարդկան նա անարգեալ է. առաջի Աստուծոյ յոյժ մեծարեալ է։

Իսկ որ յերևելիս պայծառ և ճոխ է. և ի բարեաց գործոց դատարկացեալ է. թէպէտ զփառս աշխարհիս ասէն վայելէ. ի յահեղ ատենին զամօթ կրեսցէ։

Յովասափ զայս լուեալ յոյժ ուրախացաւ. որ իւր հանց խրատու յանկարծ յայտնեցաւ. ի կռապաշտութեանց նա ազատեցաւ. և որդւոյն Աստուծոյ ծառայ կարգեցաւ։

Ապա դարձեալ ասէ մեծին Բարաղամու. եթէ յայտնեա զխորհուրդ բանիցն առաջնոյ. զանուն թագաւորին քո ուսուցողին. զառակ սերմանողին՝ զմեկնութիւն նորին։

Յայնժամ սուրբն Բարաղամ սկիզբն արարեալ. զստեղծանիլ էիցս նմա ծանուցեալ. զբանսարկուին անկումն որ ապստամբեալ. զմարդոյն լինելութեան զպտղոյն զոր կերեալ։



Զրկիլն յանճառ լուսոյն՝ զանէծս դառնագոյն. այլ և զցաւօք ծնունդ զքիրտն վաստակոյն. զսուգ նախաստեղծին վասն անցանելոյն. զխոստումն Աստուած որդւոյն և մարդանալոյն։

Զծնունդ հօրն Ադամայ և զմօրն Եւայի. զաճումն զաւակաց 'ի վերայ երկրի. որ ոք բարի գործովք եկաց յաշխարհի. և որք հետևեցան կամաց բանսարկուին։

Զմարգարէիցն զդասսն որք գուշակեցին. զմարդեղութեան բանին Աստուծոյ ցուցին. զտնօրինաբար շրջիլն ի մէջ մարդկային. և զքանչելեաց նշան որդւոյ Միածնին։

Զչարչարանս խաչի՝ զթաղումն նորին. զյարութիւն Քրիստոսի յաւուր երրորդին, զհամբառնալ Փրկիչ յաթոռ հայրենի. զգալուստ հոգւոյն սրբոյ ի Պենտէկոստին։

Զքարոզս առաքելոցն յաշխարհիս ամենայն. որք լսեցին նոցա և յԱստուած դարձան. զհաւատ քրիստոնէից որք հաստատեցան. զմոլորութիւնս կռոց որք խափանեցան։

Զգալուստն ի դատաստան որդւոյն Միածնի. զհատուցումն գործոց մարդկայնոյ ազգի. չարագործացն զհուրն անշիջանելի. բարեգործացն զփառս որ յանճառելի։

Եւ յորժամ զայս լուաւ որդի արքային. անկեալ երկիր եպագ սուրբ ճգնաւորին. իմացաւ զզօրութիւն անգին մարգարտին. զոր խոստացաւ յայտնել զայն Յովասափին։

Պատասխանի տուեալ մեծին Բարաղամայ. ասէ զմարգարիտն քո իմացայ. արդ այժմ զհայրենի կուռսն մոռացայ. և Յիսուսի Փրկչին լինիցիմ ծառ այ։

Արդ զինչ բան զոր գիտես զամէնն ինձ ասա՛. քանզի բարի խրատու հոգիս իմ ցանկայ. այս մոլորեալ հոգւոյս ճարակ դու արա՛. և լուսով գիտութեան ինձ առաջնորդեա՛։

Ասաց թէ մկրտիր յանուն Յիսուսի. և Հօրն երկնաւորի՝ հոգւոյն ճշմարտի. անեղ անհաս անճառ Աստուծոյ մեծի. ստեղծողին համայնից երկնի և երկրի։

Ասաց՝ մկրտութեան խորհուրդն զինչ է. ասաց սուրբն

Բարաղամ թէ մեծ պարգեւ է. ի սկզբնական մեղաց զմարդն ազատէ. և Հօրն երկնաւորի որդի անուանէ։

Մկրտութիւնն սուրբ՝ անբիծ հաւատով. ի բազմագոյն մեղաց զմարդն փրկելով. լուսափայլ պատմուճան ագուցանելով. ժառանգակից կենաց բանին առնելով։

Մկրտութիւն սուրբ՝ կենաց պատճառ է բժշկութիւն հոգւոյ և դեղ ցաւոց է. ի խոցմանէ չարին զմարդիկ բժշկէ. ի մահուանէ մեղաց կենդագործօղ է։

Մկրտութիւն սուրբ՝ գեղումն է շնորհաց. և ճանապարհ գնացման յուսով առ Աստուած. դուռն է արքայութեան և հանգիստ փառաց. ժառանգ յաւիտենից անպատում բարեաց։

Մկրտութեան շնորհն գերագոյն է. որ ամէն բարութեան պատճառ և սկիզբն է. զախտի ծնունդս որդի Աստուծոյ առնէ. զապականեալ բնութիւնս կենդագործէ։

Մկրտութիւն զգեստ է արքունական. ի Քրիստոսէ շնորհեալ մեզ որդւոց մարդկան. պարիսպ է ամրութեան և զէն յաղթութեան. քաղաք ապաստանից և գանձ պատուական։

Մկրտութեամբն ո՛վ որ սրբեալ մաքրեսցի. բազմապատիկ շնորհաց արժանաւորի. աստէն ի յօրհնութեան իւղոյն օծանի՝ և անդ ի յԱստուածային լուսոյն վառեսցի։

Զմկրտութիւնն ո՛վ որ սրբութեամբ պահէ. նա յառագաստն երկնից առ Տէր մտանէ. իսկ որ աղտեղացեալ զազիր գործով է. նա յահեղ ատենին զամօթ կրեսցէ։

Արդ դու թէ մկրտիս յանուն Յիսուսի. յորդէգրութիւն կոչիս Հօրն երկնաւորի. տաճար կազմիս անճառ հոգւոյն ճշմարտի. և ժառանգ ես զկեանսն որ անպատմելի։

Յայնժամ ուրախացաւ որդի արքային. պատասխանեալ ասէ սուրբ ճգնաւորին. զիա՞րդ կատարեցից զկամս Արարչին որ ազատիմ յանշէջ հրոյ գեհեննին։

Ասաց թէ ուրացիր զկուռսն զիւական. որք են ձեռաց գոր-



ծիք արարեալք մարդկան. մերկացիր զխաւարն որ անգիտութեան. ծանիր զլոյս հաւատոյ Աստուած գիտութեան։

Մաքրիր մկրտութեամբ յաղտից մարմնական, զգեցիր ըզհոյլին շնորհաց անսպառական. զերծիր 'ի տանջանաց յաւիտենական. և լեր բաժին շնորհաց և արքայութեան։

Զի որք զկուռսն պաշտեն՝ մտօք մոլարք են. և զարարիչն Աստուած իսկ մոռացեալք են. ցուցից քեզ օրինակ թէ ո՛ւմ նմանք են. առակաւոր բանիւք որ նշանակեն։

### Առակ Երրորդ. (Է)

Մարդ մի ճնճղուկ մի ետես և ըմբռնեաց զնա. այլ նա սկսաւ խօսիլ և ասէ նմա. թէ զիս արձակեսցես՝ քեզ բազում շահ կայ. երեք բան խրատ տամ՝ քեզ օգուտ լինայ։

Լուաւ այրն ճնճղիկին և արձակեաց զնա. ելաւ նստաւ 'ի ծառն և ասաց նմա. ականջս եդ նմա բարբառեցաւ նա. երեք խրատն այս էր զոր ասաց նմա։

Ասէ՝ թէ անհաւատ բանից մի հաւատալ. և յայն տեղն որ չհասնիս ձեռօք մի ձկտալ. զանցեալ բանն որ գնաց՝ զայն մի ափսոսալ. 'ի միտ առ զխրատս և մի մոռանար։

Յայնժամ փորձեալ զնա և դարձեալ ասէ. յիս կայ հանց մարգարիտ որ մեծագին է. պայծառ և պատուական և գեղեցիկ է. որ քան զջայլամու հաւկիթ մի մեծ է։

Իսկ նա որ արձակեաց՝ եղև փոշիման. գնաց գոյնն նորա վասն տրտմութեան. ձգեաց զձեռն ըմբռնել զճնճղուկն զայն. իսկ նա դարձեալ ասէ յիմար մարդոյն այն։

Զիա՞րդ ասէ զխրատն իմ դու մոռացար. և զսուտն զոր ասացի ուղորդ իմացար. 'ի ձեռդ էի անկանեալ պահել չկարացար. զանցեալն հոգացեր որ այլ չկայ ճար։

Նոյնպէս են որք կռոց երկրպագուք են. և զձեռագործս իւրեանց Աստուածս անուանեն. զԱստուածն ամենայնի 'ի բաց թողեալ են. և զբարեաց պարգևօղն մոռացեալ են։

Այլ մեզ մի է Աստուած հայրն ամենակալ. և մի է Մի-

ածին հօր հաւասար. հոգին ճշմարտութեան 'ի հօրէ բղխեալ· փառակից Միածնին և ոչ բաժանեալ։

Անձամբ է երրակի՝ բնութեամբ միակի. անուամբ երեք կոչի՝ կամքն է եզակի. բաժանեալ է յերիս և անբաժանելի· երեակն 'ի միասին անեղանելի·

Մինն ծնօղ կոչի՝ անմարմին բանին. մինն ծնունդ ասի հաւասար ծնողին· մինն ելումն 'ի հօրէ անճառ անքննին. էիցս համօրէն միայն գիտողին·

Անեղ է հայրն Աստուած յաւիտենական· անեղակից որդին ծնունդ հայրական. անեղարար հոգին՝ հօր համանման. էակից Միածինն 'ի գործ կատարման·

Արարիչ հայր ասի երկնի և Երկրի. արարչակից որդին էիցս ամենի. կատարիչ սուրբ հոգին ստեղծական սեռի. իմանալեաց՝ զգալեաց՝ ծովու և ցամաքի·

Կամաւ հօրն լուսոյ արարածքս եղեն. մարդեղութեամբ բանին՝ գերեալք փրկեցան. Աստուծոյ սուրբ հոգւոյն նման Նորոգման. անեղ և անզրաւ կենօք անվախճան·

Արդ՝ դու թէ հաւատաս 'ի նմ ապրեսցիս· մկրտութեան շնորհաց արժանաւորիս. 'ի փորձութեանց մեղաց կամաւ զերծանիս. անտրտմելի կենօք միշտ մխիթարիս։

Քանզի փառք աշխարհիս այս անպիտան է· և թագաւորութիւն քո քեզ մնալոյ չէ. այսօր դու վայելես՝ վաղիւն այլոց է. անշէջ հուր գեհենին՝ ձեզ պատրաստեալ է։

Եթէ լսօղ լինիս այլ առակ ասեմ. զոչինչ կեանքս աշխարհիկ քեզ օրինակեմ· եթէ ունկն դնես զոր, ծանուցանեմ. կամիմ զի 'ի մեղաց զքեզ ազատեմ·

Առակ Չորրորդ։ (Ը)

Մարդ մի փախուցեալ էր 'ի մի եղջերէ. գնացեալ 'ի խոր վիրապ մի նա հասանէ. 'ի մէջ գբին վիշապ մի մեծ տեսանէ· և հուր 'ի բերանոյ նորա բորբոքէ։

Իսկ 'ի բերան հրոյն գծառ մի տեսանէր· զձեռն ձգեալ



ոտիւք 'ի նա հաստատէր. երկու մկունք մինն սև՝ մինն սպիտակ էր· հատանէին զճիւղն՝ որ ըմբռնեալ էր։

Չորս օձք ներքոյ ոտից նորա փորէին. կամէին ընկենուլ զմարդն այն 'ի գբին. իսկ 'ի ճղէն այնմիկ՝ յոր մկունքն էին. սակաւ ինչ քաղցրութիւն մեղր ծորէին·

Իսկ նա մոռօք մոլար և յիմարեալ էր. որ զահ մի եղջերուին այն մոռացեալ էր· զգբոյն և զվիշապին որ հուր բորբոքէր. անկմանն հայէր մարդոյն որ զնա կլանէր։

Զօձիցն որք 'ի ներքոյ ոտից նորին կայր. զմկանցն որք կտրէին զճիւղն յոր յեցեալ կայր. զորոգայթս ամենայն մարդն այն մոռանայր, և 'ի դէմս ճղին զբերանն բանայր։

Մի եղջերու մահու օրինակել է. վիշապն ահագնագոչ՝ ձայն դժոխոցն է. վիրապն խորագոյն՝ գերեզմանիկն է. չորս իժքն ոտից ներքոյ՝ այն տարերացս է։

Մկունք սեաւ և սպիտակ՝ տիւ և գիշերն է. զայս ամենայն մարդկան՝ ազգ մոռացեալ է· իսկ քաղցրութիւն մեղերն՝ ոչինչ կենցաղս է· որ պատրանօք չարին կորուսանօղ է։

Լուաւ զայն Յովասափ և յոգւոց էհան· և 'ի կռապաշտութեանցն եղև փոշիման. ասաց ճգնաւորին սուրբ հայր պատուական· ուսո ինձ զայլ խրատ օգւոյս փրկութեան։

Քանզի՝ Լուսաւորիչ դու ինձ յայտնեցար. հանելով 'ի բանտէ զհոգիս իմ խաւար արդ մարգարիտ ունիս դու անգին ճոհար. և ես կամիմ ստանալ՝ հոգւոյս իմ յօժար։

Առակ Հինգերորդ։ (Թ)

Առակ մի այլ ասաց նա Յովասափին. թէ՝ երեք սիրելիք մարդոյ մի կային. զերկուսն մեծարէր խիստ յօժարագին. և զմինն ոչ մեծարէր հաւասար նոցին։

Յաղքատութիւն անկաւ այրն այն մեծատուն. կոչեաց զբարեկամս զերկոսին սիրուն. խնդրեաց 'ի նոցանէ ինչս

'ի յօգնութիւն. ասաց թէ պարտք ունիմ բազում և անհուն

Ասաց թէ զիս կոչէ արքայն 'ի յատեան. և ես բիւր քանքարոյ եղէ պարտական. յիշեցէք զառաջին զութն սիրական. լերուք ինձ կարեկիցք յորս այս նեղութեան։

Իսկ մինն ասէ յինէն քեզ ճարակ չկայ. բայց թէ երկու կտաւ տամ ձռ և գնա. երկրորդն ասէ թէ գամ ընդ քեզ առ արքայ. բայց խօսիլ ոչ կարեմ առաջի նորա։

Այլ նա յուսահատեալ յերկուց սիրելեացն. առ երրորդն գնաց սրտիւ դառնագոյն. բայց ոչ կարէր հայիլ յերեսս յամօթոյն. զի սէր չունէր ընդ նա կատարելագոյն։

Այլ նա կոչեալ սիրով առ ինքն և խօսի. ասէ մի երկնչիր իմ քաջ սիրելի. ես քո փոխան խօսիմ 'ի դուռն արքայի. ազատեմ 'ի պարտուց քոց ամենայնի։

Յորժամ լուաւ զառակս որդի արքայինդ. աղաչեաց զԲարաղամ մեկնել զայն նորին. և նա սկսաւ ասել զայն Յովասափին. և ունկնդիր լինէր Յովասափ բանին։

Ասաց թէ սիրելի մարդոյն մին ինչքն են. և երկրորդ ազգականքն և բարեկամքն են. յորժամ 'ի յօր մահու մարդն հասանէ. ոչ ազգն է օգնական՝ ոչ ինչքն փրկէ։

Իսկ թէ գործս բարիս յաշխարհ ունիցի. երրորդն այն սիրելին է զոր ասացի. լինի իւրն ապաւէն յատեանն Յիսուսի. և ազատէ յանշէջ հրոյն գեհենի։

Լուեալ զայն Յովասափ յոյժ ուրախացաւ. և բոլորով սրտիւ յԱստուած յուսացաւ. 'ի խօսսն Բարաղամու փառաւորեցաւ. զունայնութիւն կենձաղս և երազ իմացաւ։

Առակ Վեցերորդ (Զ)

Առակ մի այլ Բարաղամ ճգնաւորն ասէ. այր մի ունէր որդի սիրուն 'ի սրտէ. կամեցաւ կին առնուլ 'ի մեծատանէ. այլ նա գնացեալ յօտար երկիր հասանէ։

Ետես անդ կոյս աղջիկ մի աղքատի. ճարտար սուրբ և անարատ և իմաստիւք լի. եկեալ իւր հօրն ասէ թէ այն



ինձ պիտի. և նա գնացեալ է առ զնա իւր զաւակի։

Յորժամ որ հարսանեաց աւուրքն լցան. կոչեաց ալևորն այն զփեսայն 'ի տան. ասաց աչացս իմ լոյս որդի պատուական. խոհեմ և իմաստուն և յոյժ սիրական։

Արդ որ յաղքատութիւնս իմ հաւանեցար. և 'ի կուսան դստրիկն իմ դու հաճեցար. զփարթամութիւն հօր քո փութով մոռացար. կամիմ զքեզ խնայէլ իմ սրտովս յօժար։

Եւ ետ նմա զմրուխտ ակն մի պատուական. որ էր քան լոտէր չափով ծանրութեան. վաճառեաց և հասաւ նա փարթամութեան. եօթնապատիկ քան զհայրն 'ի հարստութեան։

Իսկ Յովասափ ասաց թէ զայդ ինձ մեկնէ. քանզի ուրախացայ 'ի քոյին բանէ. զի այն որ առաքեաց զքեզ յանապատէ. նոյն ինքն անճառ կենօք զքեզ փառաւորէ։

Ասաց՝ երիտասարդ մանուկն դու ես. աղքատ ծեր ալևորն՝ ես որ պատմեմ քեզ. և դուստրն գեղեցիկ՝ զոր ասացի քեզ. այն վարքն է սրբութեան՝ յոր հրաւիրեմ զքեզ։

Իսկ ակն մեծագին արքայութիւն է. ուր անապատում բարիք անդ ամբարեալ է. և այն որ ծանրութեամբն քան լիտր է. զյաւիտենից զկեանսն նշանակէ։

Թէ դու քարոզութեանս իմոյ լուիցես. և զճշմարիտն Աստուած հոգւով ճանաչես. 'ի չար գործոց մաքուր զքեզ պահեսցես. և զյետին օր մահուն քոյ միշտ յիշեսցես։

Յայնժամ ստանաս աստէն բազում մեծութիւն. քան զհայր քո առաւել թագաւորութիւն. յետոյ ժառանգեսցես զանանց մեծութիւն. և հասանիս յերկնից թագաւորութիւն։

Լուաւ զայն Յովասափ և ուրախացաւ. հոգւով այլ և մարմնով բերկրեալ ցնծացաւ. 'ի տեառնէ Աստուծոյ նա յոյժ գոհացաւ. զի այնպիսի բժիշկ նմա յայտնեցաւ։

Ասաց նա Բարաղամու սուրբ ճգնաւորին. թէ ո՞րքան տարւոյ են աւուրք քոյին. քառասուն և հինգ ամաց եմ ասէ նմին. զարմացաւ ընդ բանին որդի արքային։

Ասաց թէ ծերացեալ՝ ալեօք սպիտակ ես. որ ութսուն տարեկան՝ այլ աւելի ես. արդ քառասուն և հինգ տարւոյ ասեն զքեզ. զիա՛րդ այսու բանիւ զիս հաւան առնես։

Ասաց՝ եօթանասուն 'ի ծննդենէ եմ. այլ զոր յաշխարհ կացի զայն ոչ համարեմ. բայց քառասուն և հինգ որ յանապատ եմ. իսկ որ յառաջ քան զայն ո՛չինչ համարեմ։

Քանզի որ յաշխարհիս՝ մեղօք ցնորի. մեռեալ է նա հոգւով և չէ կենդանի. Նորա կեանքն 'ի մարդոյ համար չանկանի. այլ անբան անասուն և մեղաց գերի։

Քառասուն և հինգ ամ յանապատի եմ. յընթերցմանէ գրոց՝ ես դադարեալ չեմ. 'ի քաղց և 'ի ծարաւ զմարմինս ճնշեալ. և թողութիւն մեղաց յԱստուծոյ հայցեմ։

Եհարց յանպատին դուք ինչ կերակրիք. ասաց՝ զայն որ ուտեն անբան վայրենիք. դալար խոտ բանջարոյ է մեզ ուտելի. և 'ի ցօղոյ երկնից լինի ըմպելի։

Ասաց՝ ազանելի մարմնոյ ձեր զի՛նչ է. ասաց թէ մաշկեղէն և մազեղէն է. յամառ և 'ի ձմեռ մեր հանդերձ է. միայն որ զմերկութիւն մարմնոյ ծածկեսցէ։

Քանզի որք կամիցին տեառն ծառայել. պարտին զանդամս մարմնոյ՝ յերկրի սպանանել. բազում ազգի ազգի վշտաց համբերել. ապա վերինն երկրի ժառանգորդ լինել։

Ասաց թէ՝ քո հանդերձն մազեղէն է. ապա զայդ որ զգեցեալ ես այդ ուստի՞ է. ասաց թէ զայս առեալ եմ յայս քաղաքէ. զի զգալս իմ որ առ քեզ ոչ ոք իմասցէ։

Քանզի յանապատէն յորժամ ես ելայ. զայս մեծատան հանդերձս առի և ագայ. ապա 'ի գաւառն եկեալ հրաման ընկալայ. և այս կերպարանաւս յապարանսս մտայ։

Ապա ասէ առ նա որդի արքային. թէ հանգիս 'ի բանտէս այս խաւարային. և տար 'ի յանապատ աղօթից քոյին. միթէ ազատիցիմ 'ի հրոյ գեհեննին։

Պատասխանեալ Բարաղամ որդւոյ արքային. զքեզ ո՛չ կարեմ տանել 'ի յանապատին. այլ դիր ականջ բանիս իմոյ առակին. կամիմ տալ օրինակ զալստեան քոյին։



Առակ Եօթներորդ։ (ԺԱ)

Որսորդ մի ըմբռնեալ էր ձագ մի եղին. բերեալ սովորեցոյց 'ի մէջ մարդկային. յետոյ գնացեալ էհաս յերէոց միջին. զհետ Նորա մտին զայլսն ըմբռնեցին։

Նոյնպէս թէ զքեզ տանիմ՝ քո հայրն իմանայ. և թէ ընդ որ երթամ զտեղին գիտենայ. զեղբարսն իմ զամենայն որոյ իւր կեր տայ. և զքեզ անդ ո՛չ թողուն՝ բերեն առ արքայ.

Այլ զինչ խրատ տամ քեզ՝ պահեա. ի սրտի և մկրտիր յանուն որդւոյն միածնի. ես յանձն առնեմ զքեզ փրկչին Յիսուսի. Նոյն ինքն առաջնորդէ քեզ զինչ և կամի։

Ես ակն ունիմ յԱստուած հայրն ամենակալ. և 'ի յԱստուած որդին 'ի հօրէ ծնեալ. որ զքեզ ուղևորէ փութով առ իս գալ. և յայնժամ 'ի միմեանց այլ ո՛չ հեռանալ։

Յովասափ Բարաղամու զայս բան հարցանէ. թէ սուրբ հայր հոգևոր զայս ինձ հրամայեա. թէ մարդ որ մկրտի՝ կրկին մեղանչէ. նա զթողութիւն մեղաց ո՞րպէս գտանէ։

Ասաց թէ բարերար տէրն ողորմած է, որ 'ի մեղաւորաց զդարձն խնդրէ. քանզի որ առ Աստուած սրտով դիմեալ է. նա զառաջին յանցանս նորա ո՛չ յիշէ։

Որչափ որ գլորի մարդն թող կանգնի. որքան որ մեղանչէ՝ նա խոստովանի. զթած և մարդասէրն Աստուած ընդունի. արքայութեան առնէ զնա արժանի։

Յաւետարանն սուրբ՝ նա մեզ խոստանայ թէ ով որ գայ առ իս անտես չառնեմ զնա. քանզի առանց մեղաց յերկրի մարդ ո՛չ կայ. այլ անդարձ 'ի դիւաց նմա լինայ։

Քանզի Եսայեայ մարգարէն ասէ. թէ զանօրէնութիւն քո լեզուաւ յայտնէ. յայնժամ արդարանաս շնորհօք 'ի տեառնէ և յԱստուծոյ քեզ մեծ պարգև իջանէ։

Դաւիթ ասէ պատմեմ ինձէն զմեղս իմ. դու զանբարըշ-

տուԹիւնս մեղաց Թողուս զիս. մարգարէին ասէ՝ զգարձն կամիմ. այն որ յերկնից իջաւ բժիշկ և հաքիմ։

Զի մեղաւորն յորժամ դառնայ 'ի մեղաց. խոստովանի զբաղում չարիս յանցանաց. գԹած հայրն երկնաւոր մաքրէ 'ի մեղաց. այն որ անառակի որդւոյն դէմ գնաց։

Քանզի ողորմուԹիւն տեառն անսպառ է. որ ամենայն զգարձն խնդրէ. իսկ որ անզեղջ մնայ ամեն մարդոյ. և ոչ ապաշխարէ. անշէջ հուր գեհենոյն նմա պատրաստ է։

Յովասափ Բարաղամու դարձեալ զայս ասէ. յորժամ կամիս գնալ դու զիս մկրտէ. և առ ոսկի և արծաԹ՝ որչափ քեզ պէտք է. և տար 'ի յանապատն ուր կրօնաւորքն է։

Յայնժամ Յովասափու ասաց Բարաղամ. Թէ ոսկւոյ և արծաԹոյ քոյ ոչ ցանկանամ. և զի ես քան զքեզ այլ խիստ եմ փարԹամ. անցաւոր փառաց քոց ոչ կարօտանամ։

Քանզի զայդ մեծուԹիւնդ որ դու վայելես. վաղին այլոց Թողուս 'ի հող մտանես. դու ոսկւոյ և արծաԹոյ ծառայ եղեալ ես. որպէս զաղբ անպիտան զայն համարիմ ես։

Վասն այն ես՝ քան զքեզ այլ մեծատուն եմ. փառաց և մեծուԹեան ես ցանկացօղ չեմ. յանանց կեանքն անվախճան զանձ ժողովեալ եմ. յընչից մարմնական զիս ազատեալ եմ.

Եւ Թէպէտ յաշխարհի շրջիցիմք աղքատ. այլ ակն ունիմք անանց բարեացն յորդառատ. յուսով և հաւատով՝ սիրով անարատ. ծառայեմք Աստուծոյ 'ի մեղաց ազատ։

Այլ Թէ յընչիցդ առեալ յանապատ տանիմ. խռովուԹիւն արկանեմ մէջ ընկերացն իմ. յայնժամ մեղաց պատճառ ես նոցա լինիմ. և աղօԹից՝ նոցա խափանիչ լինիմ։

Քանզի երկուց տերանց. մարդ ոչ ծառայէ. զի Թէ զմինն սիրէ միւսն ատելի է. զի որ մամոնայի ծառայ եղեալ է. նա յԱստուծոյ սիրոյն զինքն զրկեալ է։

Այլ դու Թէ կամենաս զքեզ մկրտեմ. 'ի յառաջին մեղաց



կւոցն ազատեմ. որդի հօր Աստուծոյ՝ շնորհօք զարդարեմ. ժառանգակից բանին Աստուծոյ առնեմ։

Վասն մկրտուԹեան Յովասափու (ԺԲ)

Յայնժամ հրաժարեցոյց 'ի սատանայէ. զերրորդուԹիւնն սուրբ՝ դաւանել ասէ. 'ի մահն Քրիստոսի ընդ նմա մկրտէ. շնորհք հոգւոյն սրբոյ 'ի նա իջանէ։

Հաղորդեցոյց զնա մարմնոյ կենսատուին. ուսոյց պահել նմա զբան պատուիրանին. ասաց զգուշանալ կամաց արարչին. և ինքն ելեալ գնաց 'ի տեղ առանձին։

Իսկ մի 'ի ծառայից որդւոյ արքային. որ Զարդ անուն նորա վերակոչ էին. իմացաւ զգալուստ առ նա Բարաղամին. և զքրիստոնեայ լինելն Յովասափին։

Եկեալ առ Յովասափ Զարդն այն և ասէ. Թէ վասն քո գործոյդ՝ ահ զիս պատեալ է. ընդէր այն ծերունին առ քեզ մտանէ. կլինեմ որ քրիստոնեայ զքեզ արարեալ է։

Քո հայրն 'ի յայսմ երկրէ զնոսա հալածեաց. զքրիստոնէից անունն յաշխարհէ ջնջեաց. և զքեզ վասն այնորիկ 'ի տուն արգելեաց. զի մի լուիցես զբան նոցին օրինաց։

ԵԹէ զխորհուրդս զայս հայր քո իմանայ. որ մուտ և ել ունի առ քեզ քրիստոնեայ. փուԹով զամենեսեան զմեզ սպանանել տայ. որք ոչ զգործս քո յայտնեցաք նորա։

Պատասխանեալ նմա որդի արքային. եԹէ յորժամ զայցէ առ իս ծերունին. դու ծածկատես կացցես դէմ վարագուրին. ունկնդիր և լսէ զխրատ նորին։

Վաղիւն եկեալ առ նա սուրբ ճգնաւորին. յայնժամ խօսի ընդ նա որդի արքային. ասէ սուրբ հայր կարօտ եմ բանից քոյին. դարձեալ զիս խրատեա կամօք արարչին.

Յովասափու Բարաղամ զայս դարձեալ ասէ. Թէ զոր քեզ ուսուցի՝ դու 'ի միտ պահէ. յաղտեղուԹեանց մեղաց զհոգիդ որոշէ. 'ի սէրն Քրիստոսի զքեզ բևեռէ։

Աղամ որ ոչ պահեաց զպատուէր արարչին. մերկացաւ

'ի լուսոյն ճաշակմամբ պտղին. մինչ բանն Աստուած մարնով՝ ազատեաց զնոսին. զԱդամ ընդ Եւայի և զծնունդն նոցին։

Եւ այլ բազում բանիւ խրատեաց զնա. և զայրն ունկն դնէր բանիցն նորա. իմացաւ զճշմարիտ հաւատալ նորա. բայց ոչ ետ հաւատալ նմա սատանայ։

Ապա եկեալ ասէ որդւոյ արքային. զայրն այն որ ծառայէր նա Յովասափին. զայս ոչ կարեմ ծածկեալ 'ի հօրէ քոյին. զոր դու հաւանեցար խաբեբայ ծերին։

Յովասափ ծառային պատասխանի տայ. թէ ճշմարիտ եղեալ եմ ես քրիստոնեայ. եթէ հայրն իմ արքայ զիս ըսպանանել տայ. իմ սիրտս 'ի Քրիստոսէ այլ ոչ հեռանայ։

Վասն այն զքեզ բերի՝ որ դու լսէիր մի թէ բարի խրատու այն հաւանէիր. և դու ոչ ընկալար զլոյսն առատաձիր. ողիդ մնաց խաւարեալ՝ ունայն և նանիր։

*Վասն գնալոյն Բարաղամու յանապատ։* (ՃԳ)

Եկեալ առ Յովասափ ճգնաւորն ընտրեալ. ասէ թէ Քրիստոս ես դու զինուորեալ. զհաւատս յաւազանէն որ քեզ աւանդեալ. որդեակ իմ ըստ հոգւոյ՝ պինտ հաստատուն կալ։

Ես յանձն առնեմ զքեզ որդւոյն միածնի. այնմ որ նախախնամիչ է ամենայնի. խաղաղութեամբ կացիր 'ի քոյդ պալատի. գնամ ես առ ընկերսն իմ յանապատի։

Յովասափ Բարաղամու կայս դարձեալ ասէ. 'ի քէն խնդիրք ունիմ դու ինձ կատարէ. զկրկնոցդ և զմազեղէնդ հայր ինձ պարգևէ. որ առիս յիշատակ 'ի քէն մնասցէ։

Ընհան զմազեղէնն և զկրկնոցն յանձնէն. առեալ զայն Յովասափ ի ճգնաւորէն. և զգեցաւ 'ի մարմնի՝ դէմ բանսարկուին զէն. որպէս զմաշկեակն սուրբ ի յեղիայէն։

Եւ լալով զմիմեանս համբուրեցին. ելեալ Բարաղամ զընաց յիւր անապատին. հանապազ աղօթէր վասն Յովասափին. միթէ ազատեսցի յաղտից մարմնային։



*Վասն յայտնելոյ Զարդ ծառային՝ զքրիստոնեայ լինելն Յովասափու։* (ՃԴ)

Իսկ Յովասափ ի տան իւրում աղօթէր և Զարդ ծառայն յահէն հիւանդ անկանէր. էհարց զնա թագաւորն և ասել չկարէր. յետոյ ի յերկիւղէն զճշմարիտն ասէր։

Ասաց թէ իմացիր տէր իմ և արքայ. որ Յովասափ մանուկն եղև քրիստոնեայ. քանզի յանապատէն ծերմ՝ եկեալ առ նա. քարոզելով նմա մոլորեցոյց զնա։

Յայնժամ լուաւ արքայն և յոյժ տրտմեցաւ. որպէս զկատաղի չար գազան դարձաւ. կոչեաց զմեծամեծս ցնոսա հարցաւ. թէ զինչ առնէ մանկանն որ զկուռսն ուրացաւ։

Իսկ ումն որ Առաշխս անուն կոչէին. որ էր աստեղաբաշխ երկնից կամարին. ետես յոյժ դառնացեալ զերեսս արքային. ասաց թէ մի տրտմիր վասն Յովասափին։

Արդ զմոլորեցուցիչ ծերն ես ըմբռնեմ. և ի յատեան մահու զնա կացուցանեմ. չարաչար տանջանօք զնա վիրաւորեմ. զՅովասափ 'ի նմանէ փութով բաժանեմ։

Զճանապարհ քաղաքին զայն ըմբռնեցին. բազում զօրօք ելեալ զԲարաղամ խնդրեցին. գնացեալ ի յանապատ զնա որոնէին. յոլով աշխատեցան զԲարաղամ ոչ գտին։

Իսկ ի կրօնաւորացն որք յանապատին. բազումք յահէ նոցին զփախուստ առին. զտասն և ութ ըմբռնեալ և ի հետ բերին. որպէս զանմեղ Գառինս նահատակեցին։

*Վասն Նաքովրայ կախարդին։* (ՃԵ)

Իսկ կայր ի քաղաքին Նաքովր անուն մի. էր չար և խաբեբայ կախարդութեամբ լի. եկեալ անդ Առաշխս և ընդ նա խորհի. խաբեալ զՅովասափ մանուկն բարի։

Ելեալ գնաց ծածուկ ի յանապատին. Նաքովր անուն կախարդ կամարար չարին. կերպարանեալ կամաւ յանուն Բարաղամին. բանիւ Առաշխսին և թագաւորին։

Գնացեալ յետոյ զօրօք զնա ըմբռնեն. բերեալ ի քաղաքին ի բանտ արգելեն. կամաւ հրապարակին յայտնի

համբաւեն. թէ զծերունին Բարաղամ առեալ բերեալ են

Գնաց առ Յովասափ արքային Աբեննէր, ասաց թէ այս զինչ է զոր դու գործեցեր. ի յաստուծոց մերոց զմեզ բաժանեցեր, զքրիստոնէից աղանդ կամաւ յանձն առեր։

Նախատինս արարեր զմեզ ազգի մարդկան. և կուռքն հաւասար՝ մեզ յոյժ բարկանան. խռովին վիրաւորին՝ փախչին և գնան. այլ ոչ որ Աստուած լինի երկրիս պահապան։

Լաւ էր չէիր ծնեալ յերկրի մեզ զաւակ. զի ծնար և արարեր զմեզ խայտառակ. առելի չաստուածոցն եղեր և ներհակ. և օրինաց մերոց յայտնի հակառակ։

Արդ՝ ես զվարդապետն քո կապեալ եմ ի բանտ. և ի գնտան ղնա արգելեալ եմ վաղւին ի յատենի զնա կացուցանեմ. զխաբէութիւն նորա զքեզ ծանուցանեմ։

Յովասափ պատասխանի առնէ արքային. ասէ մի բարկանար հայր իմ զայրացին. քանզի կամաւ թողի զխաւարն ներքին. և զգեցայ զլոյս փառացն վերին։

Քանզի զկուռսն որ պաշտէք՝ շինուածք են ձեռին. և արարածք մարդկան՝ Աստուած ոնց լինին. այլ նա որ ստեղծեաց զերկիր և զերկին. Աստուած է համայնից՝ երրեակ է և մին։

Արդ՝ ես ի հայր Աստուած հաւատացեալ եմ որդւոյ. և սուրբ հոգւոյն երկրպագեալ եմ. ի բանն Աստուած Յիսուս ես յուսացեալ եմ. որ և զքեզ քրիստոնեայ՝ յետոյ առնիցեմ։

Իսկ Աբեննէր արքայն բարկութեամբ լցեալ. ելեալ յոյժ դառնութեամբ և ի տուն գնացեալ. այլ Յովասափ մանուկն ի տրտմութեան լեալ. գիտաց թէ վարդապետն իւր էր ըմբռնեալ։

Վասն յայտնելոյ հրեշտակին յերազ գիշերոյ Յովասափու զնենգութիւն Նաքովրայ կախարդին (Փ.Զ)

Գիշերն ի յերազի՝ հրեշտակն յայտնէ. որդւոյ թագաւորին զայս ծանուցանէ. թէ այն որ ի բանտին Բարաղամ ոչ այլ կախարդն է Նաքովր՝ որ խաբեբայն է։



Վաղիւն զքեզ կամին կոչել յատենի. Նաքովր ի Բարաղամու կերպարան լինի. բերեն զիմաստասէրն ի յայն հանդիսի. և զքեզ կամին խաբել ձեռամբ Նաքովրի։

Զարթեաւ ի յերազոյն մանուկն բարի. և գոհացաւ զտեառնէ որդւոյն Միածնի, որ յայտնեաց զգաղտնիս ձեռամբ հրեշտակի. զի որդի արքային ոչ մոլորեսցի։

Թագաւորն Աբեննէր ժողով արարեալ. զաստեղագէտս ամէն 'ի մի հաւաքեալ. Նաքովր 'ի Բարաղամու կերպն փոխարկեալ. բերին զնա յատենի և հարցափորձեալ։

Մանուկն Յովասափ անդէն ժամանէ. տեսեալ անդ զկախարդն՝ իսկոյն ճանաչէ. բայց ոչ ասաց նոցա՝ վարդապետն իմ չէ. մինչև բանիւ նորա զնա որսասցէ։

Փիլիսոփայիցն ասաց Աբեննէր արքայի. եթէ կարէք յաղթել զալևոր ծերն այն. առնուք յինէն պարգևս և զգանձ պատուական. ապա թէ ոչ՝ էհաս ձեր օրն մահուան։

Իսկ Յովասափ ասաց սուտ Բարաղամին. թէ դու ինձ ուսուցեր զօրէնս Քրիստոսին. ցուցեր զիս ատելի իմ հօրն արքային. որոշեցեր 'ի կռոց խրատով քո բանին։

Արդ եթէ ճշմարիտ է, զոր ասացեր. այսօր փիլիսոփայիցս դու յաղթեսցես. նա 'ի հօրէս իմմէ կասկած մի կրեր. յայտնի օրինաց քոց՝ դու քարոզօղ լեր։

Եւ թէ խաբէութեամբ դու զիս պատրեցեր. և սուտ և անիրաւ օրէնս ուսուցեր. նա քո կենդանութեանդ վճար դու եղեր. 'ի քո մէջդ կտրեմ և տամ քեզ 'ի կեր։

Անդամ անդամ զմարմինդ քո կտորեմ. և շանց և գազանաց զքեզ արկանեմ. ամէն մարդոյ խրատ զքեզ ցուցանեմ. այսօր զսուտն և զիրաւն քո ես յայտնեմ։

Յայնժամ որ նախ դիւաց նա բնակարան էր. շնորհացըն Աստուածայնոյ ընդունակ լինէր. որդւոյ թագաւորի յերկիւղէն սարսէր. և սուտն Բարաղամ զճշմարիտն ասէր։

*Վասն քարոզելոյ սուտ Բաղաղամին. որ էր Նաքովը, զքանս ճշմարտին Յիսուսի. զոր Հոգին սուրբ յայտնեաց այն կախարդին։* **(ԺԵ)**

*Ասաց ոմն նմա՝ թէ դու Բաղաղամ ես. որ սուտ և խաբեբայ օրէնս քարոզես. ասաց ճշմարտութեան վարդապետ եմ ես. որ որդւոյ արքայի օրէնս ցուցի ես։*

*Յայնժամ Հոգւոյ շնորհօք՝ լցեալ կախարդին. զոր Տէրն օրինաց հակառակ բերին. որպէս յայնժամ Բաղաղամ դէմ իսրայելին. անէծքն 'ի յօրհնութիւն փոխարկեալ լինին։*

*Խօսեալ ընդ արքային բանիւ և ասէ. այն որ ծածուկ Նաքովը՝ յայտնի Բաղաղամ է. թէ կուռքն զոր պաշտէք այն ձեզ վնաս է. զի բնակարան դիւաց պատկեր կանգնեալ է։*

*Ոմանք որք զլուսաւորս Աստուածս ասացին. նոքա մոլորեցան և ոչ գիտացին. զի փոփոխին տեղեաւ և ոչ կադարին. հրամանաւ անփոփոխ կամօք Արարչին։*

*Իսկ որք զչորս տարերս՝ Աստուածս անուանեն. նոքա յիմարեցեալ մոլար մտօք են. զի որք միմեանց ներհակ և հակառակք են. նոքա աստուածութեան անուն ոչ կրեն։*

*Զեգիպտացւոց Աստուածսն և զբաբիլօնին. զհելլենացւոցն և զորս 'ի կարգի նոցին. որք մարդոյ կերպարան շինեալ պաշտեցին. և որք իգականի Աստուած ասացին։*

*Թողումք ասել և զայլսն որք չեն յիշելոյ. զգազանս և զանասունս յօդոյ և ի ջրոյ. զաքիս զմուկն և զկատու և զայլսն 'ի գետնոյ. զծառ զտունկ և զբոյս՝ զսոխ ընդ սխտորոյ։*

*Արդ՝ այս է զոր երկրի Աստուած ասացին. և զճշմարիտն Աստուած մոռացեալ թողին. զարարածս Արարչին փոխան պաշտեցին. զարշելեաց և ամօթոյ երկրպագեցին։*

*Այլ որ ամենայնի Աստուածն է՝ մի է. անձամբ է երրակի՝ անուամբ երեք է. բնութեամբ և իշխանութեամբ զօրութեամբ մի է. կեանք և կենդանարար և նորոգօղ է։*

*Հայր է ծնօղ բանին՝ հոգւն բղխումն է. անեղ ան-*



*ժամանակ և անսահման է. անտես անքննելի և անզննին է. անչափ և անքանակ՝ անժամանակ է։*

*Անգիտելի է հայր՝ որդին զնա գիտէ. գիտէ որդին զհայր՝ հոգին քննիչ է. ստեղծօղ կեցուցանող պարգևատու է. գթած և մարդասէր նախախնամող է։*

*Կամեցօղ է բարեաց՝ կամակատար է. լոյս է միշտ համասփիւռ և լուսատու է. աղբիւր յորդախաղաց արբուցանօղ է. և գետ լայնատարած ծով խորագոյն է։*

*Էր միշտ յաւիտենից՝ է և եղիցի. էիցս է անպարփակ և անիմանալի. էացուցիչ գոյիցս երկնի և երկրի. իմանալեաց և զգալեաց ծովու ցամաքի։*

*Նախատիպ անօրակ և կերպ անձև է. էութիւն անսկիզբն և գոյ անեղը է. իսկութիւն է յաւէտ կեանք անվախճան է. անուր՝ աներբ՝ անբաւ՝ անհաս էակ է։*

*Ծնունդ է 'ի ծոց հօր անբաժանելի. բղխումն սուրբ հոգւոյն անսպառելի. են հարթ և հաւասար անձինքն երեակի. ոչ մեծ ընդ կրտսերի՝ կամ նախ և վերջի։*

*Այլ էր որդի ընդ հօր նախ քան զյաւիտեան. որ և բոլոր էակքս նովաւ արարան. հոգին արարչակից որդւոյ հօր նման. յաւիտենից յաւէտ մշտնջենական։*

*Իսկ մինն յերից անձանց՝ յերկիր խոնարհեալ. 'ի հայրական ծոցոյ նա ոչ բաժանեալ. ծնեալ 'ի կոյս մօրէ Աստուած մարդացեալ. որ նախ քան զյաւիտեանս անմայր էր ծնեալ։*

*Մարմնով յերկրի շրջեալ երեսուն տարի. եկեալ 'ի յորդանան կամաւ մկրտի. 'ի հօրէ վկայեալ՝ հոգին իջանի. ապա հրաշիւք յայտնեալ ի մէջ աշխարհի։*

*Ընտրեաց իւր աշակերտս երկոտասան թիւ. նոքօք որսաց զմարդիկ կենաց բանիւ. զոր նախանձեալ ընդ նա չարին խորհրդիւ. ի խաչ բևեռեցին թիւրեալքն սրտիւ։*

*Եղաւ ի գերեզման կամաւորական. յարեաւ ի մեռելոց Աստուածն անվախճան. ելեալ մարմնով յերկինս յա-*

թոռ հայրական. առաքեաց զսուրբ հոգին՝ դասուն մետասան։

Իսկ առաքեալքն սուրբ՝ յերկիր սփռեցան. և մոլորեալքն ի կուռս առ Աստուած դարձան. չարագործաց պատճառ եղեւ է հուրն անվախճան. բարեգործաց հանգիստն յաւիտենական։

Արդ ճշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոս է այն որ տէր կենդանեաց և մեռելոց է. իսկ որ արարածոց երկրպագանէ. նմա անլոյս խաւարն պատրաստեալ է։

*Ծանօթ լինիլն փիլիսոփայից. եւ Նաքովը եղեւ քրիստոնեայ՝ եւ գնացեւ յանապատն՝ լինի կրօնաւոր։* (ԺԸ)

Յորժամ Նաքովը ասաց զայս հաւատոյ բան. փիլիսոփայքն ամէնք զամօթի հարան. այլ ոչ կարացին տալ նմա պատասխան. առեալ զՆաքովը տարաւ Յովասափ ի տան։

Զգիրս կախարդութեան իւր Նաքովը այրեալ. գնացեալ ի յանապատ և անդ մկրտեալ. յուսով և հաւատով ի տէր հաստատեալ. և մինչ ի յօր մահուն անդ կրօնաւորեալ։

Դարձեալ՝ ի տրտմութեան Աբենէր լինէր. և միշտ և հանապազ ի դառնութեան էր. քանզի որ ի կախարդն ապաւինեալ էր. ետես զնա քրիստոնեայ՝ որդւոյն իւր ընկեր։

Յայնժամ ի միասին զիշխանսն կոչէ. և դառնացեալ սրտիւ խրատ հարցանէ. թէ զինչ ճարակ որդւոյն իւրոյ գտանէ. որ ի կռապաշտութիւն զնա արկանէ։

Կախարդ մի այլ ցուցին անունն Թեւդաս. որ ի սատանայ է առեալ էր շատ դաս. և էր դիւաց զնդին մեծ ծառայ և խաս. և զմարմինն արարեալ էր նոցա դարպաս։

Որ միշտ և հանապազ ի յանապատ կայր. դիւացն դասուց եղեալ էր դադար. նա մերկ և գլխաբաց և բոկոտամբ կայր. և անդադար ի չար զմարդիկ որսայր։

Ուղարկէ և կոչէ թագաւորն զնա. զբոլոր քաղաքն առեալ դէմ նորա երթայ. փառօք մեծարանօք առեալ և դառնայ. թերևս Յովասափու ճարակ գտցէ նա։



Ասաց Թեւդաս թէ ես հնար գտանեմ. և զՅովասափ ի կուռսն դարձուցանեմ. յաղանդոյն Բարլաամու զնա որոշեմ. և զկամս թագաւորիդ փութով կատարեմ։

Արդ հան նախ զմանկունսն ի տանէ նորա. և փոխանակ մանկանց տար աղջկունս առ նա. և ես զցանկութեան զեն յղեմ ի նա. որ յախտ պոռնկութեան շարժեսցէ զնա։

Յայնժամ Աստուածն Յիսուս յոր հաւատաց նա. բարկութեամբ զայրանայ ի գործս նորա. քանզի է մեղասէրն ատելի նորա. և Յովասափ անդրէն ի կուռսն դառնայ։

Հրաման ետ թագաւորն՝ զմանկունսն հանեն. և կոյս աղջկունս առ նա բերեալ կացուցին. իսկ Յովասափ լցեալ շնորհօք Յիսուսին. ոչ ինչ կարաց յաղթել զնա թշնամին։

Քանզի աղօթելով զԱստուած աղաչէր. զդեն պոռնկութեան ի բաց հալածէր. քան զգեղեցիկն Յովսէփ նա ողջախոհ էր. որպէս ի մայր և քոյր յաղջկունսն հայէր։

Յայնժամ Թեւդաս կախարդն առ Յովասափ գայ. և չարաչար բանիւ խրատէ զնա. իսկ նա ասէ չար ծեր զբերանդ քո կարկեա. սաստէ ի քեզ Յիսուս՝ Աստուածն իմ արքայ։

Սկսաւ սուրբն Յովասափ զնա խրատել. զօրէնս Աստուածային՝ Թեւդասոյ պատմել. ի յաղամայ հետէ նմա քարոզել. զտնօրէնութիւն բանին Աստուծոյ ճառել։

Հոգւոյն սրբոյ շնորհքն ի նա ծագեցաւ. զմոլորութիւն դիւաց փութով ուրացաւ. քարոզութիւն նորա յոյժ հաւանեցաւ. և զայլն նոյնժամայն զառն երևեցաւ։

Գնացեալ առ թագաւորն՝ ասաց թէ արքայ. յորդին քո՝ ճշմարիտ շնորհաց հոգի կայ. արդ ես բանիւ նորա եղէ քրիստոնեայ. զկուռսն և զդիւաց զունդն մոռացայ։

Զկախարդութեան գրեանս զամէնն այրեաց նա. գնաց մկրտեցաւ նման Նաքովրայ. եղև սուրբ ճգնաւոր՝ ընտիր քրիստոնեայ. Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ ծառայ։

*Վասն Բաժանելոյ Աբեներայ թագաւորին զերկիրն իւր ընդ Յովասափու որդւոյ իւրոյ եւ նորա արարեալ զամենեսեան քրիստոնեայ։* (ԺԹ)

Իսկ Աբենէր չգիտէր թէ զինչ առնիցէր. զի զորդին ի կամաց իւր հանել չկարէր. վարել յօտար աշխարհ սիրտն չհանդուրժէր. ըսպանանել զնա անհնարին էր։

Ապա մեծամեծօք խորհուրդ արարեալ. զերկիրն իւր զամենայն յերկուս բաժանեալ. զմի մասն իւր որդոյն կամաւն իւր տուեալ. և Յովասափ գնացեալ անդ թագաւորեալ։

Գտեալ եպիսկոպոս մի նա փախուցեալ. որ յահէ հօրն իւրոյ էր նա թագուցեալ. բերեալ զնա Յովասափ առաջնորդ կարգեալ. քաղաքին և երկրին հովիւ կայուցեալ։

Եկեղեցիս բազումս անդէն շինեցին. ըզկուռսն և զմեհեանսըն կործանեցին. ժամատեղաց սահմանս և կանոնս եդին. զօրէնս քրիստոնէից անդ հաստատեցին։

Օրըստօրէ զբազումս անդ մկրտելով. և դառնային ի տէր պայծառ հաւատով. զառաջին պղծութիւնսն մերկանալով. և նոր բարս վարուց յանձին բերելով։

Ամենայնի պարգևս Յովասափ շնորհէր. հանդերձս պատուականս նա ագուցանէր. զամենեսեանսն ի նոյն հաւատս յորդորէր. ոսկի արծաթ և այլ ինչս պարգևէր։

Քաղաքական օրէնս և սահմանս եդեալ. զգողս և զաւակս յերկրէն փախուցեալ. շնացօղս և զմարդասպանս պայշխարհէն զատեալ. խրատով սուրբ օրինաց զնոսա պարըսպեալ։

'Ի յայմենայն տեղիս խաչն կանգնեցաւ. անունն Քրիստոսի փառաւորեցաւ. կարողութիւն դիւացն կործանեցաւ. և լոյսըն հաւատոյ անդ հաստատեցաւ։

Ով որ զՅովասափու ձայնն լըսէին. 'ի յօտար աշխարհէ առ նա երթային. 'ի տեսութիւն նորա ուրախանային. յիմաստութիւն շնորհացն զարմանային։

Իսկ արքայն Աբենէր աչօք տեսանէր. որ ժողովուրդ



երկրին իւրոյ պակասէր. և փառք իշխանութեան որդւոյն յաւելէր. և բազմութիւն զօրաց առ նա ժողովէր.

Յայնժամ ծագեաց 'ի նա շընորհքն երկնային. փարատեաց զխաւար մըտաց և սրտին. իմացաւ զի կուռքն այնք ընդունայք էին. և հաւատաց փառաց որդւոյ Միածնին։

*Գրէ թուղթ Աբէնէր առ արքայն Յովասափ՝ եւ նա գնաց առ նա։* (Ի)

Յաբենէր արքայէ ողջոյն իմ որդոյն. սիրասնունդ զաւակ՝ իմ հոգւոյս հոյւոյն. կարօտ եմ և փափագ տեսոյդ քաղցըրագոյն. Յովասափ թագաւոր ծառայ բարձրելոյն։

Իմացայ ճշմարիտ 'ի բոլոր սրտէ. յոր դու հաւատացեր՝ ստոյգ Աստուած է. և կուռքըն մեր ոչինչ՝ դատարկ և ունենայն է. և պաշտօնեայք նոցա մտօք խաւար է։

Արդ զառաջին չարիսն որ ես գործեցի. և զքրիստոնեայս բազումս որ չարչարեցի. հոգիս իմ զարհուրի յահէն Քրիստոսի. վախեմ թէ զանպիտանս այլ ոչ ընդունի։

Արդ թէ գիտես որ նա ինձ կամեցօղ է. և զառաջին խաւար գործսն իմ ոչ յիշէ. յայնժամ յօժար կամօք սիրտըս իմ փափագի. և զՅիսուսն ճշմարիտ Աստուած դաւանի։

Կարօտ եմ և ցանկամ զքեզ տեսանել. զորդիդ իմ զանդրանիկ գրկով համբուրել. զօրէնս քրիստոնէից 'ի քէն ուսանել. և զճշմարիտ Աստուածն քո ճանաչել։

Զթուղթն առ Յովասափ՝ տարան և տուին. կարդաց և փառըս եա՛ անմահ արքային. հանապազ կամի զդարձ մեղաւորին. և ժառանգորդ առնէ փառացն վերին։

Ելեալ ուրախութեամբ առ հայրն գնաց. զորովագութ սիրով զարքայն ողջունեաց. լցեալ ուրախութեամբ 'ի հոգւոյն շնորհաց. և Յովասափ սկսաւ խօսիլ յօրինաց։

Իսկ Աբենէր արքային՝ բարձրաձայն գոչէ. թէ ճշմա-

ըստ Աստուած՝ քրիստոնէից է. Յիսուս Քրիստոս Փրկիչ ծնեալն ի կուսէ. երկրպագեմ Նմա ի բոլոր սրտէ։

Քաղաքն հաւասար՝ զնոյն ասացին. Քրիստոս Աստուծոյ ծունր կրկնեցին. զերրորդութիւն սուրբ խոստովանեցին. զկուռս և զմեհեանսն կործանեցին։

Զեպիսկոպոս մի՝ Յովասափ բերեալ. յորմէ Աբենէր եղև մկրտեալ. հօրն կնքահայր՝ ինքն որդին եղեալ. նոյնպէս զայս խորհուրդ՝ և այլքն ընկալեալ։

Քաղաքն ամենայն անդ մկրտեցան. սպիտակազգեստ լեալ նորոգեցան. ի բարութիւն Տեառն սիրով փութացան. և զառաջին չարիսն իւրեանց մոռացան։

Այլ Աբենէր արքայն զՅովասափ կոչեաց. զերկիրն իւր զամենայն ի յորդին յանձնեաց. ամիս մի առանձին նա յապաշխարեաց. պահօք և աղօթիւք արտասուօք եկաց։

*Վասն մահուան Աբենէրայ արքայի՝ եւ թագաւորելոյ որդւոյն իւրոյ Յովասափու։* (ԻԱ)

Աբենէրայ մահու օրն հասանէր. կոչեալ զՅովասափ և անդարձ առնէր. զառաջին չարութիւն գործոյն իւր յիշէր. և ի դատաստանի աւուրն սարսէր։

Իսկ Յովասափ որդին մխիթարէր զնա. ասէ մի երկնչիր հայր իմ և արքայ. զի ով որ որ կամաւ առ Աստուած դառնայ. զանցեալ գործս մեղաց անտես առնէ նա։

Քանզի հայր բարեգութ և ողորմած է. ստեղծօղ նախախնամիչ և մարդասէր է. մեղաւորաց դարձի միշտ կաեցօղ է. անոխակալ է նա և անյիշաչար է։

Աւետարանն իւր սուրբ՝ Քրիստոս զայս ասէ. թէ մի մարդ մեղաւոր որ ապաշխարէ. հրեշտակաց ի յերկինս ուրախութիւն է զի պատկեր Աստուծոյ երկնաւորի է։

Քանզի զմաքսաւորին զմեղսն ջնջեաց. զպոռնիկն արդարացոյց և ոչ անարգեաց. քանանուհւոյն լուաւ զդուստրն մժշկեաց. աւազակին զդուռն դրախտին եբաց։



Արդ մի յուսահատիր հայր իմ թագաւոր. այլ երթ առ Արարիչն քո երկնաւոր. և նա անտես չառնէ յատեանն ահաւոր. այլ պսակաց առնէ զքեզ արժանաւոր։

Յայնժամ հաղորդեցաւ մարմնոյ կենսատուին. և աւանդեաց զհոգին ի ձեռն Արարչին. ժողովեալ ի վերայ և կոծ արարին առեալ մեծաւ պատուով տարեալ թաղեցին։

Իսկ Յովասափ արքայն անդէն դադարեալ. և եօթն օր ի վերայ տապանին կացեալ. ի տիւ և ի գիշեր աղօթս արարեալ. արտասուօք զպաղատանս առ տէր մատուցեալ։

Պատարագս մատուցին զաւուրս քառասուն. բազում բաշխս արարին արքայի հոգւոյն. աղքատաց կերակուր և հանդերձս ետուն. զծառայսն ազատեցին կամօքն Աստուծոյն։

*Վասն թողլոյն Յովասափու զթագաւորութիւն ի ծառայն իւր Բարաքիասայ, եւ ինքն գնացեալ յանապատն առ Բարաղամ.* (ԻԲ)

Իսկ Յովասափ արքայն խորհուրդ արարեալ. զիշխանս և զմեծամեծս ի մի ժողովեալ. բազում բանս օրինաց նոցա ասացեալ. և զփառս այսմ աշխարհիս կամաւ անարգեալ։

Ասաց թէ Աբենէր հայրն իմ փոխեցաւ. և փառք և մեծութիւն իւր ոչնչացաւ. զեղեցկութիւն պատուոյն իւր ի հող դարձաւ. ահեղ իշխանութիւնն ի միջոյ բարձաւ։

Վաղիւն այն օրինակ՝ ինձ կամի լինել. և այս փառքս և պատիւս յինէն խափանել. արդ ես կամաւ իմով պարտիմ զայս ձգել. ի Բարաքիաս ծառայն իմ յանձնել։

Կոչեաց զԲարաքիաս առ ինքն և ասէ. թէ զինչ որ յիս տեսեր՝ զնոյն կատարէ. սա այն Բարաքիաս բարեաց պատճառն է. որ նախ Յովասափու զԲարաղամ ցուցեալ է։

Առեալ զթագն և եդ ի գլուխ նորա. զիշխանութիւն յանձնեաց իւր կամաւն ի նա. Բարաքիաս նմա պատասխանի տայ. թէ էր բռնադատես զիս այսօր արքայ։

Քանզի դու որ որդի թագաւորի ես. և այժմ իշխանութեան արժանաւոր ես. կամաւ դու ի դմանէ զփախուստն խնդրես. զիմրդ զիս գծառայս քո յայս հրաւիրես։

Յովասափ թագաւորն զնա խրատէ. զԲարաքիաս կամացն իւր հաւան առնէ. ի յարնելս դարձեալ՝ և աղօթս առնէ. զթագն ի գլուխն եդեալ՝ արքայ հաստատէ։

Յայնժամ քաղաքն ամէն ի մի ժողովեալ. ի յողբ և ի հառաչ բարձրաձայն գոչեալ. ի ճիչ և յաղաղակ յարտասուս հարեալ. և վասն Յովասափու մեծ կոծ արարեալ։

Զրկիլն ի յարքայէն իւրեանց ողբային.լալականաց բարբառ անդ արձակէին. թող խաւարի առեն արև և լուսին. ի բաժանիլ ի մէնջ մերոյ արքային։

Զի Յովասափ արքայն՝ աչաց մեր լոյս էր. աղբիւր յորդախաղաց դրախտին կենաց էր. այգի քաղցրաճաշակ՝ ծառ անթառամ էր. անուշահոտ վարուք՝ վարդ մանուշակ էր։

Պարիսպ ամուր էր սա յերկրիս Հնդկաստան. պատճառ բարեաց եղև քրիստոնէութեան. կարգաց եկեղեցւոյ և դաւանութեան. արդար ի դատաստան՝ վանիչ չարութեան։

Այսօր արդարութիւն մեր խափանեցաւ. և ջահն եկեղեցւոյ մեր փութով շիջաւ. մեր անթառամ ծաղիկն թարշամեցաւ. փլաւ այգւոյ պարիսպն և խոպան դարձաւ։

Այսօր մեր թագաւորն ի մէնջ բաժանի. և զմեզ անտէր թողու ի վերայ երկրի. հովիւն հոգևոր բանաւոր հօտի. այսօր ի յօչխարաց իւրոց հեռասցի։

Արդ զայս և որ սոցին նման ասէին. ի յողբ և յարտասուս զարքայն շարժէին. յայնժամ նա համբուրեալ սիրով զնոսին. ելեալ գնայր՝ ինքեանք զհետ երթային։

Վասն գնալոյն Յովասափու ի յանապատ ԻԴ)

Ելեալ Յովասափու յերկրէն հեռացաւ. և լալով ժողովուրդն յիւրմէն յետ դարձաւ. գնացեալ նա աղքատի մի հանդիպեցաւ. եմուտ ի տունն նորա և անդ օթեցաւ։



Առաւօտուն ելեալ զհանդերձըն հանէր. զբեհեզն և զծիրանին՝ աղքատին շնորհէր. և ինքն զմազեղէն քուրձն իւր ագանէր. զոր ի վարդապետէն իւրմէ առեալ էր։

Յերկիրն Սենաարայ գնացեալ հասանի. ամիսս երկու՝ ոտիւք քայլեալ աշխատի. յանկարծ յանապատին ծեր մի հանդիպի. և նա է հարց զտեղին սրբոյն Բարաղամի։

Իսկ ծերըն պատուականն նմա ցուցանէ. Յովասափ փութով անդր ժամանէ. տեսեալ ծերըն Բարաղամ զնա ողջունէ. զբարեաց պատճառն յԱստուած նա փառաւորէ։

Յայնժամ էհարց զնա զամէնն կարգաւ. թէ որպէս ի հօրէն իւրմէ նա զերծաւ. կամ զիմրդ զմեծութիւն իւր նա ուրացաւ. և ի փառաց իւրոց կամաւ հեռացաւ։

Ասաց թէ քրիստոնեայ զհայրն իմ արարի. և զաշխարըն ամենայն յԱստուած դարձուցի. լուեալ ծերըն Բարաղամ զբանն Յովասափի. և օրհնեաց զԱրարիչն երկնի և երկրի։

Յայնժամ ելեալ երկոքեանն աղօթեցին. ճաշու ժամու զխորհուրդըն կատարեցին. գոհացան զԱստուծոյ հոգւով ցնծացին. և տեսութեամբ միմեանց ուրախանային։

Կերակուր պատրաստեաց Բարաղամ և եբեր. ասաց ո՛րքայ որդի հրամայեա՛ և կեր. զի էր բանջար արմատ եղջիւր զոր եբեր. և աղ և հաց և ա՛յլ միրգ և ծառոց բեր։

Կերեալ ուրախութեամբ զԱստուած օրհնեցին. յարեան զխաղաղական զաղօթսն ասացին. սակաւ մի ննջելով և հանգիստ առին. յետոյ զգիշերային աղօթսն արարին։

Դարձեալ Յովասափու Բարաղամ զայս ասէ. թէ իմ օրըս մահու եկեալ հասեալ է. արդ դու ձեռամբ քոյ իմ զմարմինս իմ թաղէ. և օրհնութիւն Փրկչին ի քեզ մնասցէ։

Կանգնեալ մատոյց զխորհուրդ սուրբ պատարագին. հաղորդեցաւ և ետ զայն Յովասափին. անկեալ և աւանդեաց առ Աստուած զհոգին. և թաղեցաւ ձեռամբ իւր աշակերտին։

Հարիւր և ութ տարի Բարաղամ ապրեցաւ. եօթանասուն և հինգ յանապատ կեցաւ. շնորհօքն Քրիստոսի յերկրի ճըգնեցաւ. անպատում պարգևաց՝ նա արժանացաւ։

Վասն տեսլեանն Յովասափու եւ մահուան նորա։ ԻԹ)

Յորժամ թաղեաց ըզնա որդի արքային. ննջեալ տեսիլս ետես ի մէջ գիշերին. զի արք լուսապայծառք զԲարաղամ տանէին. և ի խորանս երկնից հանգուցանէին։ Այլ և երկուս աթոռս ոսկիս տեսանէ. երկու պսակ լուսոյ՝ զոր մարդ տեսեալ չէ. եհարց թէ այս բարիքս ո՞ւմ պատրաստեալ է. ասեն թէ մինն քեզ՝ մինն հօր քո է։

Իսկ Յովասափ ասէր զայս տրտնջելով. թէ ես բազում ամօք յերկրի ճըգնելով. և հայր իմ, մի ամիս ապաշխարելով. զիա՞րդ եղէ նմա հաւասարելով։

Բարաղամ ի յերազին զնա խրրատէ. զՅովասափու խորհուրդն յանդիմանէ. զառակաց մշակին օրինակ բերէ. յետնոցն և առաջնոց մին դահեկան է։

Այլ Յովասափ կացեալ ի յանապատին. երեսուն և եօթ ամ ճըգամբ մեծագին. և մինչ նթող զփառըս իւր հայրենին. քսան և հինգ ամաց էր աւուրք նորին։

Վաթսուն երկու ամաց՝ հասանէ վախճան. Յովասափու մեծի ճգնաւորին այն. այնմ որ նթող ըզփառս անցաւորական. էհաս անանց կենանցն յաւիտենական։

Եկեալ կրօնաւորաց թաղեցին զնա. յետոյ Բարաքիաս արքայն իմանայ. գնացեալ յանապատէն հանեցին ըզնա. տարան և թաղեցին առ հօրըն նորա։

Բազում բժշկութիւն նորօք կատարի. ի փառս ամենազօր հօրն երկնաւորի. և որդւոյն Միածնի Փրկչին Յիսուսի. ամենահրաշ հոգւոյն սրբոյ ճշմարտի։

'Ի թուականիս հայոց՝ որ ութ հարիւրն է. ութսուներեք ի նոյն յարաբարդեալ է. ոտիւք չափեցաւ այս ի Խառաքելէ. վարդապետ կոչեցեալ Բաղիշեցի է։

Վիճակախաղ այբուբէնի վրայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. |
| Զ. | Է. | Ը. | Թ. | Ժ |
| Ի. | Լ. | Խ. | Ծ. | Կ |
| Հ. | Ձ. | Ղ. | Ճ. | Մ. |
| Յ. | Ն | Շ. | Ո. | Չ. |
| Պ. | Ջ. | Ռ | Ս. | Վ. |
| Տ. | Ր | Ց. | Ւ | Փ. |
| | | Ք. | | |

Ա.

Սուրբ երրորդութիւնն փրկէ զքեզ յամենայն փորձութենէ. փարատեսցաւ ցաւ սրտի քո, մեծ ուրախութիւն և շնորհ ի յԱստուծոյ, և դու բարձրանաս մեծ պատուով։ Այլ յորժամ ընծայեցար ի ծնողաց քոց՝ մեծ հիւանդութիւն կրեցեր, և հալածական եղար ի յազգականաց քոց և ի բարեկամաց։

Բայց պատրաստ կացո զանձն քո՝ի գազանաց և յանօրինաց, զի փոթորակ կայ առաջի քո և չարախօսքն քո շատ են. գնա աղօթք արա առ Աստուած, որ փրկիս ի նոցանէ, և ի խորհուրդ քո զինչ էր բռնեալ ես և կամիս՝ այնպէս կատարի վիճակ բարի ելաւ քեզ։

Բ.

Բանն Աստուած անսկիզբն՝ որ ի հօրէ առաքեցաւ. նա է յոյս նեղելոց, որ փրկէ զքեզ յամենայն փորձութենէ. փարատեսցաւ սրտի քո, և կատարեսցաւ վիճակն քո բարին. զինչ բանն որ բռնես՝ Աստուած յաջողէ քեզ և առաջնորդէ։ Արդ արա զխորհուրդ քո. թէ վաճառ ունիս՝ շահիս. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս. թէ հեռաւոր ունիս՝ բարով տեսանես, թէ հիւանդ ունիս՝ շուտով առողջանայ, զոր կորուսեալ ես գտանես. Աբրահամու վիճակն է։



Գ.

Գնա մի ինչ հարցաներ՝ զի բազում նեղութիւն ունիս, և տրտմութիւն կայ առաջի քոյ և վիշտք մահու տրտմեցուցին զքեզ, և եհաս ի վերայ քո նեղութիւն մեծ, չկայր քեզ օգնական և ոչ սիրելի, զի ի հայրենական ժառանգութենէն զրկեցար, և այժմ տարակուսեալ ես վասն կենացդ։

Արդ աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա, որ կործանէ զթշնամին քո, և հանէ զքեզ ի նեղութենէ ի լոյս, և քո սրտի կամքն ի բարին կատարի, ի ջրէ պատրաստ կաց. Յունանու վիճակն է։

Դ.

Դու ով սիրելի վասն այդ բանիդ հարցանես և հոգաս հանապազ. Աստուած փրկէ զքեզ և հանէ յամենայն նեղութենէ զանձն քո, և յանկարծակի ի տեղաց մի բղակիս՝ ուստի ակն ոչ ունիս, և բանայ քեզ Աստուած դուռն բարի։ Ի ճանապարհ երթաս և բարով գաս, և թշնամին քո յամօթ լինի. հեռաւոր ունիս՝ տեսանես. վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. բայց մոռանաս զայն. փոխել կամիս ի տեղւոջէ ի տեղ, սակաւ մի համբերէ և ապա փոխեաց և բարի գտանես, մեծանաս և ուրախ լինիս. յուսա առ Աստուած որ չվնասիս. Դանիելի վիճակն է։

Ե.

Երանի է քեզ ով սիրելի՝ զի Աստուած է քեզ օգնական. բայց դու շատ ես գտել և չեղաւ քեզ հանգստութիւն. և չեղաւ քեզ օգնական, ոչ եղբայր և ոչ սիրելի։ Որպէս զալիս ծովու կուծփաս, և քո կենացդ հանգիստ չես գտաներ. ով սիրելի տուր փառս Աստուծոյ զի ուրա-

խութիւն համնի քեզ յԱստուծոյ և առողջութիւն, թէ փոխես ի տեղայդ բարոյ հանդիպես, և ամենայն դժուարութիւն ի բարին դառնայ. ի յաւագաց պատրաստ կաց, որոգայթ կուցուցանէ ի յընկերտաց և ի մատնողաց պատրաստ կացիր. սուրբ Գրիգորի վիճակն է։

Զ.

Զարմացեալ եմ ո՛վ այր՝ զի երկմտեալ ես և ի թշնամեաց սասանիս, և խորհիս վասն մեծանալոյ, և ոչ խորհիս առնել զաղաչանս Աստուծոյ. աղօթից ծուլ կուկենաս, վասնայնորիկ եկն ի վերայ քո նեղութիւն մեծ, և թշնամին քո զօրացաւ ի վերայ քո։ Գնա աղաչեա Աստուած և ուխտ կատարեա՛ նմա. զի հանցէ զքեզ յամենայն նեղութենէ, և ազատես յորոգայթէ. վաճառ ունիս սիրով շահիս. Մատթէոսի վիճակն է։

Է.

Ո՛վ այր՝ առնուս զոր խորհիս և ուրախ լինիս, և ազատես ի չարէ. գնա զոհացիր զԱստուծոյ. բայց մարդ մի կայ որ մտօք չար կուխորհի քեզ, բայց Աստուած հանէ զքեզ յամենայն նեղութենէ և որոգայթէ, զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ, զինչ ի ձեռքդ բան բռնես՝ յաջողէ քեզ Աստուած զոր ցանկաս՝ տեսանես. զոր կորուսեալ ես՝ գտանես, թէ հիւանդ ունիս՝ առողջանայ, թէ տուն շինես կամ հողագործութիւն առնես բարի գայ և բռլակով կատարի։ Ի կախարդ կանանց պատրաստ կաց. Մովսէսի վիճակն է։

Ը.

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութիւն եկն ի վերայ քո.



և տրտմեցար յազգականաց քոց ՚ն ի բարեկամաց. և ազգըն քո, նենգաւոր եղեն քեզ, և եղև աւերումն տան քո, և շրջեցար դու ի վերայ երկրի։ Այլ զոհացիր զԱստուծոյ, զի գալոց է քեզ ուրախութիւն մեծ. և զով ուզես տեսանես. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս. զինչ բան առնես՝ յաջողէ քեզ Աստուած՝ զուխտն զոր խոստացեր ես Աստուծոյ, կատարէ. թէ վաճառ ունիս՝ շահիս, ապա սրահեշտ կացիր. Սեթայ վիճակն է։

Թ.

Ո՛վ յառաջեցար ի բարին, զոր ունէիր՝ զրկեցար. ո՛չ կայր քեզ օգնական, ոչ եղբայր և ո՛չ սիրելի։ Արդ աղաչեա՛ զԱստուած որ փրկէ զքեզ և հանէ ի նեղութենէ զանձն քո. բայց դու անխսուրդ ես, և աղօթից ծոյլ կուկենաս. վասն այնորիկ եկն ի վերայ քո նեղութիւն, և դու շրջեցար յօտար երկիր՝ բայց ոչ վնասեցար։ Ապա թէ ոչ դառնաս ի կամըս Աստուծոյ. գայ ի վերայ քո նեղութիւն, և լինի յափըշտակումն ընչից քոց և աւերումն տան քո, և ամենայն բան զինչ որ բռնես՝ ո՛չ յաջողի՝ և զով ուզես՝ ո՛չ տեսանես զոր կորուսեալ ես՝ ո՛չ գտանես։ Այլ թէ դառնաս ի կամս Աստուծոյ, նա փակած դուռ մի բացուի քեզ և յաւելու՛ բռգակն քո։ Գնա աղօթք արա առ Աստուած և ուխտ կատարէ, որ այլ չի գործես զչարիս, և ազատիս ի տանջանացդ. սուրբ Գրիգորի վիճակն է։

Ժ.

Զոր ինչ ի ձեռքդ բան բռնես, յաջողէ քեզ Աստուած. և արա՛ զխորհուրդ սիրտ քո։ Աւետիս տուր անձին քո՝ զի ուրախանալ կամիս ի բանդ որ բռնել ես։ Ի ձեռաց քոց, ելանէ ողորմութիւն և բազումք կերիցեն զվաստակս ձեռաց քոց։ Այլ հիւանդացար շատ. որ ի մահ պնացիր, և Աստուած եհան զքեզ ի նեղութենէ և ապրեցոյց։ ՚Ի հեռաւոր տեղաց մի. ուստի ակն ո՛չ ունիս բարի գալոց է քեզ, և տրտմութիւն քո՝ ուրախութիւն փոխարկի, զի դու

բարի ես՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ, և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ։ Բայց ի սիրելեաց բախտ ո՛չ ունիս, վասն այնուքիկ պատրաստ կացիր՝ զի ի զուր լեզու անկանիս և տուգանք տաս։ Գնա՛ աղաչեա՛ զԱստուած, և ուխտ կատարեա՛ նմա, զի ողորմութիւն նորա եկեսցէ ի վերայ քո. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս. և բարւոյ հասանիս։ Սողոմոնի վիճակն է։

Ի.

Ո՛վ այր՝ ապաւինեալ ես ի խորհուրդ քո և մոռանաս զուխտդ Աստուծոյ, զի տրտմութիւն քո՝ ուրախութիւն փոխարկի. ի հեռաւոր տեղաց ձայն աւետեաց լսես, կամ հեռաւոր մարդ տեսանես, և յԱստուծոյ առողջութիւն գտանես, և դարման ոսկերաց քոց դիմադարձ մի լիներ, նա զինչ որ ուզեց յԱստուծոյ տայ քեզ Աստուած։ Եւ փոխիլ ի տեղոջէ ի տեղ՝ բարի լինի քեզ, և յամենայն դժուարութենէ ազատիս. և զինչ խորհուրդ զոր ունիս և բան որ բռնես՝ նա գնա՛ արա՛. շատ շահ և բռզակ առնուս, և վախճան քո ի բարի օր լինի։ Ղազարու վիճակն է։

Լ.

Ո՛վ այր՝ կուտեսանեմ զքեզ և զխորհուրդ քո, որ նըմանիս ալեաց ծովու. նմանիս ճընճղկի որ անկաւ ի ձեռս որ սողաց. նոյնպէս և դու ի ձեռս բռնաւորաց անկանիս։

Գնա՛ աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա, որ փրկէ զքեզ տէր Աստուած, քո յամենայն որոգայթէ և ի նեղութենէ. բանայ քեզ զդուռն բարւոյ, և բռզակաց, այլ զուխտն զոր խոստացեր ես կատարեա։ Ապա թէ ո՛չ դառնաս ի կամս Աստուծոյ, գայ ի վերայ քո նեղութիւն, և լինի յափշտակումն տան քո և ընչից քոց։ Եւ դու հալածական լինիս, և վիշտք մահու տրտմեցուցանեն զքեզ, և յօտար երկիր վտարիս։ Եւ եթէ դառնաս ի կամս Աստուծոյ, նա փակած դուռ մի բացուի քեզ, և զոր ինչ ի ձեռդ բան բռնես՝ յաջողէ քեզ Աստուած։ Այլ պատրաստ կաց



ի ջրոյ և ի գազանաց, և ի վատ գործոց։ Յօնանու վիճակն է։

Խ.

Ո՛վ մարդ. ողորմութիւնն Աստուծոյ լինի, ընդ քեզ զամենայն աւուրս կենաց քոց. բայց ի յօտար աշխարհ վտարեցար. զով ուզես՝ տեսանես, զինչ կամիս առնուս, զոր կորուսեալ ես գտնես, այլ յընկերացդ բախտ ոչ ունիս, այլ ի յԱստուծոյ շատ շնորհ ունիս, և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ։ Բայց վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. իսկ բան և խորհուրդ զոր արեր ես՝ գնա արա՛, շահիս և բարի գտանես, այլ ի քո ազգէն ո՛չ շահիս։ Եւ ի քո վաստակէն բազումք կերիցեն, և պարգևս ի յԱստուծոյ առնուս, յերկան կնկանէ մի փոթորակիս, յիշողաց և ի կախարդաց պատրաստ կացիր։ Սուրբ Մարտիրոսի վիճակն է։

Ծ.

Ո՛վ այր դու՝ նման ես գետոյ, որ երթայ յերկար և ոչ կայ նմա դադարումն։ Դու հալածական եղար և ի հայրենական ժառանգութենէն զրկեցար, և ի ծնողաց քոց ո՛չ խնդացեր, զրաբախտ ես որ ամէն մարդ զրկեալ է զքեզ։

Արդ՝ աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա, որ օգնէ քեզ Աստուած և փրկէ զքեզ յորոգայթէ։ Դու մի տրտմիր, զի բանից դժուարութիւնն ի լոյս ելանէ, և քեզ ձայն աւետեաց գայ և դու ուրախանաս, յանկարծակի բռզակ գայ քեզ՝ ուստի ակն ոչ ունիս։ Սեթայ վիճակն է։

Կ.

Ո՛վ սիրելի՝ կակղացո՛ զսրտիդ քո, և պահեա զկամս Աստուծոյ, և տուր հաց քաղցելոց և ջուր ծարաւեաց։

Ապա թէ ո՛չ՝ դառնաս ի կամս քո. նա գայ ի վերայ քո նեղութիւն մեծ, և յափշտակումն ընչից քոց, և աւերու-

մըն տան քո, և ամենայն բան զոր ինչ բռնես, ո՛չ յաջողի և որում ցանկաս ոչ հասանիս, և զոր կորուսեալ ես, ոչ գտանես։ Ապա թէ դառնաս ի կամս Աստուծոյ և զպատուիրանս նորա պահես, նա ողորմութիւնն Աստուծոյ հասանէ ի վերայ քո, և յաւագաց մեծարիս, և դուռ մի փակած բացուի քեզ, և յաւելու բաղակն քո։ Որպէս արեգակն ի վերայ արարածոց, այնպէս Աստուծոյ բարին հասանէ ի վերայ քո, և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս, աչք աւագաց քաղցրանայ ի դիմացդ, և տարիս բարով գայ քեզ։ Յակոբայ վիճակն է։

Հ.

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ, զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ, և Տէր Փրկեց զքեզ յամենայն որոգայթէ. լինիս ցանկալի ամենեցուն, և ոչ լինի պակասումն ընչից քոց, և տայ քեզ Աստուած փառք և մեծութիւն. բայց պատրաստ կաց ի լեզուէ մի, որ չփոդորակիս. զի հանապազ ընդ քեզ է այն լեզուն։

Գնա աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա, որ ազատիս ի չարէն. զինչ խորհուրդ որ ունիս՝ արա և մի վախեր. զինչ դու ուզես՝ այնպէս կատարի։ Բարսեղի վիճակն է։

Ձ.

Ո՛վ մարդ՝ ձայն ցնծութիւն և ուրախութիւն մատուցանեմ քեզ, զի դու վախել ես և տարակուսեալ, և սասանեցար յազգաց և ի բարեկամաց քոց. և ազգն քո նենգաւոր եղեն քեզ, և շատ իրաց զրկեցար։

Տուն քո հայրենի, դարձաւ յաւեր և դու շրջեցար ի վերայ երկրի և սուգ մահու տրտմեցոյց զքեզ, այլ այժմ փառք տուր Աստուծոյ՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն մեծ. բազմանայ բաղակն քո, ոսկին և արծա-



թըն. զինչ ուզես կատարի։ Այլ պատրաստ կաց ի յանօրինաց և ի պոռնկութենէ որ ի փաթերակ չանկանիս. թէ հեռաւոր ունիս գայ, և այլ զինչ խորհուրդ ունիս կատարի. Մովսէսի վիճակն է։

Դ.

Ո՛վ մարդ՝ պարգևեցաւ արձակումն կապանաց քոց, որպէս մոզքն որ ելին յարևելից և եկեալ առ Քրիստոս գտեն զնա և ուրախ եղեն, նոյնպէս և դու ուրախանաս ի բանս քո և ի խորհուրդդ որ բռնել ես։

Թէ ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս և բարի գտանես։ որպէս Մովսէս յաղթեաց Փարաւոնի և եգիպտացւոցն, նոյնպէս և դու յաղթես թշնամեաց քոց, և զինչ խորհեր ես գնա՛ արա՛, ի բարին առաջնորդէ քեզ Տէր Աստուած։ Մոզուց վիճակն է։

Ճ.

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ քեզ. եղար դու ի մանկութենէ քումմէ հալածական, և պանդխտութիւն կըրեցիր զամենայն աւուրս կենաց քոց, և սասանեցար յազգաց և ի յանօրինաց, և ազգն քո նենգաւոր եղեն քեզ։ Ո՛վ սիրելի մի վախեր՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն և կատարեցաւ վիճակս քո ի բարին. զինչ ուզես ի յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս, այլ ի կանանց դրացեաց պատրաստ կաց զի շատ բանբասանք լսես։ Դանիէլի վիճակն է։

Մ.

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ, արդ ի չարդ յիմարեալ ես և ընկերոջդ չար առնես, և ամենեցուն վնաս խորհիս։ Ընկեա զնենգութիւն ի մտաց քոց, և ընկերոջդ չար մի խորհիր, որ չանկանիս ի մեծ նեղութիւն. և պատահաս գայ ի վերայ քոյ։ Ո՛չ խնդացիր ի ծնողաց և ո՛չ

ի զաւակաց, և ամենայն բան զինչ որ առնես՝ ոչ յաջողի քեզ։ Ապա թէ դառնաս ի կամս Աստուծոյ՝ և ընկերոջդ և ամեն մարդոյ նենգութիւն ոչ առնես, նա ծագէ Աստուած զողորմութիւն իւր ի վերայ քո, և ո՛չ լինի պակասումն ընչից քոց, և մեծաւ պատւով վախճանիս։ Ցաբեթայ վիճակն է։

**Ց.**

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ, զի կատարեցաւ վիճակս քո ի բարին, և դու խորհուրդ ունիս ի սիրտըդ, ո՛չ կարես բռնել և ոչ թողուլ՝ մի վախեր գնա՛ արա, զի խորհուրդ քո ի բարին կատարեցաւ։ Որպէս լուսինն որ զխաւար գիշերն լուսաւորէ՝ այնպէս լուսաւորի խորհուրդ քո որ բռնել ես, և հասանէ քեզ ըռզակ ի յԱստուծոյ, և ուր ցանկաս հասանիս, և յաւազաց բարի գտանես, և աւետեաց ձայն լսես և խնդաս, գնա՛ աղաչեա զԱստուած որ խորտակէ զքո թշնամին։ Սուրբ Գրիգորի վիճակն է։

**Ն.**

Ո՛վ մարդ՝ ահա ի նենգութիւն տեսանեմ զքեզ, զի մեծամեծ փաթթարակ կայ առաջի քո, և ի նեղութիւն անկանիս։ Բազումք խորհին քեզ չարիք և դու ոչ իմանաս զկորուստ անձին քո, և զի ոչ առնես զկամս Աստուծոյ՝ վասըն այնորիկ եկն ի վերայ քո նեղութիւն. զինչ խորհուրդ ունիս ո՛չ կատարի, թէ ի ճանապարհ երթաս՝ ոչ լինի քեզ բարի։ Այլ թէ դառնաս ի կամս Աստուծոյ և զուխտն զոր խոստացեր ես կատարես. նա փակած դուռ մի բացուի քեզ, և յաւելու ըռզակն քո։

**Շ.**

Ո՛վ մարդ՝ բազում բարիս կուտեսանեմ առաջի քո. առնուս պարգևս ի մեծամեծաց. ուրախանաս և բարւոյ հանդիպիս. խնդաս ի զաւակէ և ի կնոջէ քումմէ, և լինիս



յիշատակ ծնողաց քոց։ Եւ զինչ որ խնդրես ի յԱստուծոյ՝ առնուս. զոր կորուսեալ ես՝ գտանես, թէ հեռաւոր ունիս՝ գայ որ տեսանես, թէ հիւանդ ունիս՝ ողջանայ, և որքան զոր աղէկ լինի քեզ։

**Ո.**

Ո՛վ մարդ՝ պարտ է քեզ յամենայն ժամ գոհանալ զԱստուծոյ. զի թէպէտ տրտմեցար, բայց դարձեալ ուրախանաս և շնորհն Աստուծոյ հասանէ ի վերայ քո։ Այլ պատրաստ կաց ի յանօրինաց և ի գազանաց, զի փոթորակ կայ առաջի քո։ Բայց պարգև և շնորհ ի յԱստուծոյ առնուս, և յորդոց խնդաս, և լինիս ցանկալի ամենեցուն, և ոչ լինի պակասումն ընչից քոց։ Թէ փոխիս ի տեղօջէ իտեղ՝ բարոյ հանդիպիս. ձայն աւետեաց լսես, և հեռաւոր մարդ տեսանես. քո մահն ի բարի օր լինի, և երազն որ տեսեր ես բարի է։ Աբրահամու վիճակն է։

**Չ.**

Ո՛վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց, և առնուս բարի իշխանութիւն, որ թշնամին քո յամօթ լինի. և յօտար երկիր գնաս, և առնուս պարգևս, և յամենայն դժուարութենէ ազատիս, և զով ուզես՝ բարով տեսանես, և ուր ցանկաս՝ հասանիս։ Այլ պատրաստ կաց ի գազանաց և ի բարձր տեղայ, ի կախարդաց և ի ախտերես կնոջէ՝ որ չարբէ, և փոթորակ։ Գնա՛ աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա, որ ազատիս ի չատ չարէ, և բանայ քեզ տէր Աստուած դուռն բարի և ըռզակաց։ Սեթայ վիճակն է։

**Պ.**

Պարզև բարեաց տայէ քեզ Աստուած. զայն հեռացաւ և բարին մօտեցաւ կամօքն Աստուծոյ։ Եւ դու ես իմաստուն որ խրատ տաս ամենեցուն. բայց պահեա՛ զանձըն քո ի չար կամաց, և զոր ինչ գործես և բան որ բռ-

նես՝ ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած. բայց ի սիրելեաց բախտ ոչ ունիս։ յԱստուած ապաւինէ որ կործանէ զքո թշնամին, և հանէ զքեզ յամենայն որոգայթէ և լինիս ցանկալի ամենեցուն, և ոչ լինի պակասումն ընչից քոց և զինչ խորհիս՝ կատարի ի բարին։ Մովսէսի վիճակն է։

Զ.

Ո՛վ մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար. զմտաւ ածես և ո՛չ կարես կալ ի վերայ մէկ խորհրդի. դու մի տրտմիր՝ գալոց է քեզ ուրախութիւն մեծ՝ ուստի ակն ոչ ունիս, զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ։ Փոխանակ տրտմութեան՝ ուրախութիւն լինի քեզ, բարի և շնորհ ի յԱստուծոյ առնուս։ Գնա՛ արա՛ զխորհուրդ քո. թէ վաճառ առնես՝ շահիս, թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս. այլ ի վերայ բախտիդ քննութիւն առնես և հարցանես. Աստուած բանայ քեզ կղուռն բարոյ, և յաւելու բաղակն քո. Մատթէոսի վիճակն է։

Ռ.

Ո՛վ մարդ՝ սատանեցար յազգաց և ի յանօրինաց հասաւ ի վերայ քո տրտմութիւն, և եղև աւերումն տան քո ի բարեկամաց քոց. խորհուրդ քո հանապազ ի կորուստ եղանէ։ Ո՛վ այր՝ մի հոգար վասն այդ բանիդ զի շուտ գայ ի վերայ քո բարին. և տէր Աստուած հանէ զքեզ ի խաւարէ ի լոյս. և քո մուրատին հասանիս։ Այլ պատրաստ կաց ի յընկերացդ, զի բախտ ոչ ունիս. և կայ մարդ մի չարակն՝ որ մտօքն չար կուխորհի քեզ. ի կախարդաց պատրաստ կաց։ Ադամայ վիճակն է։

Ս.

Ո՛վ մարդ՝ վասն կենաց քոց ընդէր հարցանես. զինչ յիմարեալ ես և չար խորհիս, և ամենեցուն վնաս առնես ի տեղւջէ ի տեղ փոխիս՝ և ուրեք ո՛չ հաստատես, զոր



կորուսեալ ես, ո՛չ գտանես։ Ընկեա՛ զնենգութիւն ի մտաց քոց. ընկերոջ և ամեն մարդոյ չար մի խորհիր, թէ չլսես փաթերակիս. զնա աղաչեա՛ զԱստուած որ ազատիս ի շատ չարէ։

Վ.

Ո՛վ սիրելի՝ տո՛ւր փառս Աստուծոյ, զի գալոց է քեզ ուրախութիւն, ուստի ակն ոչ ունիս։ Եւ ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ. և զաւակ մի խնդամիտ տեսանես. և տայ քեզ Աստուած առողջութիւն։ Այլ պատրաստ կաց ի բոլոր երես մարդոյ մի և ի չարակն կնոջէ, որ մտօքն չար կուխորհին քեզ. պատրաստ կաց ի նոցանէ որ չանկանիս ի փորձութիւն, և զինչ բան բռնես՝ ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած. ի հեռաւոր տեղաց ձայն աւետեաց լսես, կամ հեռաւոր մարդ տեսանես. զնա արա զխորհուրդ քո։

Տ.

Ո՛վ մարդ՝ ուրախութիւն մատուցանեմ քեզ, զի դու վախել ես և տարակուսեալ. զրաբախտ ես, զոր կուտաս՝ կռվով կուլթափես. ում բարի կառնես՝ նա քեզ չար կառնեն։

Այլ յաղօթից և աղաչանաց դու մի ղաղարիր, գալոց է քեզ ուրախութիւն, ուստի ակն ոչ ունիս. հեռաւոր ունիս գայ. թէ աղքատ ես՝ հարստանաս, թէ հիւանդ ունիս ողջանայ, թէ երազ ես տեսեր բարի է. Ղուկասու վիճակն է։

Ր.

Ո՛վ մարդ ցնծութիւն և ուրախութիւն տամ քեզ, զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ. և ում ցանկաս հասանիս. բայց թշնամիքն քո շատ են. այլ դու մի վախեր ի նոցանէ՝ զի Աստուած է քեզ օգնական. բայց և ի կնոջէ բախտ ոչ ունիս։ Պատրաստ կաց որ ի գնտան չի մտանես. իրաւի տուգանք տաս, այլ երեք զոր կորաւ քեզ գտանես։ 'Ի ճանապարհ կամիս երթալ և եր-

կու միտ ես. գնա և մի վախիր· ընդոր երթաս՝ բարով գաս, զինչ բան որ բռնես՝ յաջողէ քեզ Աստուած, և զինչ խորհուրդ որ ունիս՝ Աստուած ի բարին կատարէ, և օր քան զօր աղէկ լինիս· Մարկոսի վիճակն է։

Ց.

Ո՛վ մարդ՝ բազում բարիս կուտեսանեմ առաջի քո. առնուս պարգևս ի մեծամեծաց՝ ուրախանաս և բարոյ հանդիպիս։ Խնդաս ի զաւակէ և ի կնոջէ քումէ, և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց. Թէ փոխիս ի տեղացդ՝ ոչ հաստատիս, զի ամենեքեան նենգաւորք են քեզ։ Եւ ի մարդոյ բախտ ոչ ունիս, այլ քո բարին ի յԱստուծոյ է, և տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւն անչափ. և յամենայն դժուարութենէ ազատիս. և երազն որ տեսեր ես՝ ի բարին կատարի։

Ւ.

Ո՛վ մարդ՝ չարն հեռացաւ ի քէն և բարին մօտեցաւ. այլ սասանեցար ի յազգաց և անօրինաց, և ազգն քո նենգաւոր եղեն քեզ։ Պատրաստ կացիր ի թշնամեաց քոց, զի կայ մարդ մի չարակն և կին մի կախարդ՝ որ մտօքն չար կուխորհին քեզ. և ի յընկերացդ փաթերակ կայ առաջի քո. դատաստան ունիս կամ ճանապարհ կամ վաճառ՝ համբերէ. Աբրահամու վիճակն է։

Փ.

Ընգամ մարդոյ մի լինիր սիրելի, որ չի փաթերակիս, և ի ձեռացդ քո իրք է կորել. մի տրտմիր՝ ի քեզ դառնայ։ Զինչ խորհուրդ ունիս կատարէ Աստուած, բայց սակաւ մի համբերէ, զի՞ պիղծ մարդ մի կայ՝ որ մտօքն չար կուխորհի քեզ. Թէ պատրաստ կենաս իւրմէն։ Նաև ազատիս ի չարէն։ Կամէր գալ՝ ի վերայ քո տրտմութիւն, բայց Աստուած խափանեաց, և բազում ուրախութիւն կայ առաջի քո՝ նման ես Աբրահամու, որ Աստուած զինքն սիրեաց և տրտմութենէ ազատեաց. նոյնպէս դու ազատիս յամենայն չարէ, Սահակայ վիճակն է։

Ք.

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ որ մէկ մի կու յաղթէ քեզ, և լեզուով և սրտովն չար կուխորհի քեզ. կամ հոր մի կուփորէ քեզ. այլ ո՛չ կարէ վնաս առնել քեզ։ Գնա՛ ուխտ կատարէ Աստուծոյ՝ որ շատ չարէ փրրկեցար. զի հասեալ էր քեզ նեղութիւն մեծ, այլ Աստուած դարձոյց զչարն ի գլուխն իւր։ Նման ես դու Իսահակայ, որ հայր իւր կամէր զենուլ զնա, այլ Աստուած օգնեաց նմա և փրկեաց զնա. և բազում մեծութեան և փառաց հասաւ. Նոյնպէս և դու ուրախանաս կամօքն Աստուծոյ· սուրբ Յակոբայ վիճակն է։

(*)

Եւ այսոցիկ ամենեցուն դիտողն՝ է Աստուած ճշմարիտ, զի մարդ ոչ է տեսող սրտից և ապագայից, այլ՝ Աստուած՝ ուստի զոր ինչ ասեն և գրեն իմաստասէրք, թէական կարծեօք են։ Վասնորոյ նմա միայնոյ Աստուծոյ դիտողին գաղտնեաց և յայտնողին ծածկութեաց՝ փառք ի յամենայն արարածոց ի յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

## ՎԻՃԱԿԱԽԱՂ
### տասն և երկու կենդանակերպի վերայ

| | | | |
|---|---|---|---|
| ԽՈՅ | ՑՈՒԼ | ԵՐԿԱՒՈՐ | ԽԵՑԳԵՏԻՆ |
| ԱՌԻՒԾ | ԿՈՅՍ | ԿՇԻՌ | ԿԱՐԻՃ |
| ԱՂԵՂՆԱՒՈՐ | ԱՅԾԵՂՋԻՒՐ | ՋՐՀՈՍ | ՁՈՒԿՆ |
| ՀՐԱՏ | ԱՐԵԳԱԿՆ | ԼՈՒՍԱԲԵՐ | ՓԱՅԼԱԾՈՒ |
| ԼՈՒՍԻՆ | ԵՐԵՒԱԿ | ԼՈՒՍՆԹԱԳ | |

* Խոյն.

Ո՜վ մարդ՝ լոյսն ահագին փառաց և շառաւիղն անուագ, ծագեսցի ի վերայ քո, որպէս արեգակն ի վերայ արարածոց՝ նոյնպէս և դու ի բանս քո ուրախանաս։ Այլ ուխտ ես դրեր կատարեա՛, և տէր լցուսցէ զխնդրուածս քո՝ ապա երազ ես տեսեր և զարհուրեր՝ մի վախենար երազն ի բարին եղև։

* Ցուլն.

Ո՛վ մարդ՝ լուսաւորի խորհուրդ սրտիդ. յամենայն ժամ տրտում ես, մի վախեր՝ զի չարն հեռացաւ ի քէն և բարին մօտեցաւ, և զոր խորհել ես՝ շուտով տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն։

* Երկաւորն

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհել ես՝ կատարի Աստուծով,



զի շատ բարութիւն կայ յայդ խորհուրդ, զի դու բարի ես և հարամն քեզ չիպար·առ ժամն տրտում ես և ի ցընորի կաս՝ մի ցնորիր՝ զի շատ բարութիւն կայ առաջի քո, և զինչ խորհել ես՝ ի բարին կատարի Աստուծով։

* ԽԵՑԳԵՏԻՆՆ

Ո՛վ մարդ՝ զոր խորհել ես ի սիրտդ՝ փախիր ի նմանէ որ չի փաթերակիս, զի քո բանդ ի վերայ չի գար, պատրաստ կացիր ի չար կամաց, զի ընդ քեզ ուտեն և ըմպեն և քեզ չար կուխորհին։

* ԱՌԻՒԾՆ

Ո՛վ մարդ՝ տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն, ցանկութիւն սրտի քո կատարի, և ի մօտ աւուրս՝ ձայն աւետեաց լսես և ուրախանաս. բայց ի կուռոյ պատրաստ կացիր. և զոր ուզես՝ տեսանես կամօքն Աստուծոյ։

* ԿՈՅՍՆ

Ո՛վ մարդ՝ զլոյսն անսպառ ծագեսցէ Աստուած ի վերայ քո, և ողորմութեամբն իւր յաջողեսցէ քեզ զոր դու կամիս, այլ երազ ես տեսել և զարհուրեր, մի վախիր՝ զի թէպէտ պատերազմ ահագին է, բայց նշան բարւոյ է. ըղակ գալոց է քեզ՝ ուստի ոչ ունիս, և այլ զինչ խորհել ես՝ կատարի. թէ հիւանդ ունիս ողջանայ, և պատուհասն ի քէն հեռանայ կամաւն Աստուծոյ. այս աւուրքս որ ի վերայ քո գալոց է՝ լաւ է քան զառաջինսն։

* ԿՇԻՌՆ

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհեցար մի վախիր, այնպէս ուրախանաս, որպէս պիտոյ է քեզ, բայց զխորհուրդ ամեն մարդոյ մի ասեր, զի քո վիճակն ի կշիռն է, և ամէն բան քեզ յաջող է. յիշողաց պատրաստ կացիր և յամենայն ժամ աղօթք արա, զի ամեն չար իքէն հեռանայ և ի հոգոց ազատես. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս և եթէ վաճառ ունիս՝ բարով շահիս։

* ԿԱՐԻՃՆ

Ո՛վ մարդ՝ գիտացիր որ կարճիթիւնով կայ մի հար-

կանել զքեզ մարդ մի. պատրաստ կացիր ի նմանէ և յայդ խորհրդոյդ հեռացիր՝ որ պահէ զքեզ Աստուած, թէ չէ յետոյ ապաշաւես, և թէ համբերես սակաւիկ մի, զինչ որ կամք ունիս կատարի։

* ԱՂԵՂՆԱՒՈՐՆ

Ո՛վ մարդ՝ ժամանակս ըղորդեցաւ քեզ, և քո սրտին խորհուրդն ի բարին կատարեցաւ. արա զինչ որ կամիս և խնդաս ի բանս քո, և տայ քեզ Աստուած զխնդրուածս քո, մի արտորար սակաւ մի համբերէ, և ուստի ակն ոչ ունիս՝ ուրախանաս. թէ տուն շինես՝ յաջողէ քեզ Աստուած, և ի նեղութենէ ազատիս, թէ հեռաւոր ունիս՝ տեսանես, բայց ի լեզուէդ պատրաստ կացիր։

* ԱՅԾԵՂՋԻՒՐՆ

Ո՛վ մարդ՝ յիշեա զԱստուած ի բանս քո և նա հանէ զքեզ ի տրտմութենէ, զի տրտմութիւն հասանէ քեզ ի սիրելեաց քոց՝ կասես երբ ճար լինի ինձ կամ յաջողութիւն, և կու ցուցանէ թէ հիւանդանամ՝ բայց շուտով ողջանաս. թէ հեռաւոր ունիս գայ, և կատարի խնդիրքդ ի բարին։

* ՋՐՀՈՍՆ

Ո՛վ մարդ՝ բարութիւն շատ ունէիր և յամենեն կըրկեցար. պանդխտեցար և չար դիպեցաւ քեզ, կռիւ սիրելեաց հետ քեզ եղեն և զէտ նաւ ի վերայ ծովուն երերման կաս, և կամիս քո կենացդ հանգիստ գտանել՝ և ճար չես գտանէր. ո՛վ մարդ՝ մի տրտմիր, զի տրտմութիւն քո յուրախութիւն փոխի, և զոր խորհիս՝ կատարի կամաւն Աստուծոյ։

* Ձ Ո Ւ Կ Ն

Ո՛վ մարդ՝ հեռաւոր տեսանուս՝ կամ ձայն աւետեաց լսես և խնդաս, զի դժարն քո անցաւ և բարին մօտեցաւ, այլ թէ խոստումն ունիս կատարէ, և յիշոցայ պատրաստ կացիր, և որպէս կապեալքն որ արձակեն՝ և փակեալ դուռն որ բացուի, այնպէս բանալոց է քեզ Աստուած զդուռն ողորմութեան։



* ՀՐԱՏՆ

Ո՛վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախեաւ ի ցըրտոյն և եմուտ ի յայրն, և ոչխարաց հոգս ոչ տարաւ. երեկ քայլն և արար զէշ. նոյնպէս և դու ի բարւոյն հեռանաս և երթաս զհետ չար խորհրդոյն. պատրաստ կաց ի նմանէ և ի նենգաւոր մարդոյ և յայդ խորհրդոյդ հեռացիր, զի չար խօսք կան հետ քեզ, այլ բանդ որ մտիդ է՝ քեզ չար է, ահա ասացի քեզ զամենայն։

* ԱՐԵԳԱԿՆ

Ո՛վ մարդ՝ որպէս արեգակն որ լուսաւորէ զարարածս, այնպէս լուսաւորի խորհուրդն քո, զոր կամիս՝ կատարելոց է քեզ Աստուած զբարին. բայց ի թուլս բոլորեխս մարդոյ մի պատրաստ կացիր, զի սրտովն նենգէ զքեզ, և լեզուովն քաղցր խօսի ընդ քեզ. բայց դու ի բանի մի վրայ հոգս ունիս՝ և հետ մտիդ քննութիւն կաս. մի վախիր՝ շուտով լուսաւորի խորհուրդ սրտի քո։

* ԼՈՒՍԱԲԵՐՆ

Ո՛վ մարդ՝ ի հետ չար մարդոյ ի շուրջ մի գար. ապա թէ ոչ լսես փաթերակիս ինմանէ, և ի քո լեզուէդ պատրաստ կացիր, և յամեն մարդոյ քաղցր խօսք մի խաբիր, զի կամին կորուսանել զքեզ սակաւ մի համբերէ, թէ չէ յետոյ ապաշաւես. շատ բարութիւն կայ առաջի քո, կորուստն գտանի, և զինչ որ առնես յաջողէ քեզ Աստուած։

* ՓԱՅԼԱԾՈՒՆ

Ո՛վ մարդ՝ ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսես և խնդիր քո կատարի, և ուխտն զոր դրել ես կատարէ Աստուած. չարն հեռանայ ի քէն և բարին մօտենայ քեզ. զինչ բան որ ունիս՝ արա համարձակ, զի քո կամքն լինի և ուրախանաս Աստուծով։

* ԼՈՒՍԻՆՆ

Ո՛վ մարդ՝ ցօղ ողորմութիւնն Աստուծոյ անպակաս լիցի ի քէն, և տէր Աստուած հաստատեսցէ զսիրտ քո,

զոր ինչ խորհել ես՝ արա և մի վախեր, զի շատ բարութիւն կայ առաջի քո, և հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսես ի մօտ աւուրս և ուրախանաս, և զինչ սրտովդ ուզես՝ աչօքդ տեսանես և խնդաս։

* ԵՐԵՒԱԿՆ

Ո՛վ մարդ՝ ընդէր անիրաւ ջանաս և ի զուր աշխատիս զի դժուարին է բանդ և անհաստատ գործդ, զի խորհուրդդ այդ որ ի սրտիդ է ոչ է պատշաճ ժամանակիս, փոխանակ բարւոյ՝ չար հանդիպի քեզ, և եթէ չլսես խրատու՝ փաթերակիս, ժամանակ մի համբեր տուր սրտիդ, և զյոյսդ առ Աստուած կալ հաստատուն և մի վախիր, զի թշնամին քո զլորի՝ և դու կանգնիս կամաւն Աստուծոյ։

* ԼՈՒՍՆԹԱԳՆ

Ո՛վ մարդ՝ վիճակս ի բարին ելաւ քեզ. այս Ղազարու վիճակն է, որ երեքօրեայ մեռեալն յարեաւ։ Շատ աւուրք էր որ քո վիճակն ի պրծէն ելած էր, և դու ի տրտմութեան կաս՝ զէրդ նաւն երերալով ի վերայ ծովուն, մի վախեր շուտով ելանես ի նեղութենէդ։ Այլ խոստումն զոր ունիս կատարէ. և յիշոցաց պատրաստ կաց, և զաղօթս հասարակաց կատարեա, որ ելանես ի նեղութենէդ, և ի մեծ մարդու մի բարի լինի քեզ։

*

Եւ այսոցիկ ամենեցուն գիտողն՝ է Աստուած ճշմարիտ, զի մարդ ոչ է տեսող սրտից և ապագայից, այլ՝ Աստուած։ Ուստի զոր ինչ ասեն և գրեն իմաստասէրք, թէական կարծեօք են։ Վասնորոյ նմա մի այնոյն Աստուծոյ գիտողին գաղտնեաց և յայտնողին ծածկութից՝ փառք ի յամենայն արարածոց ի յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆԱՐԵԿ. Տպուած ընտիր թղթի վրայ մեծ տառերով. հաստատուն կազմով. Գինն է 2 ռուբլի։

ՓՆՋԻԿ ԵՐԳԱՐԱՆ. ազգային ընտիր երգերի, որոնք անմեռ երգեր են, ինչպէս անմեռ են սոյն երգերի անմահ հեղինակները։ Գինն է 40 կոպեկ։

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԶՐՈՅՑԱՐԱՆ. ուր պարունակւում է ընտիր վիճակախաղեր, կազմած ընտիր և իմաստալից ասացուածքներից։ Երազահան հարուստ։ Ունի և Յաւելուած, որ պարունակում է ԷՓԻՄԵՐՏԷԻ կարևոր մասերը. մարմնախաղաց, վիճակախաղ և այլն և այլն. Նաև Յովասափի սրտաշարժ պատմութիւնն։ Գինն է 1 ռուբլի 30 կոպ։ Երկու մասն ի միասին։

Սոյն գրքերի պահեստը գտնւում է հրատարակչի մօտ և Կեդրոնական գրավաճառանոցը Տփխիսում։

Հրատարակչի հասցէն՝ Тифлисъ, Мадатовская № 7 домъ Ростома Мартиросянца

АРУТЮНУ ХРИСТАФОРОВУ

15072 ար1
Арм
2-6274

ՀՀ Ազգային գրադարան
NL0822105

11
20521